



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ



«ԹԻՄ» ԳԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ



ԲԱՑ ԳԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԶԼՄ-ՆԵՐԻ ՑԱՆՑԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ԲԱՑ ԳԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՄԱՍՆԱԳՅՈՒՂ

ԳԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ԳՂ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

2007

Երեւան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| Հայաստանը ԱԺ 2007 թվականի ընտրությունների նախօրեին | 3 |
| Տեղեկանք ընտրությունների ժամանակաշրջանում ՁԼՄ-ների գործունեությունը կարգավորող օրենսդրության վերաբերյալ | 10 |
| 2007 թվականի խորհրդարանական ընտրություններին մասնակցած կուսակցությունները/դաշինքը | 15 |
| Ընդհանուր տեղեկություններ Հայաստանի ՁԼՄ-ներում ՀՀ Ազգային ժողովի 2007 թվականի ընտրությունների լուսաբանման դիտարկման մասին | 19 |
| Հետազոտված լրատվամիջոցների ցանկը եւ համառոտ բնութագիրը | 28 |
| Հայաստանի ՁԼՄ-ներում ՀՀ 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների լուսաբանման դիտարկման հաշվետվություն | 29 |
| Աղյուսակներ եւ գրաֆիկներ | |
| Փետրվար - մարտ 2007 | 39 |
| Ապրիլ - մայիս 2007 | 49 |
| Տեղեկանք Հայաստանի հեռուստառադիոընկերությունների լրատվական ծրագրերում ՀՀ Ազգային ժողովի 2007 թվականի ընտրությունների ժամանակաշրջանում արձանագրված խախտումները լուսաբանելու վերաբերյալ | 72 |

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱԺ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՕՐԵԻՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում 2007-ի խորհրդարանական ընտրությունների կարեւորությունը պայմանավորված էր ներքին եւ արտաքին մի ամբողջ շարք գործոններով: Լիազորությունների վերաբաշխումը հոգուտ իշխանության օրենսդիր թեւի, 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով Հայաստանի վերափոխումը նախագահական հանրապետությունից նախագահական-խորհրդարանականի, ինքնին մեծացրել էին պատգամավորական մանդատի արժեքը:

Թերեւս, 1990 թվականից հետո առաջին անգամ, օրենսդիր մարմնի ընտրությունները որոշիչ դեր ունեին իշխանության ձեւավորման առումով: Այն ժամանակ՝ 17 տարի առաջ, որոշվում էր՝ կիսջողվի՞, արդյոք, կոմունիստներին պահել իշխանությունը, թե՞ նրանց կփոխարինեն հակակոմունիստական ուժերը, որոնք ԽՍՀՄ-ից դուրս գալու հարցն էին առաջ քաշում: Իսկ 2007 թվականի խորհրդարանական ընտրությունները նախորդում էին նախագահականին, որով պիտի ընտրվի պետության նոր ղեկավարը, եւ առաջինի ելքը շատ բանով կանխորոշում է նախագահի թեկնածուների ինչպես շրջանակը, այնպես էլ հնարավորությունները:

Բացի այս, Հայաստան պետությանը խիստ անհրաժեշտ էր ընտրությունների անցկացման առաջընթաց ցուցադրել: Միջազգային կազմակերպությունների փաստաթղթերում բազմիցս նշվել է, որ այս երկրում ոչ մի ընտրություն չի համապատասխանել ժողովրդավարական չափանիշներին, եւ դիտորդների հերթական բացասական գնահատականը ուժեղ հարված կլիներ նրա հեղինակությանը: Սա հատկապես կարեւոր էր ամերիկյան «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի ծրագրին եւ «Եվրոպական հարեւանության քաղաքականությանը» Հայաստանի մասնակցության պատճառով: Հերթական ոչ ժողովրդավարական ընտրությունները հղի էին «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի ֆինանսավորման դադարեցման եւ եվրաինտեգրացման գործընթացներին երկրի մասնակցության դանդաղեցման վտանգներով:

Ընտրությունները հետաքրքրություն էին ներկայացնում նաեւ Ղարաբաղյան հիմնախնդրի համատեքստում: Նախորդ տարիների փորձը վկայում էր, որ ընտրարշավների ժամանակաշրջանում ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի արդյունավետությունը նվազում է, եւ իրական արդյունքներ պետք չէ ակնկալել մինչեւ 2008 թվականի վերջը, երբ եւ Լեռնային Ղարաբաղում, եւ Հայաստանում, եւ Ադրբեջանում ավարտված կլինեն նախագահական ընտրությունները: Այսուհանդերձ, ժողովրդավարության ամրապնդմանն ուղղված յուրաքանչյուր քայլ դիտվում է իբրեւ կողմերի ձեռքին հաղթաթուղթ, եւ այս իմաստով միջազգային հանրության արձագանքն էլ ավելի է կարեւորվում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ

Քաղաքական, տնտեսական եւ սոցիալական ոլորտներում երկրի վերջին տարիների զարգացումը ինչպես հայկական իշխանությունների, այնպես էլ մի շարք միջազգային կառույցների դրական գնահատականներին է արժանացել: Մասնավորապես, իբրեւ ժողովրդավարության ճանապարհին կարեւոր քայլ գնահատվեց ՀՀ Սահմանադրության բարեփոխումը: Վերջին տարիների տնտեսական երկնիշ աճը դիտարկվում էր իբրեւ կայունության, կառավարության հաջողված քաղաքականության ու արդյունավետ ղեկավարման արգասիք:

Այսուհանդերձ, որոշ ուղղություններով առաջընթացը միանշանակ բնույթ չունեւ, իսկ թերություններն ու բացթողումները դիպչում էին բնակչության լայն խավերի շահերին եւ ազդում էին ինչպես հասարակայնության, այնպես էլ քաղաքական ուժերի մեծամասնության նախընտրական տրամադրությունների վրա: Եվրոպայի խորհրդի առջեւ ստանձնած պարտավորությունների հետեւողաբար կատարման արձանագրումը զուգորդվում է հայկական հասարակության մեջ ՀՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին 2005 թվականի նոյեմբերին անցկացված հանրաքվեի պաշտոնական արդյունքների նկատմամբ անվստահության բարձր աստիճանով ու միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների կողմից Հայաստանում ժողովրդավարության եւ մարդու իրավունքների վիճակի քննադատական գնահատականներով:

Երկրում տնտեսական աճի բարձր ցուցանիշներին, աղքատության կրճատմանն ու ազգային դրամի արժեվորմանը մի շարք անկախ փորձագետներ կասկածանքով են վերաբերվում: Ներքին սպառողական շուկայում որոշ աշխուժացում ապահովող ֆինանսական միջոցների ներհոսքի հիմնական աղբյուրը բարեգործությունն ու հայկական սփյուռքի մասնավոր տրանսֆերտներն են: Տնտեսության աճն ապահովվում է կայուն զարգացում չերաշխավորող ճյուղերի (ամենից առաջ՝ շինարարության) հաշվին: Բյուջետային ոլորտի աշխատողների աշխատավարձերի եւ խոշոր ձեռնարկատերերի եկամուտների բարձրացումը ուղեկցվում է գների սրընթաց աճով եւ քաղաքացիների սոցիալապես առավել անապահով մասի իրական գնողունակության անկմամբ: Հայկական դրամի փոխարժեքի ամրապնդումը համապատասխանում է ներմուծողների շահերին, սակայն լուրջ խնդիրներ է առաջացնում հայ արտադրողների համար, ավելացնում է արտաքին առևտրական դեֆիցիտը, կրճատում է բնակչության՝ նշանակալի մասի՝ արտասահմանյան հարազատների օգնության հաշվին գոյատևողների եւ արտագնա աշխատանքի մեկնածուների բազմահազարանոց բանակի ընտանիքների իրական եկամուտները:

Երկրի տնտեսական հեռանկարները նշանակալի չափով կախված են նրա մասնակի շրջափակման (որն արտահայտվում է Ադրբեջանի՝ Հայաստանի հետ համագործակցելու ցանկացած ձեւի ու տարածաշրջանային էներգետիկ եւ տրանսպորտային նախագծերին վերջինիս մասնակցության մերժումով, ինչպես նաեւ՝ Անկարայի նախաձեռնությամբ հայ-թուրքական սահմանի փակ լինելով) հաղթահարմամբ:

Երկրի հիմնական խնդիրների թվին են դասվում կոռուպցիան, շրջակա միջավայրի պահպանությունը, ժողովրդագրական իրավիճակը եւ արտագաղթը: Չնայած հեղինակավոր միջազգային կառույցների աջակցությամբ իրականացվող լայնամասշտաբ հակակոռուպցիոն ծրագրի, բնակչության ընկալման մեջ կոռուպցիան, լավագույն դեպքում, չի կրճատվում: Դրա գլխավոր գործոններից մեկը պետական կառույցների եւ խոշոր բիզնեսի սերտաճումն է: Փորձագետները խոսում են «պետության զավթում» երեւույթի ռեալ վտանգի մասին: Առկա են խոշոր սեփականության համակենտրոնացման եւ շուկայի սեզմենտների մենաշնորհացման (ինչին ակտիվորեն մասնակցում են բարձրաստիճան պաշտոնյաներ) ցայտուն նախանշանները:

Բնապահպանները լրջորեն մտահոգված են անապատացմամբ, որ առաջացել է 90-ականների էներգետիկ ճգնաժամի հաղթահարումից հետո էլ շարունակվող անտառահատումներով եւ կանաչապատ տարածքների կտրուկ կրճատմամբ: Սոցիալական անկայուն իրավիճակը պայմանավորում է ծնելիության ցածր մակարդակ եւ բնակչության աշխատունակ մասի արտահոսք: Հայաստանի յուրաքանչյուր աշխատողի բաժին է ընկնում ավելի քան մեկ թոշակառու, եւ այդ ցուցանիշը աճելու միտում ունի:

2003 եւ 2007 թվականների խորհրդարանական ընտրությունների միջեւ ընկած ժամանակաշրջանում մարդու իրավունքների բնագավառում գլխավոր խնդիրներից մեկը դարձավ «պետական կարիքների համար» քաղաքացիների սեփականության օտարումը, որ արտահայտվեց մարդկանց իրենց տներից, հաճախ ոչ համարժեք փոխհատուցմամբ վտարումով, քանդելու եւ հետագա կառուցապատման համար տարածքների (հիմնականում Երեւանի կենտրոնում) աճուրդով վաճառքով: Չնայած Սահմանադրական դատարանի որոշմանը, որով 2006 թվականի սկզբին նման գործողություններն իբրեւ քաղաքացիների սահմանադրական իրավունքների խախտումներ համարվեցին, իրավիճակը քիչ բանով է փոխվել, եւ խորհրդարանի կողմից պետությանը համապատասխան լիազորություններով օժտող օրենքի ընդունումից հետո օտարման պրակտիկան շարունակվում է՝ արդեն «օրինական հիմունքներով»:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆԱԽԸՆՏՐՈՒԿԱՆ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնական պայքարը, դատելով սոցիոլոգիական հարցումների արդյունքներից եւ քաղաքագետների կանխատեսումներից, պետք է ծավալվեր իշխող կոալիցիայի առանցքը կազմող Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) եւ նորաստեղծ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության (ԲՀԿ) միջեւ: Խորհրդարանում ամենամեծ խմբակցությունն ունեցող ՀՀԿ-ի քաղաքական ներուժը էլ ավելի մեծացավ, երբ 2006 թվականի հունիսին նրան անդամակցեց պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, որը համարվում է երկրի նախագահի պաշտոնի ամենահավանական թեկնածուներից մեկը: Գործնականում նախարարի հետ միաժամանակ ՀՀԿ-ին անդամագրվեցին մի մեծ խումբ խոշոր գործարարներ, որոնցից շատերը նաեւ ընդգրկվեցին կուսակցության ղեկավար մարմնում: 2007 թվականի մարտին՝ ՀՀ վարչապետ եւ հանրապետականների առաջնորդ Անդրանիկ

Մարգարյանի մահից հետո, Սերժ Սարգսյանը զբաղեցրեց նրա տեղը կառավարության ղեկավարի պաշտոնում եւ իր ձեռքում կենտրոնացրեց կուսակցության ղեկավարությունը:

ԲՀԿ-ն իր քաղաքական նկրտումների մասին հայտարարեց 2005-ի վերջին - 2006-ի սկզբին: Նրա առաջնորդը՝ Հայաստանի խոշոր գործարարներից մեկը՝ Գագիկ Ծառուկյանը, արդեն 2006 թվականի կեսերից ակտիվ բարեգործական ակցիաներ նախաձեռնեց, ինչը նշանակալիորեն բարձրացրեց կուսակցության վարկանիշը եւ նպաստեց նրա շարքերի զանգվածային մեծացմանը: Իր իսկ՝ ԲՀԿ-ի տվյալներով, նախընտրական տարվա վերջին այն անդամների թվով գերազանցեց հայկական բոլոր մյուս կուսակցություններին: ԲՀԿ-ի ապագա կուսակցական ցուցակը երկար ժամանակ գլխավոր քաղաքական ինտրիգներից մեկն էր, դրա մասին բազմաթիվ խոսակցություններ եւ սակավ կոնկրետ տեղեկություններ կային: Միայն 2007-ի սկզբին ձեւավորվեց «թիմի հիմնակազմը»՝ լրացնելով կուսակցության դիմագիծը, որ մինչ այդ նույնացվում էր բացառապես Գագիկ Ծառուկյանի հետ: Այդ հիմնակազմում բարձրաստիճան պետական պաշտոնյաների, այդ թվում՝ նախագահի աշխատակազմի անդամների, առկայությունը վկայում էր կուսակցության իշխանամետ դիրքորոշման մասին, ինչը, սակայն, չէր բացառում խորհրդարանում տեղեր գրավելու համար ԲՀԿ-ի հետ նրա իրական մրցակցությունը:

2006 թվականի աղմկահարույց քաղաքական իրադարձություններից մեկը «Օրինաց երկիր» կուսակցության (ՕԵԿ, որի առաջնորդ Արթուր Բաղդասարյանը զբաղեցնում էր Ազգային ժողովի նախագահի պաշտոնը) կառավարող կոալիցիայից դուրս գալն էր: Սրա պատճառներից ամենից հաճախ հիշատակվում էր արտաքին քաղաքական կողմնորոշումների հարցում կոալիցիայի ներսում եղած հակասությունը, սակայն, ըստ ամենայնի, պակաս դեր չէին խաղացել նաեւ կուսակցության ու նրա առաջնորդի քաղաքական ապագայի շուրջ ՕԵԿ-ի եւ գործընկերների տարածայնությունները: ՕԵԿ-ի ընդդիմություն դառնալն ազդեց ինչպես հենց կուսակցության (նրա շարքերը լքեցին մի խումբ գործարար պատգամավորներ, որ կարելու դեր ունեին կուսակցությունը միջոցներով ապահովելու գործում), այնպես էլ՝ ընդդիմության ճամբարի պատկերի վրա. վերջինում բազմանդամ եւ ամբիցիոզ քաղաքական ուժի հայտնվելը էականորեն փոխեց ողջ քաղաքական դաշտի կառուցվածքը: Կոալիցիայում ՕԵԿ-ի տեղը զբաղեցրեց Միավորված աշխատանքային կուսակցությունը (ՄԱԿ), որը մինչ այդ էլ սերտորեն համագործակցում էր իշխանության հետ:

Երրորդ կոալիցիոն կուսակցությունը՝ Հայ յեղափոխական դաշնակցությունը (ՀԶԴ), չնայած իշխանության մեջ լինելուն, որոշ կարեւոր ներքաղաքական հարցերում վերջին տարիներին բազմիցս հանդես է եկել այլընտրանքային դիրքերից: Սասնավորապես, նա ուներ կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի վերաբերյալ իր դիրքորոշումները եւ հետեւողականորեն պնդում էր երկքաղաքացիության ընդունման հարցը, ինչի մասին օրենքն ընդունվեց ընտրություններից ոչ շատ առաջ:

2003-ից 2007 թվականները լուրջ փորձության տարիներ դարձան խորհրդարանական ընդդիմության համար: Մի ամբողջ շարք սկզբունքային, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծին վերաբերող, հարցերում ձախողվումը, նրան մղեցին բոյկոտելու խորհրդարանական նստաշրջանների նիստերի մեծ մասը: Դա էականորեն թուլացրեց խոշորագույն ընդդիմադիր՝ «Արդարություն» դաշինքը կազմող կուսակցությունների եւ «Ազգային միաբանություն» կուսակցության դիրքերը: Ազգային ժողովում ներկայացված ընդդիմադիր կուսակցությունների եւ գործիչների ներքին հակասությունները, նրանց վարկաբեկումն իշխանամետ եւ նրանցից հիասթափությունն անկախ լրատվամիջոցների կողմից, ֆինանսավորման հիմնական աղբյուրների կորուստը էլ ավելի բարդացրին ընդդիմության վիճակը: Գործնականում առ ոչինչ դարձան նաեւ 2007 թվականի ընտրություններում որեւէ արդյունավետ ձեւաչափով համագործակցելու՝ հիմնական ընդդիմադիր ուժերի երկարատեւ բանակցությունները: Համամասնական ընտրակարգով ընտրվելու համար 5 տոկոսանոց արգելքի առկայությունը եւ 23 կուսակցությունների/դաշինքի մասնակցությունը ակնհայտորեն նշանակում էր ընդդիմության ընտրազանգվածի փոշիացում եւ որոշակի մասի կորուստ:

Ի հետեւանք՝ մի շարք կուսակցություններ ընդհանրապես հրաժարվեցին պայքարից: Ազգային ժողովրդավարական միությունը (ԱԺՄ) եւ նրա ղեկավարը՝ վերջին քսանամյակի Հայաստանի փորձառու եւ հեղինակավոր քաղաքական գործիչներից մեկը՝ Վազգեն Մանուկյանը, ինչպես նաեւ Հայաստանի անկախության պայքարի վետերան եւ խորհրդային շրջանի քաղբանտարկյալ Պարույր Հայրիկյանը հայտարարեցին իրենց քաղաքական պլանները մինչեւ 2008 թվականի նախագահական ընտրությունները հետաձգելու մասին: Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ), որ իշխող կուսակցություն էր 1990-1998 թվականներին, դուրս եկավ քաղաքական պայքարից քվեարկությունից 10 օր առաջ: Հերթական անգամ չարդարացան ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի մեծ քաղաքականություն վերադարձի կողմնակիցների հույսերը:

Միաժամանակ, ընտրություններից առաջ լուրջ մտադրություններով ասպարեզ ելավ անկախ Հայաստանի առաջին (1991 - 1992 թ.թ.) արտգործնախարար ԲաժՖի Հովհաննիսյանի գլխավորած «Ժառանգություն» կուսակցությունը: Նոր եռանդուն ընդդիմության դերը ստանձնելու հայտ ներկայացրեց իշխանություններին արմատական դիրքերից քննադատող «Իմպիչմենտ» դաշինքը: Ընտրություններից քիչ առաջ ժամանակների սովորից դուրս եկավ 2003-ի նախագահական ընտրություններում չորրորդ արդյունքը ցույց տված Արամ Կարապետյանի գլխավորած «Նոր ժամանակներ» կուսակցությունը: «Իմպիչմենտը», «Նոր ժամանակները» եւ «Հանրապետություն» կուսակցությունը (խորհրդարանական «Արդարություն» խմբակցությունը կազմող երկու հիմնական ուժերից մեկը) ակտիվորեն համագործակցում էին նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում, սակայն ընտրությունների գնացին առանձին-առանձին:

Թեկնածու կուսակցությունների շարքում առանձնանում էր ժողովրդական կուսակցությունը: Նրա առաջնորդը՝ «ԱԼՄ» հեռուստաընկերության սեփականատեր Տիգրան Կարապետյանը, որ Ռուսաստանում գործարարությամբ նշանակալի միջոցներ էր վաստակել, հույսը դրել էր բարեգործության եւ պոպուլիստական բնույթի երկարատեւ հեռուստածրագրերի վրա: Ընտրություններից քիչ առաջ ժողովրդական կուսակցության ցուցակին միացան ընդդիմության շարքերն անցնելուց հետո ՕԵԿ-ը լքած մի խումբ գործարարներ: Սա ժողովրդական կուսակցության նկատմամբ իշխանությունների բարեհաճ վերաբերմունքի բավարար ինդիկատոր էր:

ՆՈՐԱՍՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի քաղաքական համակարգում խորհրդարանի դերի բարձրացումից բացի 2007-ի ընտրությունները նշանավորվեցին նաեւ այլ սկզբունքային նորամուծություններով: Մասնավորապես, ՀՀ Ընտրական օրենսգրքով նախատեսվեց խորհրդարանում համամասնական (կուսակցական) եւ մեծամասնական տեղերի հարաբերակցության փոփոխություն՝ 90:41, նախկին 75:56-ի փոխարեն: Համամասնական ընտրակարգը Հայաստանում ներդրվել է 1995 թվականից, եւ այդ ժամանակվանից աստիճանաբար տեղի է ունենում համամասնական տեղերի ավելացում: Այս ընտրություններից առաջ ընդդիմությունը պահանջում էր 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգ, իսկ իշխանամետ ուժերի նշանակալի մասը՝ ընդհակառակը, շահագրգռված էր համամասնական եւ մեծամասնական տեղերի վերաբաշխմամբ: Դա բացատրվում էր վարչա-ֆինանսական հնարավորությունների մեծ դերով հենց միամանդատ տարածքներում, որտեղ իշխանամետ կուսակցությունների բազմաճյուղյա գործարար թեւի ներկայացուցիչները անվիճելի առավելություն ունեին: Իրենց հերթին՝ բիզնեսի հետ այդքան սերտ կապվածություն չունեցող կուսակցությունները ձգտում էին օգտագործել զուտ քաղաքական մրցակցությունում իրենց առավելությունը:

Ի վերջո փոխհամաձայնություն ձեռք բերվեց: Սակայն համամասնական տեղերի ավելացման միտումը քաղաքական ազդեցության լծակների տիրանալով շահագրգռված գործարար վերնախավին մղում է կուսակցություններ ստեղծել կամ ներգրավվել արդեն գոյություն ունեցողներում: ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՄԱԿ-ի եւ ժողովրդական կուսակցության օրինակներն այդ գործընթացի դրսևորում են:

Ընտրական գործընթացների վրա էական ազդեցություն ունեցավ Հայաստանում երկքաղաքացիության օրենսդրական ամրագրումը: Այս հարցի շուրջ բանավեճերը երկրում ընթանում էին անկախության վերականգնման օրվանից: 1998 թվականին իշխանության գալով՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը երկքաղաքացիություն մտցնելը հայտարարեց իր քաղաքական պլատֆորմի հիմնական կետերից մեկը: Եվ 2007 թվականը ընդդիմախոսների դիմադրությունը հաղթահարելու ու իր խոստումը կատարելու վերջին հնարավորությունն էր: Երկքաղաքացիության հակառակորդների հիմնական փաստարկը Հայաստանի բուն բնակչությանն առնվազն երկու անգամ գերազանցող Սփյուռքի առկայությունն էր: Հետեւաբար՝ արտասահմանցի հայերին ՀՀ քաղաքացիություն ստանալու իրավունք շնորհելը նշանակում է, որ վերջիններս կարող են վճռական դեր ունենալ քաղաքական գործընթացներում: Այնինչ, այդ ինստիտուտի հակառակորդների կարծիքով՝ իշխանությունը Հայաստանում պետք է ձեւավորվի այնտեղ ապրող մարդկանց կողմից:

Շարունակական բանավեճերի արդյունքը եղավ փոխզիջումը, ըստ որի ընտրություններում քվեարկություն կարող էր կատարվել միայն Հայաստանի տարածքում: Սրանով սահմանափակվում էր սփյուռքի հայերի հնարավոր ազդեցությունը ՀՀ-ում իշխանության ձեւավորման վրա, եթե անգամ նրանք Հայաստանի քաղաքացիություն ստանային: Սակայն, մյուս կողմից, այդ դրույթը արտասահմանում ապրող կամ ժամանակավոր այնտեղ գտնվող ՀՀ քաղաքացիներին (տարբեր գնահատումներով՝ մինչեւ մեկ միլիոն մարդու, այսինքն՝ բնակչության մոտ 1/3-ին) զրկում էր

քվեարկելու իրավունքից: 2007 թվականին առաջին անգամ ընտրատեղամասեր չբացվեցին ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում, ինչը քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների պահպանման տեսակետից բազմաթիվ քննադատությունների արժանացավ:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՁԼՄ-ՆԵՐՈՒՄ

«Հյուսիսային Ռայթս Ուոչ» (Human Rights Watch) միջազգային իրավապաշտպան կազմակերպության 2006 թվականին մարդու իրավունքների մասին 2007 թվականի հունվարի 11-ին հրապարակված տարեկան զեկույցի Հայաստանին վերաբերող բաժնում խոսվում էր նաեւ երկրում ՁԼՄ-ների իրավիճակի մասին: «Հյուսիսային Ռայթս Ուոչ»-ի կարծիքով «Հայաստանի իշխանությունները մարդու իրավունքների լուրջ խախտումների դեպքերը կանխելու բավարար ջանքեր չեն գործադրել», իսկ «ՁԼՄ-ների ազատությունը 2006 թվականին դարձյալ վտանգի տակ էր»: «Ավելի շատ լրագրողներ են ենթարկվել հետապնդումների եւ հարձակումների, հեռարձակվող ՁԼՄ-ներում անբավարար էր բազմակարծությունը, եւ նրանք մնում էին առավելապես իշխանամետ»:

ՀՀ նախագահը, նշվում էր զեկույցում, նշանակում է հեռարձակվող ՁԼՄ-ների գործունեությունը կարգավորող մարմինների բոլոր անդամներին, այդ թվում եւ՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի, որը պատասխանատու է Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ավիզի (Հ1) քաղաքականության եւ բովանդակության համար: Գտնվելով իշխանությունների հսկողության տակ՝ Հ1-ը «նորությունների անաչառ եւ բազմազան լուսաբանում ապահովելու բավարար անկախություն չունի»:

Ձեկույցում բերված էր նաեւ Գիտությունների ազգային ակադեմիային պատկանող շենքից «Ա1+» հեռուստաընկերությանը վտարելու պատմությունը: 2002 թվականին եթերից զրկված «Ա1+»-ը այդ ժամանակվանից հեռարձակման լիցենզավորման 12 մրցույթի է մասնակցել, ներառյալ 2006-ի մարտի ռադիոմրցույթը, բայց միշտ՝ ապարդյուն, հիշեցրել է «Հյուսիսային Ռայթս Ուոչ»-ը: 2005 թվականին տանուլ տալով ընդդեմ Գիտությունների ազգային ակադեմիայի դատավարությունը, հեռուստաընկերությունը 2006 թվականին տեղափոխվեց կառավարության կողմից հատկացված տարածք, որում այդ պահին չկար ոչ էլեկտրականություն, ոչ հեռախոսակապ, ինչի հետեւանքով «Ա1+»-ը, նրա «Այբ-Ֆե» շաբաթաթերթը եւ ինտերնետային կայքը ստիպված էին մի քանի շաբաթ դադարեցնել աշխատանքը:

Իբրեւ լրագրողներին ահաբեկելու օրինակներ «Հյուսիսային Ռայթս Ուոչ»-ը նշում էր «Լոռի» հեռուստաընկերության տնօրեն Նարինե Ավետիսյանի հետ փետրվարի 23-ին եւ մարտի 15-ի լույս 16-ի գիշերը կատարված միջադեպերը: Առաջին դեպքում նրան սպառնացել էր տեղական երթուղային տաքսիների գծատերը, իսկ երկրորդում՝ լրագրողին պատկանող ավտոմեքենան քարկոծվել էր, ընդ որում՝ մեղավորներն այդպես էլ չեն հայտնաբերվել: «Հյուսիսային Ռայթս Ուոչ»-ը հիշատակել է նաեւ Նուբարաշեն համայնքի ղեկավար Սիեր Հովհաննիսյանի հարազատների ու ենթակաների կողմից հետապնդումների ենթարկված ազատ լրագրող Գագիկ Շամշյանի հետ հուլիսի 12-ին կատարված միջադեպը եւ մի քանի քաղաքացիների հայտարարության հիման վրա օգոստոսի 3-ին նրա դեմ հարուցված քրեական գործը՝ վիրավորանքի, խարդախության եւ շորթման մեղադրանքներով: Ձեկույցում բերված դեպքերից մեկն էլ սեպտեմբերի 6-ին «Իրավունք» թերթի խմբագիր Հովհաննես Գալաշյանի վրա հարձակումն էր, որը, ըստ վերջինիս կարծիքի՝ կապված էր իշխանություններին քննադատող իր հոդվածների հետ:

«Ժամանակ երեւան» թերթի գլխավոր խմբագիր Արման Բաբաջանյանի գործով սեպտեմբերի 8-ին կայացված դատավճիռը (4 տարի ազատազրկում պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու նպատակով փաստաթղթեր կեղծելու համար) «Հյուսիսային Ռայթս Ուոչ»-ի զեկույցում գնահատվել է «անողորմ», «հնարավոր է՝ իբրեւ լրագրողի կողմից իշխանություններին անընդհատ քննադատելու վրեժխնդրություն» (հետագայում Վերաքննիչ դատարանը մի փոքր մեղմացրեց Բաբաջանյանի դատավճիռը՝ ազատազրկման ժամկետը կրճատելով կես տարով - *ժամ. խմբ.*):

«Հյուսիսային Ռայթս Ուոչ»-ի նման Հայաստանի ՁԼՄ-ների նույն խնդիրներն են իրենց զեկույցներում հիմնականում նշել նաեւ ԱՄՆ Պետական դեպարտամենտը, Մամուլի միջազգային ինստիտուտը (IPI) եւ Լրագրողների պաշտպանության կոմիտեն (CPJ):

Ըստ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2007 թվականի հունվարի 23-ի բանաձեւի՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունները հնարավորություն են տալիս ապահովելու հեռարձակվող լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող մարմինների ավելի շատ անկախություն, սակայն

հետագայում հեռարձակման ոլորտի օրինագծերի փաթեթը կառավարության կողմից մշակվեց առանց ՁԼՄ-ների եւ ԵԽ ներկայացուցիչների հետ նախնական քննարկումների եւ սուր քննադատության ենթարկվեց ամենից առաջ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ձեւավորման եւ նրա անդամների նշանակման հարցով: Այդ առթիվ Վեհաժողովը կոչ արեց երկրի իշխանություններին մինչեւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելը խորհրդակցություններ անցկացնել եւ փորձագետների հետ եւ հաշվի առնել նրանց խորհուրդները: Վեհաժողովն իշխանություններին կոչ արեց նաեւ ապահովել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամների բաց ու թափանցիկ նշանակում՝ Վեներտիկի հանձնաժողովի հանձնարարականներին համապատասխան (այսուհանդերձ հետագայում բանաձեւի այս դրույթներն այդպես էլ չկատարվեցին. հեռարձակման օրենսդրության մեջ փոփոխություններն ընդունվեցին հակառակ այս կոչերի - *ժան. խմբ.*):

ԵԽԽՎ բանաձեւում հատուկ ուշադրություն է դարձվում «խորհրդարանական ընտրություններից մի քանի ամիս առաջ հեռարձակվող ՁԼՄ-ներում բազմակարծության ապահովմանը», քանի որ «բոլոր քաղաքական կուսակցությունների համար դրանց հավասար մատչելիությունը ազատ եւ արդարացի ընտրությունների բացարձակ նախապայման է»:

2007 թվականի փետրվարի 15-ին ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) հրապարակեց Հայաստան կատարած այցելության արդյունքների վերաբերյալ իր առաքելության հաշվետվությունը: Այցի նպատակն էր գնահատել 2007 թվականի մայիսի 12-ին նախատեսված խորհրդարանական ընտրություններին ԵԱՀԿ առջեւ ստանձնած պարտավորություններին համապատասխան երկրի պատրաստվածության պայմաններն ու մակարդակը, ինչպես նաեւ՝ մշակել առաջարկություններ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության ձեւավորման վերաբերյալ: Հաշվետվության մեջ, մասնավորապես, նշված էր. «Չնայած պաշտոնական ընտրարշավի ժամանակաշրջանում օրենքը երաշխավորում է հանրային եւ մասնավոր լրատվամիջոցների հավասար մատչելիություն, այդ թվում՝ անվճար եթերաժամանակ հանրային հեռուստատեսությամբ եւ հանրային ռադիոյով, ընդդիմությունը հայտարարում է ներկայումս՝ մինչ ընտրարշավը, ՁԼՄ-ների խիստ սահմանափակ մատչելիության մասին: Տեղեկացվում է, որ դա արդյունք է վարչական արգելքների եւ ինքնագրաքննության: Ավելին, Առաքելության շատ գրուցակիցներ մտահոգություն հայտնեցին, որ ՁԼՄ-ների մատչելիությունը անհավասար կլինի նաեւ պաշտոնական ընտրարշավի ժամանակաշրջանում»:

Նախորդ ընտրությունների ժամանակ, արձանագրված է հաշվետվության մեջ, ՁԼՄ-ները, հատկապես մասնավորները, քննադատվում էին, որ թեկնածուների համար հավասար մատչելիություն չէին ապահովել եւ ցուցաբերել էին կողմնակալություն: Նշելով 2003-ի ընտրությունների ժամանակ հանրային եւ մասնավոր հեռուստաընկերություններում քաղաքական գովազդի բարձր գները, Առաքելությունը մեջ էր բերել իր շատ գրուցակիցների կարծիքը, թե նույնը կարող է կրկնվել նաեւ գալիք ընտրություններում (նախընտրական քարոզչության ժամանակ քաղաքական գովազդի սակագները առաջատար հեռուստաընկերություններում (մեկ րոպե՝ 80-130 հազար դրամ կամ \$230-270), որ գերազանցում էին առեւտրային գովազդի գները, հայտարարվեցին փետրվարի սկզբին եւ հաստատեցին վերոհիշյալ մտահոգությունները - *ժան.խմբ.*):

Հաշվետվության լրատվամիջոցների ոլորտին վերաբերող բաժնում նշվում էր, որ «հեռուստատեսությունը մնում է տեղեկատվության հիմնական աղբյուրը եւ կարող է բնութագրվել իբրեւ առավելապես իշխանամետ, չնայած պետական հեռուստատեսության ձեւական վերափոխմանը հանրայինի եւ բազմաթիվ մասնավոր հեռուստաալիքների առկայությանը, որոնցից շատերը դեֆակտո կապված են քաղաքական կուսակցությունների հետ»: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Առաքելության կարծիքով «տպագիր հրատարակությունները ավելի պլուրալիստական են եւ նրանց լրատվությունը բազմազան է ու քննադատական, թեպետ տպաքանակները սահմանափակ են»:

ԵԽԽՎ վերոհիշյալ բանաձեւը կիսում է Առաքելության վերջին գնահատականը, եւ, բացի այդ, բանաձեւում գոհունակություն է հայտնվում, որ «մի քանի տարի շարունակ լրագրողների դեմ զրպարտության մեղադրանքով քրեական գործեր չեն հարուցվել» եւ՝ «2004 թվականին Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելուց հետո զրպարտությունը ազատագրվեց պատժվում է միայն արարքը կրկնվելու դեպքում»: Միաժամանակ, Բանաձեւում ընդգծվում էր զրպարտությունն ապաքրեականացնելու եւ Քրեական օրենսգրքի 318-րդ՝ «Իշխանության ներկայացուցիչն վիրավորելը» հոդվածը վերացնելու անհրաժեշտությունը:

2007 թվականի մայիսի 1-ին «Ֆրիդոմ հաուզ» միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը հրապարակեց աշխարհում մամուլի ազատության մասին 2006 թվականի իր ամենամյա զեկույցը: Հայկական ՁԼՄ-ները հինգերորդ տարին անընդմեջ (սկսած 2002 թվականից) այդ կազմակերպության կողմից ճանաչվում են ոչ ազատ: Մինչ այդ նրանք գնահատվում էին «մասնակիորեն ազատ»:

2007 թվականի խորհրդարանական ընտրությունների նախօրյակին Հայաստանի լրագրողական հանրության ներկայացուցիչները փորձեցին երկրում ՁԼՄ-ների ինքնակարգավորման մարմին ստեղծելուն ուղղված քայլ անել: 2007 թվականի մարտի 10-ին Երեւանի մամուլի ակումբում տեղի ունեցավ համատեղ մասնագիտական էթիկայի կանոններ մշակելու եւ հետագայում իրենց ամենօրյա գործունեության մեջ դրանց հետեւելու՝ ԵՄԱ նախաձեռնությանն աջակցող ՁԼՄ-ների եւ լրագրողական միավորումների ղեկավարների խորհրդակցություն: Խորհրդակցության ժամանակ ընդունվեց եւ 18 ՁԼՄ-ների ներկայացուցիչների կողմից ստորագրվեց Վարքականոնը: Ստորագրողները նաեւ պարտավորվեցին առաջնորդվել Վարքականոնին կից ընդունված ընտրությունների եւ հանրաքվեների լուսաբանման սկզբունքների վերաբերյալ հռչակագրով:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԶԼՄ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախընտրական քարոզչությանը եւ ՋԼՄ-ներում ընտրությունների լուսաբանմանն են վերաբերում 33 ընտրական օրենսգրքի 4-րդ (հոդվածներ 18-23), 16-րդ (հոդվածներ 79-81) եւ 22-րդ (հոդվածներ 112, 113) գլուխները:

Մեկ դրույթ կա նաեւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» 33 օրենքում՝ 11-րդ հոդվածը, որը սահմանում է.

«Հանրաքվեների եւ ընտրությունների քարոզչությանը նախորդող ու դրանց անցկացման ժամանակաշրջանում հեռուստառադիոհաղորդումները հեռարձակվում են ընտրությունների ու հանրաքվեների մասին օրենսդրությանը համապատասխան:

Նշված ժամանակահատվածում արգելվում է հեռուստառադիոընկերությունների կողմից հեռարձակել քաղաքական կամ այլ քարոզչական նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով: Նման հաղորդումների սփռումը հեռուստատեսությամբ պետք է ուղեկցվի էկրանի վրա պարտադիր անընդմեջ լուսագրով՝ «քաղաքական գովազդ» կամ «նախընտրական քարոզչական հաղորդում», իսկ ռադիոսփռման դեպքում՝ յուրաքանչյուր հաղորդման ընթացքում, ոչ պակաս, քան երեք անգամ, պետք է հիշեցվի դրա մասին:

Հանրաքվեների եւ ընտրությունների քարոզչության ժամանակաշրջանում հեռուստառադիոընկերությունները հրապարակավ հայտնում են վճարովի քաղաքական գովազդի ու քարոզչական այլ հաղորդումների՝ իրենց եթերաժամի արժեքը: Ցանկացողները վճարովի եթերաժամից օգտվում են պայմանագրային կարգով եւ հավասար պայմաններով:

Նախ՝ հոդվածի երկրորդ պարբերությունն ըստ էության արգելում է թաքնված քաղաքական գովազդը: Իսկ եթե իմաստը դա է, ապա՝ արգելքը չպետք է վերաբերեր միայն հանրաքվեների եւ ընտրությունների ժամանակաշրջանին: Թաքնված գովազդը՝ քաղաքական լինի, թե առեւտրային, պետք է արգելվի ընդհանրապես: Այլապես ստացվում է, որ ընտրություններից դուրս կարելի է «*հեռարձակել քաղաքական կամ այլ քարոզչական նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով:*» Այստեղից՝ առաջարկ. ցանկացած ժամանակ քարոզչական նյութերը պետք է տարածվեն միայն իբրեւ քաղաքական գովազդ եւ ունենան համապատասխան նշում:

Տարընթերցումների տեղիք տվող եւս մի ձեւակերպում. *«Հանրաքվեների եւ ընտրությունների քարոզչությանը նախորդող (...) ժամանակաշրջանում»:* Հոդվածի վերնագրի («Հեռուստառադիոհաղորդումները հանրաքվեների եւ ընտրությունների ժամանակաշրջանում») եւ հիշյալ ձեւակերպման համադրումը տրամաբանորեն հուշում է, որ *նախորդող ժամանակաշրջանը* վերաբերում է ընտրություններ հայտարարելու օրվանից մինչեւ նախընտրական քարոզչության (սկսվում է թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների գրանցման համար նախատեսված վերջին օրվան հաջորդող օրը) սկիզբն ընկած ժամանակաշրջանին: Սակայն ձեւակերպումը տարընթերցումների տեղիք է տալիս եւ պրակտիկայում հանգեցնում է հոդվածի ոչ արդյունավետ կիրառման: Նպատակահարմար կլիներ ավելի հստակեցնել քարոզչությանը նախորդող ժամանակաշրջանը՝ այն սահմանելով «*ընտրություններ հայտարարելու օրվանից մինչեւ նախընտրական քարոզչության սկիզբը:*» Ինչպես նաեւ՝ այդ ժամանակաշրջանում, ընտրությունների մասնակցող քաղաքական կուսակցությունների եւ թեկնածուների համար առավել հավասար պայմաններ ստեղծելու նպատակով, պետք է ընդհանրապես արգելել քարոզչական նյութերի (քաղաքական գովազդների) տարածումը:

ՀՀ Ընտրական օրենսգիրքը, ներկա խմբագրությամբ (2003 թվականի ընտրություններից հետո երեք անգամ՝ 2005-ի մայիսին, 2006-ի դեկտեմբերին եւ 2007-ի փետրվարին նրանում փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել), կուսակցությունների եւ մեծամասնական ընտրակարգով մասնակցող թեկնածուների նախընտրական քարոզչության եւ ընտրարշավների լուսաբանման հավասար պայմաններ ապահովելու առումով բավականին առաջադիմական է:

Նախընտրական քարոզչությանն են վերաբերում նաև ԸՕ-ի 18-23 հոդվածները: 18-րդ՝ «Նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները» հոդվածում ՁԼՍ-ներով քարոզչության առնչվում են հետևյալ դրույթները.

«3. Չանգվածային լրատվության միջոցներից օգտվելու համար թեկնածուներին եւ կուսակցություններին երաշխավորվում են հավասար պայմաններ՝ եթերաժամանակ կամ ծավալ, սակագին եւ այլն:

(...)

5. Նախընտրական քարոզչությունն սկսվում է թեկնածուների եւ կուսակցությունների գրանցման համար նախատեսված վերջին օրվան հաջորդող օրը եւ վերջանում է քվեարկությունից մեկ օր առաջ: Քվեարկության եւ նրան նախորդող օրը նախընտրական ցանկացած քարոզչություն արգելվում է: Տեղամասային կենտրոնում չգտնվող քարոզչական նյութերը քվեարկության օրը մնում են իրենց տեղերում:

6. Նախընտրական քարոզչությունը կարող է անցկացվել զանգվածային լրատվության միջոցներով, հրապարակային նախընտրական միջոցառումների ձեւով (նախընտրական ժողովներ եւ հանդիպումներ ընտրողների հետ, հրապարակային նախընտրական քննարկումներ, բանավեճեր, հանրահավաքներ, երթեր, ցույցեր կազմակերպելու միջոցով), տպագիր նյութեր հրապարակելու, ձայնագրված նկարահանված նյութեր տարածելու միջոցով»:

2005 թվականի մայիսի 19-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով համարյա ամբողջովին խմբագրվել է Օրենսգրքի 20-րդ՝ «Նախընտրական քարոզչությունը զանգվածային լրատվության միջոցներով» հոդվածը (այն ամնշան խմբագրումների է ենթարկվել նաև 2006 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով).

Ներկայացնենք այդ հոդվածն ամբողջությամբ.

«1. Հանրապետության Նախագահի թեկնածուները եւ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) ունեն հանրային ռադիոյով եւ հանրային հեռուստատեսության եթերաժամերից հավասար պայմաններով անվճար եւ վճարովի (այդ թվում՝ ուղիղ եթերով) օգտվելու իրավունք:

2. Հանրային ռադիոյից եւ հանրային հեռուստատեսությունից Հանրապետության Նախագահի թեկնածուներին եւ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) անվճար եթերաժամ տրամադրելու կարգը եւ ժամանակացույցը յուրաքանչյուր համապետական ընտրության համար սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ օրը:

3. Հանրային հեռուստաընկերությունը եւ հանրային ռադիոն պարտավոր են հավասար պայմաններ ապահովել ընտրություններին մասնակցող բոլոր թեկնածուների եւ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար:

Հանրային հեռուստաընկերությամբ եւ հանրային ռադիոյով հեռարձակվող լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների կողմից իրականացվող նախընտրական քարոզարշավի վերաբերյալ պետք է ներկայացվի անկողմնակալ եւ զնահատակամներից զերծ տեղեկատվություն՝ ապահովելով արդար ու հավասար պայմանների պահպանումը:

Ընտրություններին մասնակցող թեկնածուի, կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի կողմից միջոցառումներ չկազմակերպելը կամ այդ միջոցառումների մասին տեղեկատվության բացակայությունը հիմք չի կարող հանդիսանալ ընտրությունների մյուս մասնակիցների քարոզարշավի մասին զանգվածային լրատվության միջոցներով համապատասխան տեղեկություններ չհրապարակելու համար:

4. Համապետական ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 10 օր հետո, պետք է հրապարակվի հանրային ռադիոյով եւ հանրային հեռուստաընկերությամբ վճարովի եթերաժամի յուրաքանչյուր թույլի գինը: Նախընտրական քարոզչության փուլում այդ գինը չի կարող փոփոխվել:

5. Թեկնածուներն ու Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) իրավունք ունեն հավասար պայմաններով օգտվելու նաեւ (անկախ սեփականության ձեւից) այլ ռադիոընկերության եւ հեռուստաընկերության եթերաժամերից: Սույն հոդվածի 3-4-րդ կետերում սահմանված դրույթները հավասարապես տարածվում են նաեւ (անկախ սեփականության ձեւից) այլ ռադիոընկերությունների եւ հեռուստաընկերությունների վրա:

6. Ջանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչությունն իրականացվում է հրապարակային բանավեժերի, կլոր սեղանների, մամուլի ասուլիսների, հարցազույցների, քաղաքական գովազդի եւ օրենքով չարգելված այլ ձեւերով:

7. Արգելվում է նախընտրական քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները եւ հեռուստահաղորդումներն ընդմիջել ասպրանքների կամ ծառայությունների գովազդով:

8. Նախընտրական քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները եւ հեռուստահաղորդումները եթեր հեռարձակելիս ձայնագրվում եւ տեսագրվում են: Դրանք պահպանվում են առնվազն երեք ամիս:

9. Հեռուստաընկերությունների եւ ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը, որը նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում իրավասու է դիմելու դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավասու է խախտումների վերաբերյալ կարծիք ներկայացնելու դատարան:

10. Թերթերը եւ ամսագրերը, անկախ նրանց հիմնադիրներից, բացառությամբ կուսակցության կողմից հիմնադրված թերթերի եւ ամսագրերի, նախընտրական քարոզչական նյութեր հրապարակելիս պարտավոր են ապահովել հավասար պայմաններ»:

Այս տեսքով, ի տարբերություն մինչ 2005 թվականը գործած ԸՕ-ի, հոդվածն ավելի հստակ է կարգավորում հեռարձակվող լրատվամիջոցների գործունեությունը նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում. նախ՝ ավելացվել է անկողմնակալ եւ գնահատականներից զերծ տեղեկատվություն ապահովելու պահանջը, եւ երկրորդ՝ այն, ինչպես նաեւ ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 10 օր հետո վճարովի եթերաժամի յուրաքանչյուր թույլի գինը սահմանելը տարածվել է նաեւ մասնավոր հեռարձակողների վրա:

Օրենսգրքի անկողմնակալ եւ գնահատականներից զերծ տեղեկատվություն ապահովելու պահանջը, մասնավոր մասնավոր հեռուստառադիոընկերությունների վերաբերյալ այն տարածելը, կարող է գնահատվել իբրեւ միջամտություն խմբագրական անկախությանը, սակայն քանի դեռ հայաստանյան հեռարձակողները չունեն ընտրությունների լուսաբանման հստակ մշակված անկախ քաղաքականություն (վարքականոցներ) եւ կամովին պարտավորություն չեն վերցրել հաղորդել միայն ամաչառ տեղեկատվություն, ման դրույթի առկայությունը արդարացված է: Այսուհանդերձ, «անկողմնակալ եւ գնահատականներից զերծ» ձեւակերպումը իրավաբանորեն հստակեցված չէ, սուբյեկտիվ ընկալումով կարող է մեկնաբանվել: Այսինքն՝ դրանով չի լուծվում ինքնակարգավորման մեխանիզմների բացակայության խնդիրը:

Ինչ վերաբերում է հանրային եւ մասնավոր հեռարձակողների կողմից վճարովի եթերաժամի գները սահմանելուն, ապա եւ 2003 թվականի, եւ 2007 թվականի փորձը ցույց է տալիս, որ այդ գները անհամաչափ մեծ են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) եւ մեծամասնական թեկնածուների նախընտրական հիմնադրամների սահմանափակ ծավալների համեմատ (նախընտրական քարոզչության ընթացքում թեկնածուն իրավունք ունի ծախսել նվազագույն աշխատավարձի 5000-ապատիկը չգերազանցող գումար, այսինքն՝ 5 միլիոն դրամ, իսկ կուսակցությունը՝ նվազագույն աշխատավարձի 60000-ապատիկը չգերազանցող գումար, այսինքն՝ 60 միլիոն դրամ, այն դեպքում, երբ գները 2007 թվականին համապետական եւ մայրաքաղաքային հեռուստաընկերություններում համամասնական ընտրակարգով գրանցված կուսակցությունների/դաշինքի համար տատանվում էին 80 հազար դրամից մինչեւ 130 հազար դրամ՝

մեկ րոպեի համար): Այլ խոսքով՝ կուսակցություններն ու մեծամասնական թեկնածուները չեն կարող լիարժեքորեն օգտվել քարոզչության հնարավորությունից:

ԸՕ-ի փոփոխություններով ավելացել է նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում տպագիր ՁԼՄ-ների գործունեությունը կարգավորող դրույթ (հոդված 20, կետ 10): Այստեղ հստակեցված չէ «հավասար պայմաններ» հասկացությունը: Ի տարբերություն հեռարձակվողների, տպագիր լրատվամիջոցները հանրային ռեսուրս (հաճախականություն եւ կապուղի) չեն օգտագործում: Ուստի, խմբագրական լուսաբանումներում հավասարություն պահանջելն արդարացված չէ: Համաշխարհային ընդունված պրակտիկայում տպագիր ՁԼՄ-ների կողմից այս կամ այն կուսակցությանը սատարելու մասին հայտարարելը սահմանափակված չէ: Հետեւաբար, ավելի նպատակահարմար կլիներ օրենսդրորեն ամրագրել միայն հավասար պայմաններով (սակագնով) քաղաքական գովազդի համար թերթային տարածք տրամադրելու դրույթ:

Աժ ընտրություններում նախընտրական քարոզչությանը վերաբերող 113-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) օգտվում են Օրենսգրքի 81-րդ հոդվածով սահմանված՝ հանրապետության նախագահի թեկնածուների իրավունքներից.

Ստորել՝ 81-րդ հոդվածի որոշ դրույթներ.

«1. Հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության եթերաժամերից՝ Հանրապետության Նախագահի թեկնածուների անվճար եւ վճարովի նախընտրական քարոզչությունն իրականացվում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

(...)

3. Հանրապետության Նախագահի թեկնածուն իրավունք ունի անվճար օգտվել հանրային հեռուստատեսության եթերաժամից՝ ոչ ավելի, քան 60 րոպե, իսկ հանրային ռադիոյի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 120 րոպե:

4. Հանրապետության Նախագահի թեկնածուն կամ նրա համաձայնությամբ՝ նրան առաջադրած կուսակցությունը կամ նախաձեռնող խումբն իրավունք ունեն թեկնածուի նախընտրական հիմնադրամի հաշվին վճարովի հիմունքներով օգտվել հանրային հեռուստատեսության եթերաժամից՝ ոչ ավելի, քան 120 րոպե, իսկ հանրային ռադիոյի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 180 րոպե:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2007 թվականի մայիսի 12-ի ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին նախընտրական քարոզչության ժամանակ հանրային հեռուստատեսությամբ եւ հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրելու կարգին վերաբերող որոշումը ՀՀ ԿԸՀ-ը ընդունեց 2007 թվականի ապրիլի 8-ին: Դրանով սահմանվեցին նաեւ կուսակցությունների հանրային ռադիոյով եւ հանրային հեռուստատեսությամբ հանդես գալու հերթականությունն ըստ օրերի, օրական վճարովի եւ անվճար եթերաժամանակները, ինչպես նաեւ՝ օրվա այն ժամերը, երբ քարոզչական նյութերը պիտի եթեր հեռարձակվեին: Համաձայն որոշման՝ ՀՀ-ը պետք է ապահովեր նախընտրական քարոզչության հեռարձակումն հանրապետության ողջ տարածքում, Հանրային ռադիոն՝ 69.77 ՄՀց, 1395 ԿՀց հաճախություններով եւ FM հանրապետական ցանցով՝ միաժամանակ հանրային հեռարձակողները պետք է ապահովեին զուգահեռ հեռարձակում «Շիրակ» հանրային հեռուստառադիոյի եթերում: Եթե կուսակցությունը չէր օգտագործում գրաֆիկով իրեն տրամադրված եթերաժամը, փոխարենը այլ եթերաժամ չէր ստանում: Բացի այդ, կուսակցությանը տրամադրված եթերաժամը չէր կարող օգտագործել մեկ այլ կուսակցություն կամ դրա ներկայացուցիչը:

2006 թվականի դեկտեմբերի 22-ի օրենքով փոփոխություն է կատարվել նաեւ Օրենսգրքի 22-րդ՝ «Քաղաքացիների կամքի ազատ արտահայտման վրա ներգործության արգելումը» հոդվածի 1-ին կետում: Ըստ դրա՝

«Հանրային ռադիոյի եւ հանրային հեռուստատեսության, այլ ռադիոընկերությունների եւ հեռուստաընկերությունների լրագրողներին, խմբագրությունների անդամներին, ովքեր գրանցված են որպես թեկնածուներ, արգելվում են ընտրությունների լուսաբանումը եւ ռադիո եւ հեռուստահաղորդումների վարումը»:

Օրենսդրությամբ նման սահմանափակման անհրաժեշտություն չէր առաջանա, եթե, ինչպես նշվեց վերելում, Հայաստանի հեռուստառադիոընկերությունները ընտրությունների լուսաբանման հստակ

մշակված անկախ քաղաքականություն (վարքականոցներ) ունենային, որով կսահմանվեր, որ լրագրողները, թեկնածու առաջադրվելու դեպքում, դադարեցնում են պրոֆեսիոնալ գործունեությունը քարոզչության շրջանում:

Իսկ 22-րդ հոդվածի մյուս կետերը սահմանում են՝

«2. Նախընտրական քարոզչության ժամանակ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին եւ աշխատակիցներին, ինչպես նաեւ զանգվածային լրատվության հանրային եւ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած միջոցների աշխատակիցներին արգելվում է իրենց վերապահված լիազորությունները (իրավունքները) գործադրել թեկնածուների միջեւ անհավասար պայմաններ ստեղծելու, կողմնակալություն ցուցաբերելու միջոցով քաղաքացիների կամքի ազատ արտահայտման վրա ներգործելու նպատակով: Թեկնածու առաջադրվելիս այդ անձինք զանգվածային լրատվության հանրային եւ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած միջոցներից օգտվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով:

3. Թեկնածուների եւ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքներ հրապարակելիս հրապարակումն իրականացնող զանգվածային լրատվության միջոցները, քաղաքացիները եւ կազմակերպությունները պարտավոր են նշել հարցումն անցկացրած կազմակերպության անվանումը, հարցման ժամկետները, հարցվողների թիվը եւ ընտրանքի ձեւը, հավաքման ձեւը եւ վայրը, հարցի ճշգրիտ ձեւակերպումը, հնարավոր սխալի վիճակագրական գնահատականը, ինչպես նաեւ պատվիրատուին եւ այդ հարցման արդյունքները հրապարակելու ֆինանսավորման աղբյուրը:

Քվեարկության օրվան նախորդող 7 օրվա ընթացքում, ներառյալ՝ քվեարկության օրը՝ մինչեւ ժամը 20.00-ն, արգելվում է թեկնածուների եւ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքներ հրապարակելը»:

2003 թվականի (ինչպես եւ դրան նախորդած համարյա բոլոր) ընտրությունների ժամանակ խնդրահարույց էր մնում թեկնածուների (եւ նախագահի, եւ պատգամավորության) պաշտոնական գործունեության լուսաբանումը: Նման լուսաբանումները լրատվական ծրագրերով դիտվում էին իբրեւ անուղղակի քարոզչության դրսևորումներ: 2005 թվականի մայիսի 19-ի օրենքով Ընտրական օրենսգրքը լրացվել է 22¹ հոդվածով: Ըստ դրա 3-րդ կետի՝ *«Արգելվում է զանգվածային լրատվության միջոցներով այս (քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող, պետական, քաղաքացիական, տեղական ինքնակառավարման մարմինների ծառայող հանդիսացող - խմբ.) թեկնածուների գործունեության լուսաբանումը, բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեպքերի, պաշտոնական այցերի եւ ընդունելությունների, ինչպես նաեւ տարերային աղետների ընթացքում վերջիններիս իրականացրած, ձեռնարկվող միջոցառումների»:*

Պետք է ասել, որ այս ձեւակերպումն էլ որոշակի թերություններ ունի, որովհետեւ, ասենք, կառավարության ցանկացած միջոցառում, կառավարության անդամ թեկնածուի ցանկացած աշխատանքային այց կամ հանդիպում լուսաբանման առարկա կարող է դառնալ՝ այդպիսով նրան առավելություն տալով մրցակիցների համեմատ: Նույնը վերաբերում է նաեւ պետական այլ մարմինների աշխատողներին:

Նպատակահարմար է օրենսգրքի այս դրույթն ավելի խստացնել, նշելով, օրինակ, որ նման միջոցառումները լուսաբանվում են միայն իրադարձության, ընդունված որոշումների էության, ձեռք բերված համաձայնությունների (եթե այդպիսիք կան) մասին կարճ տեքստային հաղորդումով, առանց տեսաշարի եւ առանց կոնկրետ անուններ տալու (եթե իրադարձությունն անձնավորված բնույթ չունի):

Օրենսգրքի 23-րդ հոդվածն ամբողջությամբ վերաբերում է քվեարկությանը նախորդող եւ քվեարկության օրվան: Այդ հոդվածի առաջին երկու կետերն առնչվում են նաեւ լրատվամիջոցներին.

«1. Քվեարկության եւ դրան նախորդող օրն արգելվում է այն շենքի ներսում կամ շուրջը, որտեղ գտնվում է տեղամասային կենտրոնը, ինչպես նաեւ անմիջապես դրա մուտքի մոտ ընտրողների վրա ազդեցություն գործել բանավոր կամ գրավոր ձեւով, երաժշտության կամ պատկերավոր միջոցների օգնությամբ, ստորագրություններ հավաքելը, ինչպես նաեւ այլ եղանակներով նախընտրական քարոզչություն կատարելը:

2. Արգելվում է մինչեւ քվեարկության ավարտվելը հրապարակել ընտրողների հարցման արդյունքներն այն մասին, թե ում օգտին են նրանք քվեարկել»:

2007 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ/ԴԱՇԻՆՔԸ

ՀՀ Ազգային ժողովի 2007 թվականի մայիսի 12-ի ընտրություններում համամասնական ընտրակարգով մասնակցեցին 22 կուսակցություն եւ կուսակցությունների 1 դաշինք:

Մայիսի 19-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտարարեց ՀՀ ԱԺ ընտրությունների քվեարկության վերջնական արդյունքները: Կուսակցություններին/դաշինքին տրված ձայները բաշխվել են հետևյալ կերպ (*տոկոսներով*):

| | Կուսակցություն/դաշինք | % |
|-----|---|-------|
| 1. | Հայաստանի հանրապետական կուսակցություն | 33.55 |
| 2. | «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն | 14.97 |
| 3. | «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն | 13.02 |
| 4. | «Օրինաց երկիր» կուսակցություն | 6.98 |
| 5. | «Ժառանգություն» կուսակցություն | 5.93 |
| 6. | Միավորված աշխատանքային կուսակցություն | 4.34 |
| 7. | «Ազգային միաբանություն» կուսակցություն | 3.65 |
| 8. | «Նոր ժամանակներ» կուսակցություն | 3.44 |
| 9. | Ժողովրդական կուսակցություն | 2.71 |
| 10. | «Դաշինք» կուսակցություն | 2.41 |
| 11. | Հայաստանի ժողովրդական կուսակցություն | 1.67 |
| 12. | «Հանրապետություն» կուսակցություն | 1.63 |
| 13. | «Իմպիչմենտ» դաշինք | 1.28 |
| 14. | Հայաստանի կոմունիստական կուսակցություն | 0.64 |
| 15. | Ազգային ժողովրդավարական կուսակցություն | 0.63 |
| 16. | «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն | 0.61 |
| 17. | Ազգային համաձայնություն կուսակցություն | 0.31 |
| 18. | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն | 0.27 |
| 19. | «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն | 0.25 |
| 20. | Միացյալ ազատական ազգային կուսակցություն | 0.20 |
| 21. | Հայաստանի մարքսիստական կուսակցություն | 0.19 |
| 22. | Հայաստանի երիտասարդական կուսակցություն | 0.17 |
| 23. | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն | 0.07 |

Ստորև ներկայացվում է համառոտ տեղեկանք կուսակցությունների/դաշինքի մասին:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 2001 թվականին՝ Հայաստանում 1991 թվականից ի վեր հիմնական ընդդիմադիր ուժերից մեկը համարվող Ազգային ժողովրդավարական միության տրոհմամբ: Ազգային ժողովրդավարական կուսակցության քաղաքական ծրագրի առանցքային կետերից մեկն ուղղակի ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդումն է:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 2000 թվականին եւ այդ ժամանակից մասնակցել է բոլոր համապետական ընտրություններին: Կուսակցական պլատֆորմի հիմքում իբրեւ առաջնային ժողովրդավարական արժեք՝ ազգային համաձայնության հասնելն է եւ ըստ ունեցվածքի հասարակության բեւեռացումը հաղթահարելը:

«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1997 թվականին՝ խորհրդային կուսակցական վերնախավի նախկին ներկայացուցիչներից եւ անկախ Հայաստանի փորձառու քաղաքական գործիչներից մեկի՝ Արտաշես Գեղամյանի անձի շուրջ: Գեղամյանը ՀՀ խորհրդարանի բոլոր գումարումների պատգամավոր է եղել եւ 1998 թվականից

սկսած իր կուսակցության հետ մասնակցել է բոլոր նախագահական եւ խորհրդարանական ընտրություններին: 1999-2003 թվականներին դաշինքով, իսկ 2003-2007 թվականներին ինքնուրույն խմբակցությամբ «Ազգային միաբանություն» կուսակցությունը ներկայացված էր Հայաստանի Ազգային ժողովում: Կուսակցության քաղաքական պլատֆորմի հիմքը «Հակաճգնաժամային ծրագիրն է»:

«ԲԱՐԳԱՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 2004 թվականին, սակայն իբրեւ ազդեցիկ քաղաքական ուժ ասպարեզ է իջել 2006 թվականին եւ որպես այդպիսին ձեւավորվել խոշոր գործարար Գագիկ Ծառուկյանի անձի շուրջ: Աջակցում է ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին եւ փոխադարձ աջակցություն է վայելում: Կուսակցության ներկայացուցիչների հրապարակային ելույթներից դատելով, նրա գաղափարական հիմքերը եւ կողմնորոշումները վերջնականապես ձեւավորված չեն:

«ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 2005 թվականին: Կուսակցության հիմնադիրը դարաբաղյան պատերազմի հերոս, Լեռնային Ղարաբաղի նախկին պաշտպանության նախարար Սամվել Բաբայանն է: ԼՂ նախագահի դեմ մահափորձի համար դատապարտվելուց եւ վաղաժամկետ ազատվելուց հետո նա վերադարձավ Երեւան եւ սկսեց քաղաքականությամբ զբաղվել Հայաստանում: «Դաշինքն» առաջին անգամ է մասնակցում ընտրությունների, կուսակցության պլատֆորմը կառուցված է ժողովրդավարության եւ օրենքի գերակայության ընդհանուր սկզբունքների վրա:

«ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 2002 թվականին եւ առաջին անգամ է մասնակցում ընտրություններին: Նրա առաջնորդն անկախ Հայաստանի Հանրապետության առաջին արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանն է: Կուսակցությունն իր նպատակն է հռչակել համամարդկային եւ ազգային արժեքների, անցյալի քաղաքակիրթ ժառանգության վրա հիմնված ազատ, ուժեղ եւ բարգավաճ Հայաստանի կառուցումը:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1995 թվականին: Իր ներկա տեսքով ձեւավորվել է վերջին 4-5 տարիներին՝ նախկինում ռուսաստանյան հաջողակ գործարար, իսկ 2002 թվականից հայկական «ԱԼՍ» հեռուստաընկերության սեփականատեր Տիգրան Կարապետյանի անձի շուրջ: Կուսակցության ղեկավարն ինքն իրեն «կենտրոնամետ» է հռչակում՝ հերքելով ժողովրդական կուսակցության պատկանելությունն ինչպես իշխանամետ, այնպես էլ ընդդիմադիր ճամբարներին: Թեպետ կուսակցության գաղափարական հիմքերը եւ կողմնորոշումները չեն շեշտվում, նրա արտաքին քաղաքական ուղղվածությունը կարելի է ռուսամետ բնորոշել:

«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՎԱՆ ՈՒՂԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 2005 թվականին: Քաղաքական գործունեությունն ակտիվացրել է 2007 թվականի խորհրդարանական ընտրություններից քիչ առաջ: Կուսակցության նախընտրական ցուցակում ընդգրկվել են տարբեր քաղաքական ուժեր ներկայացնող մի քանի հայտնի գործիչներ: Դրա հետեւանքով «ԺՈՒԿ»-ի նախընտրական պլատֆորմն իրենից ներկայացնում է մի տեսակ փոխզիջում՝ հիմնված ժողովրդավարական արժեքների եւ օրենքի գերակայության վրա:

«ԻՄՊԻՉՍԵՆՏ» ԴԱՇԻՆՔ

Ձեւավորվել է 2007 թվականին Պահպանողական կուսակցության եւ «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության կողմից՝ «Ալլընտրանք» հասարակական շարժման բազայի վրա: «Իմպիչմենտ» դաշինքը հանդես է գալիս հանուն Հայաստանի ներկա ղեկավարությանն իշխանությունից հեռացնելու, նրանց եւ օլիգարխիայի ներկայացուցիչներին պատասխանատվության ենթարկելու, ժողովրդավարական ճանապարհով նոր իշխանություն ձեւավորելու:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱՎԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայկական ավանդական քաղաքական կուսակցություն՝ ավելի քան մեկդարյա պատմությամբ: Հայաստանի առաջին Հանրապետության (1918-1920) փաստացի իշխող կուսակցությունն էր: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո գործում էր վտարանդության մեջ: Անկախության վերականգնումից հետո՝ 1991 թվականից վերահաստատել է հայրենիքում

պաշտոնական քաղաքական գործունեությունը: Ընդդիմադիր էր իշխող Հայոց համազգային շարժմանը: 1995-1998 թվականներին արգելված էր: 1998 եւ 2003 թվականների նախագահական ընտրություններում պաշտպանել է Ռոբերտ Քոչարյանին, իսկ 2003 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո՝ անդամագրվել կառավարող կոալիցիային: Ունի ազգայնական, սոցիալիստական դիրքորոշումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է խորհրդային շրջանում Հայաստանի կոմունիստական կուսակցության վերջին ղեկավար Արամ Գ. Սարգսյանի կողմից 1991 թվականին՝ Մոսկվայում օգոստոսյան խռովությունից եւ Հայաստանի կոմկուսի ինքնալուծարումից անմիջապես հետո: 2003 թվականին ՀԴԿ-ն անդամագրվեց «Արդարություն» ընդդիմադիր դաշինքին եւ խորհրդարանական խմբակցությանը: Հանդես է գալիս սոցիալ-դեմոկրատական դիրքերից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1997 թվականին: Այս կամ այն ձևով մասնակցություն է ունեցել բոլոր ընտրարշավներին՝ ընդգծելով իր լոյալությունն իշխանությունների նկատմամբ: Ունի ռուսամետ դիրքորոշում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1998 թվականին եւ ձեւավորվել Հայաստանի կոմկուսի նախկին առաջին քարտուղար, 1998 թվականի նախագահական ընտրություններում Ռոբերտ Քոչարյանի գլխավոր մրցակից Կարեն Դեմիրճյանի անձի շուրջ: 1999 թվականի խորհրդարանական ընտրություններում ՀԺԿ-ն, Հայաստանի հանրապետական կուսակցության հետ դաշինքով ձեւավորեց խորհրդարանական մեծամասնություն եւ մի շարք առանցքային պորտֆելներ ստացավ կառավարությունում: 1999 թվականի հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում իրականացված ահաբեկչությունից հետո, երբ սպանվեց Կարեն Դեմիրճյանը, կուսակցության ղեկավարությունը ստանձնեց նրա որդին՝ Ստեփան Դեմիրճյանը: Վերջինս 2003 թվականի նախագահական ընտրություններում Ռոբերտ Քոչարյանի գլխավոր մրցակիցն էր, իսկ ՀԺԿ-ն, ձեւավորելով «Արդարություն» դաշինքը, 2003-2007 թվականներին դարձավ խորհրդարանական ընդդիմության մի մասը: Կուսակցության ծրագրային դրույթներն ունեն սոցիալական ուղղվածություն, իսկ նրա արտաքին քաղաքական գերակայություններն այնքան էլ կայուն չեն. տարբեր փուլերում նրան վերագրել են մերթ ռուսամետ, մերթ արեւմտամետ ճանբարներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Իրեն համարում է Հայաստանում ԽՄԿԿ-ի ժառանգորդը: 1999 թվականից խորհրդարանում ներկայացված չէ: Հանդես է գալիս որեւէ ձեւով ԽՍՀՄ-ի եւ տնտեսության մեջ սոցիալիստական կացութեւի վերականգնման օգտին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1991 թվականին՝ Անկախության բանակի բազայի վրա: Իր գոյության առաջին տարիներին ընդդիմադիր էր, իսկ 1995 թվականին՝ անդամագրվեց իշխող «Հայոց համազգային շարժում» կուսակցության ձեւավորած «Հանրապետություն» քաղաքական դաշինքին, որը հետագայում հաղթեց խորհրդարանական ընտրություններում: Վերջին 8 տարիներին, չնայած 1999 թվականի հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում իրականացված ահաբեկչության ժամանակ վարչապետ Վազգեն Սարգսյանի եւ ՀՀԿ-ի մի քանի այլ առաջնորդների սպանությանը, ըստ էության մնում է իշխող կուսակցություն, որն ամենից շատ տեղեր ունի խորհրդարանում եւ պորտֆելներ՝ կառավարությունում: Պահպանողական հայացքների տեր է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1997 թվականին եւ ձեւավորվել՝ էքսցենտրիկ քաղաքական գործիչների թվին դասվող Դավիթ Հակոբյանի անձի շուրջ: Կուսակցության առաջնորդը մարքսիստական ուսմունքը դիտարկում է իբրեւ ձեւ, որը պետք է լցնել ազգային բովանդակությամբ:

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 2001 թվականին՝ Հայաստանի հանրապետական կուսակցության այն նախկին անդամների կողմից, ովքեր համաձայն չէին Ռոբերտ Քոչարյանին աջակցելու ՀՀԿ-ի կուրսին: Կուսակցության առաջնորդ Արամ Զ. Սարգսյանը ղեկավարեց Հայաստանի կառավարությունը՝ 1999 թվականի հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում իրականացված ահաբեկչության ժամանակ իր եղբոր՝ վարչապետ Վազգեն Սարգսյանի սպանությունից հետո: 2000 թվականին Ռոբերտ Քոչարյանի կողմից ազատվեց վարչապետի պաշտոնից: 2003 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո «Հանրապետությունը» խորհրդարան անցավ «Արդարություն» դաշինքի կազմում: Կուսակցությունը արմատական ընդդիմության ճամբարում է եւ հանդես է գալիս արտաքին քաղաքական կուրսը կտրուկ դեպի Արեւմուտք ուղղելու օգտին:

ՄԻԱԿՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 2002 թվականին եւ քաղաքական ասպարեզ իջել 2003 թվականի խորհրդարանական ընտրություններից քիչ առաջ: Այդ ընտրություններում հաղթահարեց 5 տոկոսանոց արգելքը եւ Ազգային ժողովում ուներ առանձին խմբակցություն: 2006 թվականին կառավարող կալիցիայից կուսակցություններից մեկի դուրս գալուց հետո՝ ՄԱԿ-ը գրավեց նրա տեղը, եւ ստացավ, մասնավորապես, մեկ նախարարական պորտֆել: Կուսակցական պլատֆորմի հիմքը քաղաքացիների ստեղծարար աշխատանքի խրախուսումն է:

ՄԻԱՑՅԱԼ ԱԶՍԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ստեղծվել է անմիջականորեն 2007 թվականի խորհրդարանական ընտրություններից առաջ՝ արտասահմանյան ուսումնական ծրագրերի շրջանավարտների կողմից: Առաջարկում է երկրի կյանքի բոլոր բնագավառների ազատականացման արմատական միջոցառումներ:

«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 2004 թվականին եւ ձեւավորվել՝ երկար ժամանակ ռուսական քաղաքական շրջանակների հետ շփված Արամ Կարապետյանի անձի շուրջ: Վերջինս Հայաստանում լայն հասարակությանը հայտնի դարձավ 2003 թվականի նախագահական ընտրություններից առաջ, իր թեկնածությունն առաջադրեց դրանցում եւ ցույց տվեց չորրորդ արդյունքը: «Նոր ժամանակները» շեշտը դնում է կոռուպցիայի դեմ պայքարի եւ արտաքին քաղաքականության մեջ ռուսական ուղղության ուժեղացման վրա:

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հնագույն հայ ավանդական կուսակցություն: Խորհրդային իշխանության տարիներին գործել է վտարանդության մեջ: Անկախության վերականգնումից հետո վերստեղծեց իր կառույցները Հայաստանում: 1995-1999 թվականներին անդամ էր Հայաստանի Ազգային ժողովում իշխող «Հանրապետություն» դաշինքի: Ունի իր համար ավանդական սոցիալ-դեմոկրատական եւ ազգայնական գաղափարախոսություն:

«ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 2005 թվականին եւ քաղաքական ասպարեզ դուրս եկել 2007 թվականի խորհրդարանական ընտրություններից առաջ: Հանդես է գալիս հանուն ժողովրդավարության եւ օրինականության ամրապնդման՝ հիմնված քրիստոնեական արժեքների վրա:

«ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1998 թվականին, նրա առաջնորդը՝ Արթուր Բաղդասարյանը լոյալություն էր հանդես բերում ինչպես ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, այնպես էլ վերջինիս փոխարինած Ռոբերտ Քոչարյանի կառավարությունների նկատմամբ: 2003 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո դարձավ կառավարող կալիցիայի անդամ, ընդսմին՝ ստանալով Ազգային ժողովի խոսնակի պաշտոնը: Սակայն 2006 թվականին դուրս եկավ կալիցիայից եւ այդ ժամանակից գործում է ընդդիմադիր դաշտում: Վերջին տարիներին ավելի ու ավելի է հակվում դեպի ազատական արժեքները եւ հանդես է գալիս եվրոատլանտյան ընկերակցությանը Հայաստանի ինտեգրման օգտին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՍ-ՆԵՐՈՒՄ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի ԶԼՍ-ներում ՀՀ Ազգային ժողովի 2007 թվականի ընտրությունների լուսաբանման դիտարկումն իրականացվել է երկու փուլով. **առաջին փուլը** ընդգրկել է 2007 թվականի փետրվարի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակաշրջանը (նախընտրական քարոզչությանը նախորդած ամիսները), **երկրորդ փուլը**՝ 2007 թվականի ապրիլի 8-ից մայիսի 10-ը (նախընտրական քարոզչության ժամանակաշրջանը):

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ (2007 թ. ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՐՏ) հետազոտությունն իրականացվում էր Երեւանի մամուլի ակումբի կողմից՝ Բաց հասարակության ինստիտուտի ԶԼՍ-ների ցանցային ծրագրի աջակցությամբ:

Դիտարկման խնդիրներն էին՝ քանակական տվյալներ ստանալու եւ վերլուծելու միջոցով պարզել.

- ՀՀ Ազգային ժողովի 2007 թվականի ընտրությունների նկատմամբ Հայաստանի հեռուստաալիքների ուշադրության աստիճանը,

- պաշտոնական ընտրարշավի նախօրյակին Հայաստանի հեռարձակվող ԶԼՍ-ները որքան համարժեք էին տեղեկություններ տրամադրում ընտրազանգվածին՝ քաղաքական կուսակցությունների/նրանց ղեկավարների/ներկայացուցիչների մասին:

Դիտարկման ժամանակաշրջանը՝ 2007 թվականի փետրվարի 1-ից մարտի 31-ը:

Դիտարկումն ընդգրկում էր 7 հեռուստաալիք.

4 համազգային՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության առաջին ալիք, «ԱԼՄ», «Արմենիա», Հայկական երկրորդ հեռուստաալիք:

3 մայրաքաղաքային՝ «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շանթ»:

Դիտարկման առարկան. վերոհիշյալ հեռուստաընկերությունների երեկոյան «փրայմ-թայմի» (18:00-ից մինչեւ 24:00) ժամանակ հեռարձակվող բոլոր այն հաղորդումները, որոնցում անդրադարձ կար կուսակցություններին (դաշինքներին)/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին:

Դիտարկման խումբը.

Նախագծի տնօրեն եւ վերլուծաբան՝ Բորիս Նավասարդյան
Համակարգող՝ Էլինա Պողոսյան
Դիտարկողներ՝ Արմինե Սուքիասյան, Սեդա Շիզանյան, Գոհար Հովսեփյան, Սաթենիկ Դաբադյան, Աստղիկ Հովհաննիսյան, Իրինա Հակոբյան, Էլեն Մելիքսեթյան:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ (2007 թ. ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ) դիտարկումն իրականացվել է «ԹԻՄ» հետազոտությունների կենտրոնի կողմից՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակությամբ հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ֆինանսական եւ Երեւանի մամուլի ակումբի մեթոդալուծական աջակցությամբ: Դրա իրականացման օժանդակել են «Ինտերնյուսը» եւ Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբը:

Դիտարկման խնդիրներն էին քանակական տվյալների վերլուծության միջոցով պարզել, թե.

- Հայաստանի հեռարձակվող եւ տպագիր ԶԼՍ-ները որքան ազատ եւ անկողմնակալ էին տեղեկություններ տրամադրում ընտրազանգվածին՝ համամասնական ընտրակարգով ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների/դաշինքի մասին,

- ԶԼՍ-ներին վերաբերող օրենսդրական բազան եւ պետական կառույցները որքանով էին նպաստում, որ ԶԼՍ-ները (առաջին հերթին հանրային/պաշտոնական) իրականացնեն ազատ, արդար եւ

թափանցիկ ընտրություններ ապահովելու իրենց առաքելությունը,

- որքանով էին ՁԼՄ-ները պահպանում ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների պաշտոնական քարոզարշավը կարգավորող օրենսդրական դրույթները:

Դիտարկման ժամանակաշրջանը՝ 2007 թվականի ապրիլի 8-ից մայիսի 10-ը:

Դիտարկվել են Հայաստանի 18 հեռարձակվող եւ տպագիր ՁԼՄ-ներ.

4 համապետական հեռուստաընկերություններ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք, «ԱԼՄ», «Արմենիա», Հայկական երկրորդ հեռուստաալիք,

6 մայրաքաղաքային հեռուստաընկերություն՝ «ԱՐ», «Արմենյուզ», «Երկիր Մեդիա», «ԹԻ ՎԻ 5», «Կենտրոն», «Շանթ»,

Գյումրիի (Շիրակի մարզ) 3 հեռուստաընկերություն՝ «Շիրակ» հանրային հեռուստաալիք, «ԳԱԼԱ», «Ցայգ» (28-րդ դեցիմետրային հաճախություն),

1 համապետական ռադիոընկերություն՝ Հայաստանի հանրային ռադիո,

4 համապետական թերթեր՝ պաշտոնական «Հայաստանի Հանրապետություն» եւ «Ռեսպուբլիկա Արմենիա», մասնավոր «Առավոտ» եւ «Հայկական ժամանակ»:

Դիտարկման առարկա են եղել՝ վերոհիշյալ հեռուստառադիոալիքների երեկոյան «փրամ-թայմում»՝ ժամը 18.00-ից մինչեւ 24.00 (բացառությամբ «Շիրակ»¹ հեռուստաալիքի. այն դիտարկվել է ժամը 16-ից 20-ը) եթեր հեռարձակված այն բոլոր հաղորդումները եւ վերոհիշյալ թերթերի² այն բոլոր հրապարակումները, որոնք անդրադարձել են համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքին, ինչպես նաեւ այն եթերաժամանակը (ժամը 18.00-ից մինչեւ 24.00, Հ1-ի³ դեպքում՝ ժամը 17.15-ից, իսկ «Շիրակի» դեպքում՝ ժամը 16.00-ից 20.00) եւ թերթային տարածքը, որ հատկացվել է կուսակցություններին/դաշինքին նախընտրական քարոզչության (քաղաքական գովազդի) համար:

Դիտարկման խումբը.

Նախագծի տնօրեն՝ Ավետ Դեմուրյան
Վերլուծաբան՝ Բորիս Նավասարդյան
Համակարգող՝ Էլինա Պողոսբեկյան
Դիտարկողներ՝ Արմինե Սուքիասյան, Սեդա Շիզանյան, Գոհար Հովսեփյան, Սաթենիկ Դաբադյան, Աստղիկ Հովհաննիսյան, Իրինա Հակոբյան, Էլեն Մելիքսեթյան, Լիլիթ Քալանթարյան, Ջարինե Սաֆարյան, Հասմիկ Սեդրակյան, Սուսաննա Մելիքյան, Ալվարո Նազարյան, Նադեժդա Հակոբյան, Ասյա Բարսեղյան, Անահիտ Մարգարյան:

Ստորել՝ երկու փուլերի դիտարկումների մեթոդոլոգիան:

¹ Քանի որ «Շիրակ» հեռուստաալիքը (այն Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության կառուցվածքի մեջ է) օրական չորսժամյա հեռարձակում ունի, այն դիտարկվել է ողջ ծավալով՝ ժամը 16.00-ից մինչեւ 20.00:

² Դիտարկվել է թերթերի ողջ ծավալը, բացառությամբ հատուկ հավելվածների:

³ Քանի որ Հ1-ը համաձայն ՀՀ ԿԸՀ 2007 թվականի ապրիլի 8-ի որոշման կուսակցություններին/դաշինքի նախընտրական քարոզչությունը հեռարձակում էր ժամը 17.15-ից մինչեւ 21.00, այս ալիքում քաղաքական գովազդը դիտարկվել է ժամը 17.15-ից:

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՋՉՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
7 ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀՐԱՐԱՆԳ
(ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՐՏ 2007)**

I. ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՆ

1. Դիտարկողներն ամեն օր արձանագրում են հետազոտվող եթերի տեւողությունը *(ժամը 18.00-ից մինչեւ 24.00)*: Մինչեւ ժամը 18:00-ն սկսված եւ այդ ժամին չավարտված հաղորդումները չեն դիտարկվում. դիտարկումը սկսվում է նման հաղորդումն ավարտվելուց հետո: Սակայն եթե այդ հաղորդման ընդմիջումներին հեռարձակվում են քաղաքական գովազդային հոլովակներ, ապա վերջիններս ենթակա են դիտարկման: Մինչեւ 24:00-ն սկսված եւ 24:00-ից հետո դեռեւս շարունակվող հաղորդումները դիտարկվում են ամբողջությամբ՝ մինչեւ դրանց ավարտը: Սակայն եթե նման հաղորդման ընդմիջումներին ցուցադրվում են քաղաքական գովազդային հոլովակներ, ապա դիտարկվում են միայն նրանք, որոնք սկսվել են մինչեւ ժամը 24:00-ն:

2. Հետազոտության հիմնական միավորը **հեռուստանյութն է:**

Հեռուստանյութ ասելով հասկանում ենք.

եթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝
ա. լրատվական ծրագրի առանձին սյուժեն,
բ. հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,
գ. հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ (միջարկում, բլյուն եւ այլն) առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որն անդրադառնում է տարբեր թեմաների/խնդիրների,
դ. սյուժեների ծանուցումները (անոնսները) դիտարկվում են իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում են,
ե. հեռուստասյուժեին (ռեպորտաժին եւ այլն) նախորդող հաղորդավարական տեքստերը դիտարկվում են իբրեւ այդ սյուժեի (ռեպորտաժի եւ այլն) մաս:

3. Կուսակցությունների (դաշինքների)/նրանց ղեկավարների/ներկայացուցիչների հիշատակումների եւ նրանց մասին հեռուստանյութերի հաշվարկը.

Դիտարկողներն արձանագրում են՝ *կամ* կուսակցությունների/նրանց ղեկավարների/ներկայացուցիչների *կարծ հիշատակումը, կամ ամբողջ հեռուստանյութը՝ այն եթերաժամանակի չափումով*, որը հատկացված է կուսակցություններին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին՝ իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու, ինչպես նաեւ այլ անձանց՝ նույն կուսակցությունների/նրանց ղեկավարների/ներկայացուցիչների մասին դատողությունների կամ պատմությունների համար:

Եթե կուսակցության ղեկավարը(ները)/ներկայացուցիչը(ները) հանդես է գալիս իբրեւ իր ոչ կուսակցական պաշտոնական կամ մասնագիտական եւ այլ պարտականությունները կատարող անձ, եւ նրա կուսակցական պատկանելությունը չի ընդգծվում, ապա հիշատակում կամ եթերաժամանակի չափումով հեռուստանյութ չի արձանագրվում:

ա. *Հիշատակում* արձանագրվում է այն դեպքում, երբ կուսակցությունը/նրա ղեկավարը/ներկայացուցիչը հեռուստանյութում պարզապես անվանվում է, կամ նյութը պարունակում է միայն նրա գործողության, հայտարարության, ասույթի մատնանշում՝ առանց բովանդակության մեջ խորանալու:

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվում է *միավորներով*:

Յուրաքանչյուր առանձին հեռուստանյութում արձանագրվում է յուրաքանչյուր կուսակցության/նրա ղեկավարների/ներկայացուցիչների միայն մեկ հիշատակում:

Հիշատակում է համարվում նաեւ հեռուստակադրում կուսակցությունների ղեկավարների/ներկայացուցիչների յուրաքանչյուր հայտնվելը: Եթե կադրում հայտնվելը այն նյութի մասն է, որում տվյալ կուսակցությունը/նրա ղեկավարները/ներկայացուցիչները հիշատակվում է

բանավոր, ապա այն իբրև լրացուցիչ հիշատակում չի արձանագրվում: Եթե կուսակցությունների ղեկավարները/ներկայացուցիչները հայտնվել են այնպիսի հեռուստանյութի կադրում, որում այդ ղեկավարը/ներկայացուցիչը կամ նրա կուսակցությունը բանավոր չեն հիշատակվում, ապա դա համարվում է առանձին հիշատակում:

բ. Եթերաժամանակի չափումով հեռուստանյութը արձանագրվում է այն դեպքում, եթե նրանում մանրամասն ներկայացվում են կուսակցության/նրա ղեկավարի/ներկայացուցչի գործողությունները, իր կամ նրա մասին այլոց հայտարարությունները, ասույթները:

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվում է **միավորներով** (հեռուստանյութ) եւ **վայրկյաններով** (եթերաժամանակ):

Կուսակցություններին/նրանց ղեկավարներին/ներկայացուցիչներին իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու կամ նրանց մասին այլոց կողմից դատողություններ անելու կամ պատմելու համար հատկացված հեռուստանյութերի քանակի հաշվարկը եւ եթերաժամանակի չափումն իրականացվում է հետևյալ սկզբունքով.

- 1) եթե հեռուստանյութն ամբողջովին նվիրված է այս կամ այն կուսակցությանը/նրա ղեկավարներին/ներկայացուցիչներին, ապա այն եւ դրա ողջ եթերաժամանակը դիտարկողները վերագրում են տվյալ կուսակցությանը:
- 2) եթե կուսակցությանը/նրա ղեկավարներին/ներկայացուցիչներին նվիրվում է հեռուստանյութի մի մասը միայն, ապա դիտարկողները տվյալ կուսակցությանն են վերագրում նյութը եւ հեռուստաեթերի միայն այն մասը, որը նվիրված է նրան:
- 3) եթե ամբողջովին կուսակցությանը/նրա ղեկավարներին/ներկայացուցիչներին (անվանենք X) նվիրված հեռուստանյութում բերվում են մի այլ (X կուսակցությունից տարբեր) կուսակցության/նրա ղեկավարների/ներկայացուցիչների (անվանենք Y) ասույթներ կամ՝ այլ անձանց դատողություններ, պատմություններ Y-ի մասին (**առանց X-ի հետ համեմատության**), ապա նյութը դիտարկողները վերագրում են ինչպես X-ին, այնպես էլ Y-ին, վերջինիս, համապատասխանաբար, վերագրվում է նաեւ նյութի այդ մասի եթերաժամանակը:
- 4) եթե ամբողջովին X կուսակցությանը նվիրված հեռուստանյութում ներկայացվում են նրա արտահայտությունները մի այլ՝ Y կուսակցության մասին, կամ՝ Y-ի արտահայտությունները X-ի մասին, կամ՝ այլ անձանց դատողությունները, պատմությունները Y-ի մասին՝ **X-ի համեմատությամբ**, ապա հեռուստանյութը ինչպես նաեւ եթերաժամանակի **50-ական տոկոսը** դիտարկողները վերագրում են ինչպես X-ին, այնպես էլ Y-ին:

4. Կուսակցությունների (դաշինքների) մասին գովազդային հոլովակների/հայտարարությունների/նյութերի քանակի եւ ծավալի հաշվարկը երեկոյան «փրայմ-թայմում».

Հեռուստաալիքի երեկոյան «փրայմ-թայմում» (18:00-ից 24:00) դիտարկողները արձանագրում են կուսակցության/նրա ղեկավարի/ներկայացուցիչների մասին գովազդային հոլովակների/հայտարարությունների/նյութերի **քանակը (միավորներով)** եւ **եթերաժամանակի հաշվարկը (վայրկյաններով)**:

5. Բանավիճային հաղորդումների մասնակիցների արձանագրումը.

Հետազոտվող հեռուստաալիքի երեկոյան «փրայմ-թայմում» (18:00-ից 24:00) դիտորդներն առանձին ցուցակով արձանագրում են բանավիճային (հարցազրույցի, «հյուր ստուդիայում», «թոք-շոու» ժանրի) հաղորդումների մասնակիցներին՝ նշելով հաղորդման անվանումը, իրավիճակի մասնակիցների անունը(ները)/պաշտոնը(ները):

II. ԴԻՏԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դիտարկման առարկա հանդիսացած կուսակցությունների ցանկը դիտարկման ժամանակաշրջանից կախված տարբեր էր: Փետրվարին այն կազմված էր երկրի քաղաքական կյանքում ակտիվ դեր ունեցող 34 կուսակցությունից: Մարտին դիտարկման առարկա են եղել միայն այն 28

կուսակցությունները/դաշինքը, որոնք պաշտոնապես հայտարարել էին նախատեսվող խորհրդարանական ընտրություններին իրենց մասնակցության մասին (ցանկը կազմվել է ըստ առաջադրված կուսակցությունների/դաշինքի կողմից ԿԸՀ ներկայացված ընտրացուցակի):

Ստորև ներկայացվում են փետրվարին եւ մարտին դիտարկման առարկա հանդիսացած կուսակցությունների/դաշինքների ցուցակները:

2007 թ. ՓԵՏՐՎԱՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

| | |
|-----|---|
| 1. | «Ազգային անվտանգություն» կուսակցություն |
| 2. | «Ազգային ժողովրդավարական դաշինք» կուսակցություն |
| 3. | Ազգային ժողովրդավարական կուսակցություն |
| 4. | «Ազգային ժողովրդավարական միություն» կուսակցություն |
| 5. | «Ազգային ինքնորոշում միավորում» կուսակցություն |
| 6. | Ազգային համաձայնություն կուսակցություն |
| 7. | «Ազգային միաբանություն» կուսակցություն |
| 8. | «Արժանապատիվ ապագա» կուսակցություն |
| 9. | «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն |
| 10. | «Դաշինք» կուսակցություն |
| 11. | «Ժառանգություն» կուսակցություն |
| 12. | Ժողովրդական կուսակցություն |
| 13. | «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն |
| 14. | «Հայ արհմերի բռունցք» կուսակցություն |
| 15. | «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն |
| 16. | «Հայոց համազգային շարժում» կուսակցություն |
| 17. | Հայաստանի ազատական առաջադիմական կուսակցություն |
| 18. | Հայաստանի առաջադիմական կուսակցություն |
| 19. | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն |
| 20. | «Հայաստանի ժողովրդավարական ազատական միություն» կուսակցություն |
| 21. | Հայաստանի ժողովրդական կուսակցություն |
| 22. | Հայաստանի կոմունիստական կուսակցություն |
| 23. | Հայաստանի հանրապետական կուսակցություն |
| 24. | Հայաստանի մարքսիստական կուսակցություն |
| 25. | Հայաստանի միավորված կոմունիստական կուսակցություն |
| 26. | Հայաստանի ռամկավար-ազատական կուսակցություն |
| 27. | «Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միություն» կուսակցություն |
| 28. | «Հանրապետություն» կուսակցություն |
| 29. | «Հզոր հայրենիք» կուսակցություն |
| 30. | Միավորված աշխատանքային կուսակցություն |
| 31. | «Նոր ժամանակներ» կուսակցություն |
| 32. | «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցություն |
| 33. | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն |
| 34. | «Օրինաց երկիր» կուսակցություն |

* Կուսակցությունները դասակարգված են ըստ այբբենական կարգի

2007 թ. ՄԱՐՏԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|-----|--|
| 1. | Ազգային ժողովրդավարական կուսակցություն - ԱԺԿ |
| 2. | Ազգային համաձայնություն կուսակցություն - ԱՀԿ |
| 3. | «Ազգային միաբանություն» կուսակցություն - ԱՄ |
| 4. | «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն - ԲՀԿ |
| 5. | «Դաշինք» կուսակցություն |
| 6. | «Ժառանգություն» կուսակցություն |
| 7. | Ժողովրդական կուսակցություն - ԺԿ |
| 8. | «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն - ԺՈՒԿ |
| 9. | «Իմպիչմենտ» դաշինք ** |
| 10. | «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն - ՀՅԴ |
| 11. | Հայաստանի ազատական առաջադիմական կուսակցություն - ՀԱԱԿ (մինչև մարտի 27-ը ներառյալ)* |
| 12. | Հայաստանի առաջադիմական կուսակցություն |
| 13. | Հայաստանի առաջադիմական միացյալ կոմունիստական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** |
| 14. | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն - ՀԴԿ |
| 15. | Հայաստանի երիտասարդական կուսակցություն ** |
| 16. | Հայաստանի ժողովրդական կուսակցություն - ՀԺԿ |

| | |
|-----|--|
| 17. | Հայաստանի կոմունիստական կուսակցություն - ՀԿԿ |
| 18. | Հայաստանի հանրապետական կուսակցություն - ՀՀԿ |
| 19. | Հայաստանի մարքսիստական կուսակցություն |
| 20. | «Հայոց համագոյին շարժում» կուսակցություն - ՀՀՇ |
| 21. | «Հայոց հայրենիք» կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** |
| 22. | «Հանրապետություն» կուսակցություն - ՀԿ |
| 23. | Միավորված աշխատանքային կուսակցություն - ՄԱԿ |
| 24. | Միացյալ ազատական ազգային կուսակցություն ** |
| 25. | «Նոր ժամանակներ» կուսակցություն |
| 26. | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն - ՍԴՀԿ |
| 27. | «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն ** |
| 28. | «Օրինաց երկիր» կուսակցություն - ՕԵԿ |

*Տվյալ կուսակցությունները նշված ժամկետում (մինչև մարտի 28-ը) ԿԸԳ-ը չեն ներկայացրել հաշվառման փաստաթղթերը, այդ պատճառով դրանց լուսաբանումը մոնիտորինգի է ենթարկվել մինչև մարտի 27-ը ներառյալ:

** Տվյալ կուսակցությունները/դաշինքը չեն դիտարկվել 2007թ. փետրվարին:

III. ԴԻՏԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

ա. Դիտարկողները ամեն օր հաշվարկում եւ կողմավորված աղյուսակներում արձանագրում են բոլոր անհրաժեշտ տվյալները՝ ըստ յուրաքանչյուր հեռուստաալիքի:

բ. Ստացված տվյալները ամփոփվում են յուրաքանչյուր ամիս եւ ներկայացվում համակարգողին՝ մարտի 2-ին եւ ապրիլի 2-ին:

գ. Դիտարկման ողջ ժամանակաշրջանում ստացված տվյալներն ամփոփվում են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՍ-ՆԵՐՈՒՄ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀՐԱՅԱՆԳ (ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ 2007)

I. ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՆ

1. Հետազոտության հիմնական միավորներն են հեռուստառադիոնյութը եւ թերթային հրապարակումը:

Հեռուստառադիոնյութ ասելով հասկանում ենք.

Եթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

ա. լրատվական ծրագրի առանձին սյուժեն,

բ. հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,

գ. հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ (միջարկում, բլյուն եւ այլն)

առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որն անդրադառնում է տարբեր թեմաների/խնդիրների,

դ. սյուժեների ծանուցումները (անոնսները) դիտարկվում են իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում են,

ե. հեռուստառադիոսյուժեին (ռեպորտաժին եւ այլն) նախորդող հաղորդավարական տեքստերը դիտարկվում են իբրեւ այդ սյուժեի (ռեպորտաժի եւ այլն) մաս:

Թերթային հրապարակում ասելով հասկանում ենք.

Թերթային տեքստի՝ թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

ա. առանձին հոդվածը, նյութը, հարցազրույցը եւ այլն,

բ. հրապարակումների ծանուցումները (անոնսները) դիտարկվում են իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում են,

գ. վերնագիրը/ենթավերնագիրը, լիդը (այսինքն՝ վերնագրին/ենթավերնագրին հաջորդող եւ հրապարակումը բացող տեքստը, որում ներկայացվում է հոդվածի հիմնական իմաստը) դիտարկվում են իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում են,

դ. այս կամ այն հրապարակման խմբագրական մեկնաբանությունը, որն առանձնացված է «խմբագրության կողմից», «խմբագրության մեկնաբանությունը» եւ այլ բառերով, դիտարկվում է իբրեւ առանձին նյութ,
ե. լուսանկարը (նկարները, ծաղրանկարները, շարժերը, կոլաժները, նկարազարդումները, գրաֆիկները եւ այլն), որը թերթային հրապարակման մաս չի կազմում, սակայն այսուհանդերձ ունի վերնագիր կամ տեքստ կամ իմաստային բեռ, դիտարկվում է իբրեւ առանձին նյութ: Իսկ եթե լուսանկարը ուղեկցում է թերթային հրապարակմանը, ապա այն դիտարկվում է իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում է:

2. Դիտարկողներն ամեն օր արձանագրում են հետազոտվող եթերի տեւողությունը (**ժամը 18.00-ից մինչեւ 24.00**): Մինչեւ ժամը 18:00-ն սկսված եւ այդ ժամին չավարտված հաղորդումները չեն դիտարկվում. դիտարկումը սկսվում է նման հաղորդումն ավարտվելուց հետո: Սակայն եթե այդ հաղորդման ընդմիջումներին հեռարձակվում են քաղաքական գովազդային հոլովակներ, ապա վերջիններս ենթակա է դիտարկման: Մինչեւ 24:00-ն սկսված եւ 24:00-ից հետո դեռեւս շարունակվող հաղորդումները դիտարկվում են ամբողջությամբ՝ մինչեւ դրանց ավարտը: Սակայն եթե նման հաղորդման ընդմիջումներին ցուցադրվում են քաղաքական գովազդային հոլովակներ, ապա դիտարկվում են միայն նրանք, որոնք սկսվել են մինչեւ ժամը 24:00-ն:

3. Կուսակցությունների (դաշինքների) հիշատակումների քանակի եւ բնույթի հաշվարկը.

Ա. Դիտարկողներն ամեն օր արձանագրում եւ հաշվառում են կուսակցության/դաշինքի կամ նրա ղեկավարների (ընտրական ցուցակում առաջին երեքի) **հիշատակումները** հեռարձակվող ՁԼՄ-ների երեկոյան «փրայմ-թայմում» (**18:00-ից 24:00**, «Շիրակի» դեպքում՝ **16.00-20.00**) եւ տպագիր ՁԼՄ-ներում (**ամբողջ ծավալով**):

Բ. Հիշատակումների ընդհանուր թիվն արձանագրելուն զուգահեռ հաշվարկվում է նաեւ կուսակցության/դաշինքի կամ նրա ղեկավարների **դրական (+), բացասական (-) եւ չեզոք (0)** հիշատակումների թիվը: Նշանային (դրական, բացասական) հիշատակումներ ասելով հասկացվում են այն հրապարակումներում հիշատակումները, որոնք լսարանի մոտ կուսակցության (դաշինքի) կամ նրա ղեկավարների/ներկայացուցիչների մասին միանշանակ դրական կամ բացասական ընդհանուր տպավորություն են թողնում: Այնտեղ, ուր նման միանշանակություն չկա, հիշատակումն արձանագրվում է իբրեւ չեզոք: Դիտարկողի բոլոր կասկածները նույնպես մեկնաբանվում են հօգուտ հիշատակումը չեզոք հաշվառելու:

Յուրաքանչյուր հեռուստառադիոնյութում, հրապարակման մեջ արձանագրվում է յուրաքանչյուր կուսակցության/դաշինքի, նրա ղեկավարների միայն մեկ հիշատակում եւ միայն մեկ բնորոշիչ նշան:

Այս կատեգորիաներում հաշվարկը կատարվում է **միավորներով**:

Հիշատակում է համարվում նաեւ այն հեռուստատեսային կադրում կամ այն լուսանկարում/այլ գրաֆիկական նյութում կուսակցությունների/դաշինքի ղեկավարների (ընտրական ցուցակում առաջին երեքի) ցանկացած ձեւով հայտնվելը, որոնք չեն հանդիսանում նյութի/հրապարակման մաս: Եթե կադրում/լուսանկարում հայտնվելը այն նյութի մասն է, որում տվյալ կուսակցությունը/դաշինքը, նրա ղեկավարները արդեն հիշատակվել են, ապա այն չի արձանագրվում իբրեւ լրացուցիչ հիշատակում:

4. Կուսակցության/դաշինքի, նրա ղեկավարների մասին նյութերի ծավալի հաշվառումը.

Դիտարկողներն արձանագրում եւ չափում են հեռարձակվող (**18:00-ից 24:00**, «Շիրակի» դեպքում՝ **16.00-20.00**) եւ տպագիր (**ամբողջ ծավալով**) ՁԼՄ-ների **այն նյութերի ծավալը (այսինքն՝ եթերաժամանակը/թերթային տարածքը՝ վայրկյաններով** եւ **քառակուսի սանտիմետրերով**), որոնք տրամադրվել են կուսակցություններին/դաշինքին կամ նրանց առաջնորդներին, ներկայացուցիչներին՝ իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու, ինչպես նաեւ այլ անձանց՝ նրանց մասին իրենց դատողություններն ու պատմությունները ներկայացնելու համար:

Կուսակցությանը/դաշինքին կամ նրա ղեկավարներին իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու կամ նրանց մասին այլոց կողմից դատողություններ անելու կամ պատմելու համար հատկացված եթերաժամանակի/թերթային տարածքի չափումն իրականացվում է հետեւյալ սկզբունքով.

1) եթե հեռուստառադիոթերթային նյութն ամբողջովին նվիրված է այս կամ այն կուսակցությանը/դաշինքին, նրա ղեկավարներին, ապա դրա ողջ եթերաժամանակը/թերթային տարածքը դիտարկողները վերագրում են տվյալ կուսակցությանը:

2) եթե կուսակցությանը/դաշինքին, նրա ղեկավարներին նվիրվում է նյութի մի մասը միայն, ապա դիտարկողները տվյալ կուսակցությանն են վերագրում եթերաժամանակի/թերթային տարածքի միայն այն մասը, որը նվիրված է նրանց:

3) եթե ամբողջովին կուսակցությանը/դաշինքին կամ նրա ղեկավարներին (անվանենք X) նվիրված նյութում բերվում են մի այլ (X կուսակցությունից տարբեր) կուսակցության/դաշինքի կամ նրա ղեկավարների (անվանենք Y) ասույթներ կամ այլ անձանց դատողություններ, պատմություններ Y-ի մասին (*առանց X-ի հետ համեմատության*), ապա ինչպես X-ին, այնպես էլ Y-ին է վերագրվում նյութի այդ մասի եթերաժամանակը/թերթային տարածքը:

4) եթե ամբողջովին X կուսակցությանը նվիրված նյութում ներկայացվում են նրա արտահայտությունները մի այլ Y կուսակցության մասին, կամ Y-ի արտահայտությունները X-ի մասին, կամ այլ անձանց դատողությունները, պատմությունները Y-ի մասին *X-ի համեմատությամբ*, ապա այդ նյութի եթերաժամանակի/թերթային տարածքի **50-ական տոկոսը** դիտարկողները վերագրում են ինչպես X-ին, այնպես էլ Y-ին:

Կուսակցությունների/դաշինքի ղեկավարներին (ընտրական ցուցակում առաջին երեքին) վերաբերող հիշատակումները, եթերաժամանակը/թերթային տարածքը արձանագրվում են անկախ այն բանից, թե ինչ կարգավիճակով են այդ անձինք հանդես գալիս: Կուսակցությունների/դաշինքի այլ ներկայացուցիչների դեպքում հիշատակումները, եթերաժամանակը/թերթային տարածքը արձանագրվում են միայն այն դեպքում, երբ նրանց կուսակցական պատկանելությունը որեւէ ձեւով նշվում է նյութում/հրապարակման մեջ:

5. Հեռարձակվող եւ տպագիր ՁԼՍ-ներում կուսակցությանը/դաշինքին հատկացված նախընտրական քարոզչության (քաղաքական գովազդի) ծավալի հաշվարկը.

Դիտարկողները արձանագրում եւ չափում են հեռարձակվող (*18:00-ից 24:00, 31-ի դեպքում 17.15-ից, «Շիրակի» դեպքում՝ 16.00-20.00*) եւ տպագիր (*ամբողջ ծավալով*) ՁԼՍ-ներում այն նյութերի *ծավալը (այսինքն՝ եթերաժամանակը/թերթային տարածքը՝ վայրկյաններով եւ քառակուսի սանտիմետրերով)*, որոնք հատկացվել են կուսակցությանը/դաշինքին կամ նրա ղեկավարներին նախընտրական քարոզչության համար եւ առանձնացված են՝ թերթերում իբրեւ գովազդ եւ նշված են իբրեւ «քաղաքական գովազդ» կամ «նախընտրական քարոզչական հաղորդում»՝ հեռուստառադիոալիքներում: Ընդամենն առանձին չափվում է վճարովի եւ անվճար գովազդի ծավալը:

Մինչեւ ժամը 18.00 սկսված, սակայն մինչ այդ ժամը չավարտված քաղաքական գովազդային բլոկը դիտարկման ենթակա չէ: Մինչեւ 24.00 սկսված, սակայն մինչ այդ ժամը չավարտված քաղաքական գովազդային բլոկը դիտարկվում է ամբողջությամբ՝ մինչ դրա ավարտը:

6. Ընտրական գործընթացի խախտումներին անդրադարձների արձանագրումը.

Դիտարկողներն առանձին ցուցակով արձանագրում են *տվյալ հեռուստառադիոալիքի լրատվական ծրագրերում (18:00-ից 24:00, «Շիրակի» դեպքում՝ 16.00-20.00) ընտրական գործընթացների խախտումներին անդրադարձները:*

7. Բանավիճային հաղորդումների մասնակիցների արձանագրումը.

Դիտարկողներն առանձին ցուցակով արձանագրում են հետազոտվող հեռուստառադիոալիքի (*ժամը 18:00-ից 24:00, «Շիրակի» դեպքում՝ 16.00-20.00*) բանավիճային (հարցազրույցի, «հյուր ստուդիայում», «թոք-շոու» ժանրի) հաղորդումների մասնակիցներին՝ նշելով հեռուստառադիոալիքը, հաղորդման անվանումը, հրավիրված մասնակիցների անունը(ները)/պաշտոնը(ները):

II. ԴԻՏԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դիտարկման առարկա են եղել ԿԸՀ կողմից ՀՀ ԱԺ ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցելու համար գրանցված 24 կուսակցություն եւ 1 կուսակցական դաշինք:

Ապրիլի 29-ին Հայոց համազգային շարժումը եւ մայիսի 2-ին Հայաստանի առաջադիմական կուսակցությունը պաշտոնապես դադարեցրին իրենց մասնակցությունը ընտրարշավին: Մայիսի 2-ին ընտրարշավից դուրս եկավ նաեւ Գարիկ Մարտիրոսյանը, որը Միացյալ ազատական ազգային կուսակցության ընտրական ցուցակի երկրորդ համարն էր, համապատասխանաբար՝ երկրորդ տեղում հայտնվեց Դավիթ Աթանեսյանը, երրորդում՝ Սամսոն Հակոբյանը:

Այսպիսով՝ ապրիլի 30-ից դիտարկման առարկա են եղել 24 կուսակցություն/դաշինք, իսկ մայիսի 3-ից՝ 23 կուսակցություն/դաշինք, այդ թվում՝ Միացյալ ազատական ազգային կուսակցությունը՝ ղեկավարների փոփոխված եռյակով:

ՀՀ ԱԺ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՍԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՍԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ՂԱՇԻՆՔԻ ՑՈՒՑԱԿԸ

| | |
|-----|---|
| 1. | Ազգային ժողովրդավարական կուսակցություն. Շավարշ Քոչարյան, Հրանուշ Խառատյան, Տարոն Առաքելյան |
| 2. | Ազգային համաձայնություն կուսակցություն. Արամ Հարությունյան, Ալեքսանդր Մանասյան, Մանվել Եղիազարյան |
| 3. | «Ազգային միաբանություն» կուսակցություն. Արտաշես Գեղամյան, Ալեքսան Կարապետյան, Կորյուն Առաքելյան |
| 4. | «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն. Գագիկ Ծառուկյան, Արամ Իսաբեկյան, Գոհար Ենոբյան |
| 5. | «Դաշինք» կուսակցություն. Սամվել Բաբայան, Լիանա Տերյան, Գնել Ղեչյան |
| 6. | «Ժառանգություն» կուսակցություն. Րաֆֆի Հովհաննիսյան, Լարիսա Ալավերդյան, Վարդան Խաչատրյան |
| 7. | Ժողովրդական կուսակցություն. Տիգրան Կարապետյան, Սամվել Շահգալոյան, Գագիկ Ստեփանյան |
| 8. | «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն. Մանուկ Գասպարյան, Արշակ Սադոյան, Աղասի Արշակյան |
| 9. | «Իմպիչմենտ» դաշինք. Նիկոլ Փաշինյան, Միքայել Հայրապետյան, Պետրոս Մակեյան |
| 10. | «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն. Վահան Հովհաննեսյան, Արմեն Ռուստամյան, Դավիթ Լոբյան |
| 11. | Հայաստանի առաջադիմական կուսակցություն. Տիգրան Ուրիխանյան, Նաիրա Հայրապետյան, Աշոտ Մնացականյան <i>(մինչև 2.05 ներառյալ)</i> |
| 12. | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն. Արամ Գասպարի Սարգսյան, Արմեն Հովսեփյան, Կարինե Հակոբյան |
| 13. | Հայաստանի երիտասարդական կուսակցություն. Սարգիս Ասատրյան, Վահան Բաբայան, Ժամեն Ասրյան |
| 14. | Հայաստանի ժողովրդական կուսակցություն. Ստեփան Դեմիրճյան, Ալբերտ Բազեյան, Գրիգոր Հարությունյան |
| 15. | Հայաստանի կոմունիստական կուսակցություն. Ռուբեն Թովմասյան, Տաճատ Սարգսյան, Գագիկ Մանուկյան |
| 16. | Հայաստանի հանրապետական կուսակցություն. Սերժ Սարգսյան, Տիգրան Թորոսյան, Հովիկ Աբրահամյան |
| 17. | Հայաստանի մարքսիստական կուսակցություն. Դավիթ Հակոբյան, Ալբերտ Արշակյան, Նորիկ Այվազյան |
| 18. | «Հայոց համազգային շարժում» կուսակցություն. Արարատ Ջուրաբյան, Արամ Մանուկյան, Անդրանիկ Հովակիմյան <i>(մինչև 29.04 ներառյալ)</i> |
| 19. | «Հանրապետություն» կուսակցություն. Արամ Զավենի Սարգսյան, Սմբատ Այվազյան, Սուրեն Աբրահամյան |
| 20. | Միավորված աշխատանքային կուսակցություն. Գուրգեն Արսենյան, Գրիգոր Դոնջեյան, Սերգեյ Սարաջյան |
| 21. | Միացյալ ազատական ազգային կուսակցություն. Լեւոն Մարտիրոսյան, Գարիկ Մարտիրոսյան <i>(մինչև 2.05 ներառյալ)</i> , Դավիթ Աթանեսյան, Սամսոն Հակոբյան |
| 22. | «Նոր ժամանակներ» կուսակցություն. Արամ Կարապետյան, Ալեքսան Մինասյան, Գուրգեն Եղիազարյան |
| 23. | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն. Լյուդմիլա Սարգսյան, Ալբերտ Գաբրիելյան, Արա Սարգսյան |
| 24. | «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն. Մկրտիչ (Սոս) Գիմիշյան, Արամ Գրիգորյան, Հովհաննես Կուրդիցյան |
| 25. | «Օրինաց երկիր» կուսակցություն. Արթուր Բաղդասարյան, Միեր Շահգելոյան, Հեղինե Բիշարյան |

III. ԴԻՏԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

ա. Դիտարկողները ամեն օր հաշվարկում եւ կողավորված աղյուսակներում արձանագրում են բոլոր անհրաժեշտ տվյալները՝ ըստ յուրաքանչյուր ՁԼՄ-ի:

բ. Ստացված տվյալները ըստ յուրաքանչյուր ՁԼՄ-ի ամփոփվում են եւ ներկայացվում համակարգողին **ապրիլի 8-ից 15-ի, ապրիլի 16-ից 23-ի, ապրիլի 24-ից մայիսի 5-ի, մայիսի 6-ից 10-ի** ժամանակաշրջանների համար:

գ. Դիտարկման ողջ ժամանակաշրջանում (**ապրիլի 8-ից մայիսի 10-ը**) ստացված տվյալներն ըստ յուրաքանչյուր ՁԼՄ-ի ամփոփվում են եւ ներկայացվում համակարգողին **մայիսի 12-ին**:

ՌԵՏԱԶՈՏՎԱԾ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հեռարձակվող ՁԼՍ-ներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ - հանրային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2001 թվականին: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Հետազոտվել է Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքը (Հ1): Հ1-ի օրական հեռարձակման տեւողությունն է՝ շուրջօրյա՝ երեւանում եւ 19,5 ժամ՝ Հայաստանի մնացած տարածքում:

«ԱԼՄ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2000 թվականին: Հիմնադիրը՝ «ԱԼՄ հոլդինգ» ՍՊԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 24 ժամ:

«ԱՐՄԵՆԻԱ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998 թվականին: Հիմնադիրները - «Գաֆեսյան» ընտանեկան ֆոնդ եւ «Սարգսյանների ընտանիք» ֆոնդ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 24 ժամ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍԱՍԿԻՔ (Հ2) - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998 թվականին: Հիմնադիրները մասնավոր անձինք են: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 18,5 ժամ:

«ԱՐ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1996 թվականին: Հիմնադիրը՝ «ԱՐ հեռուստաընկերություն» ՍՊԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 24 ժամ:

«ԱՐՄՆՅՈՒԶ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2002 թվականին: Հիմնադիրը՝ «Արմնյուզ» ՓԲԸ: Շուրջօրյա լրատվական ալիք է, որը վերահեռարձակում է նաեւ «Եվրոնյուզի» ծրագրերը:

«ԵՐԿԻՐ ՍԵՂԻԱ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2004 թվականին: Հիմնադիրը՝ «Հուսաբեր» ՓԲԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 24 ժամ:

«ԿԵՆՏՐՈՆ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2002 թվականին: Հիմնադիրը՝ «ՇԱՐՄ» ՓԲԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 19 ժամ:

«ԹԻ ՎԻ 5» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2000 թվականին: Հիմնադիրը՝ «Թի Վի Ֆայթ» ՓԲԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 24 ժամ:

«ՇԱՆԹ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1994 թվականին: Հիմնադիրը՝ «Շանթ» ՍՊԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 19 ժամ:

«ՇԻՐԱԿ» - հանրային հեռուստառադիոընկերություն: Հիմնադրվել է 1991 թվականին: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 4 ժամ:

«ՑԱՅԳ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1991 թվականին: Հիմնադիրները մասնավոր անձինք են: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 10-12 ժամ:

«ԳԱԼԱ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2005 թվականին: Հիմնադիրը՝ «ԶԱՊ» ՍՊԸ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 13-18 ժամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՈՍԴԻՈ - հանրային ռադիոընկերություն: Հիմնադրվել է 2001 թվականին: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Օրական հեռարձակման տեւողությունը՝ 24 ժամ:

Տպագիր ՁԼՍ-ներ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթական հինգ անգամ): Հիմնադրվել է 1990 թվականին: Հիմնադիրը՝ «Հանրապետություն» ՓԲԸ: Հիմնական ծավալը՝ 4 տպագրական մամուլ (A2 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 6000 օրինակ:

«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ» - ռուսերեն թերթ (լույս է տեսնում շաբաթական երկու անգամ): Հիմնադրվել է 1990 թվականին: Հիմնադիրը՝ «Հայաստանի Հանրապետություն - Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ: Հիմնական ծավալը՝ 2 տպագրական մամուլ (A3 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 1500 օրինակ:

«ԱՌԱՎՈՏ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթական հինգ անգամ): Հիմնադրվել է 1994 թվականին: Հիմնադիրը՝ «Առավոտ» օրաթերթ» ՍՊԸ: Հիմնական ծավալը՝ 2 տպագրական մամուլ (A3 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 4400 օրինակ:

«ՀԱՅԱԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթական հինգ անգամ): Հիմնադրվել է 1997 թվականին: Հիմնադիրը՝ «Դարեակիզբ» ՍՊԸ: Հիմնական ծավալը՝ 2 տպագրական մամուլ (A3 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը՝ 5250-6050 օրինակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՍ-ՆԵՐՈՒՄ ՀՀ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

2006-2007 թվականների Հայաստանի քաղաքական իրավիճակի եւ ԶԼՍ-ների գործունեության վերլուծությունը վկայում է, որ Հայաստանում ընտրարշավը ոչ պաշտոնապես մեկնարկել էր քվեարկության օրվանից համարյա մեկ տարի առաջ: Հենց այդ ժամանակ սկսեցին որոշակիանալ 2007 թվականի խորհրդարանական ընտրություններում հիմնական մրցակիցների շրջանակը, մի շարք քաղաքական ուժերի ռազմավարությունը եւ լրատվամիջոցների հետ նրանց փոխհարաբերությունների բնույթը: Միեւնույն ժամանակ՝ ողջ ընտրարշավը կարելի է պայմանականորեն բաժանել չորս փուլի, որոնցից յուրաքանչյուրը, ԶԼՍ-ների կեցվածքի առումով, իր յուրահատկություններն ունի:

Առաջին փուլին կարելի է վերագրել 2006 թվականի երկրորդ կեսն ամբողջությամբ: Այն, մասնավորապես, բնութագրվում էր մի շարք կուսակցությունների առաջնորդների ակտիվ բարեգործությամբ, որը լայնորեն լուսաբանվում էր հեռուստաալիքներով: Ասվածն ամենից առաջ վերաբերում է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը (ԲՀԿ) եւ ժողովրդական կուսակցությանը (ԺԿ: Չշփոթել Հայաստանի ժողովրդական կուսակցության՝ ՀԺԿ-ի հետ - *ծան. խմբ.*): 2006 թվականի եւ հատկապես նրա երկրորդ կեսի մյուս բնութագրիչ առանձնահատկությունը հեռուստաալիքներով մի շարք ընդդիմադիր կուսակցությունների եւ քաղաքական գործիչների խիստ դրավորված լուսաբանումն էր: Համապատասխան բողոքներ ինչպես ընդհանրապես հեռուստատեսության, այնպես էլ առանձին ալիքների հասցեին, հնչեցրել են, մասնավորապես, «Օրինաց երկիր» (ՕԵԿ), «Հանրապետություն», «Ժառանգություն», «Ազգային միաբանություն» (ԱՄԿ), Հայոց համազգային շարժում (ՀՀՇ), Հայաստանի ժողովրդական կուսակցություն (ՀԺԿ), Ազգային ժողովրդավարական դաշինք (ԱԺԴ) կուսակցությունների եւ նրանց առաջնորդների կողմից: Ընդ որում, նշված յոթ կուսակցություններից հինգն այս կամ այն ձևով ներկայացված էր Հայաստանի Ազգային ժողովում:

Երկրորդ պայմանական փուլն ընդգրկում է 2007 թվականի սկիզբը՝ ընդհուպ մինչեւ մարտի երրորդ տասնօրյակը: Եթե դատենք այդ ժամանակահատվածի դիտարկման տվյալներից, հեռուստաեթերն արդեն փակ չէր ընդդիմադիր կուսակցությունների մեծ մասի համար: Այդ թվում բավականին լայնորեն լուսաբանվում էին ՕԵԿ-ը, ՀԺԿ-ն, ԱԺԴ-ն, ՀՀՇ-ն, ԱՄԿ-ն: Միաժամանակ, դիտարկման տվյալները հիմք են տալիս խոսելու փետրվար-մարտ ամիսներին հետազոտված յոթ հեռուստաալիքների (Հայաստանի հանրային հեռուստաընկերության առաջին ալիք (Հ1), Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2), «ԱԼՍ», «Արմենիա», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Կենտրոն») կողմից ընդդիմադիր դաշտի երեք քաղաքական կուսակցությունների՝ «Հանրապետության», «Նոր ժամանակների», «Ժառանգության» նկատմամբ որոշակի խտրականության մասին:

Երրորդ փուլին կարելի է վերագրել օրենքով սահմանված նախընտրական քարոզչությանը (սկսվել է ապրիլի 8-ին) նախորդած երկու շաբաթից մի քանի օր ավելի հատվածը: Մարտի վերջին-ապրիլի սկզբին, չնայած, որ ընտրություններին մասնակցելու համար կուսակցությունների գրանցումը դեռ չէր ավարտվել եւ նրանք չէին օգտվում եթերի՝ ՀՀ ընտրական օրենսգրքով երաշխավորված մատչելիությունից, այս կամ այն կուսակցության նկատմամբ ակնհայտ խտրականություն արդեն չէր նկատվում: Ընդդիմությունը, այդ թվում եւ նախորդ փուլում հեռուստաալիքների կողմից անտեսված երեք կուսակցությունները, սկսեցին ավելի հաճախ հիշատակվել նորությունների թողարկումներում, նրանց առաջնորդները հրավիրվում էին հարցազրույցների: Եվ եթե որեւէ կուսակցություն չէր արժանանում հեռարձակվող ԶԼՍ-ների ուշադրությանը, ապա դա պայմանավորված էր նրա ընտրարշավի պասիվությամբ:

Այսուհանդերձ, դիտարկման արդյունքների եւ նախընտրական գործընթացների համադրումը հիմք է տալիս ենթադրելու, որ ինչպես մինչեւ «Զերմացումը», այնպես էլ դրանից հետո ընդդիմադիր կուսակցությունների նկատմամբ համաձայնեցված քաղաքականություն էր վարվում, եւ նրանց տեղեկատվական մեկուսացման թուլացումն էլ տեղի էր ունենում, մասնավորապես, Հայաստանի ընտրությունների նկատմամբ միջազգային հանրության ուշադրության ուժեղացմանը համընթաց: Այսպես, 2007 թվականի փետրվարից սկսվեց ԶԼՍ-ներում քաղաքական կուսակցությունների գործունեության լուսաբանման դիտարկումը, իսկ մարտի երրորդ տասնօրյակից՝ աշխատանքը սկսեց ԵԱՀԿ/ԺՄԻԳ - ի երկարատեւ դիտորդական առաքելությունը:

Վերջապես սույն հաշվետվությունը կազմողները **չորրորդ փուլ** են համարում բուն նախընտրական քարոզչության ժամանակաշրջանը: Այս փուլը բնութագրվեց հետազոտված ՁԼՄ-ների մեծ մասի՝ օրենքի տառին համապատասխան գործելու ձգտումով: Ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական կուսակցություններն այս կամ այն չափով հնարավորություն ստացան ընտրողներին ներկայացնելու իրենց ծրագրերն ու հրատապ խնդիրների վերաբերյալ դիրքորոշումները: Միաժամանակ, այս փուլում էլ է արձանագրվել քաղաքական ուժերի նկատմամբ հեռուստաընկերությունների ուշադրության անհամաչափություն, ինչը պայմանավորված էր ինչպես օբյեկտիվ գործոններով (կուսակցության իրական քաղաքական կշռով, նրա առաջնորդների իրազեկությամբ եւ ՁԼՄ-ների ներկայացուցիչների հետ խնդիրների լայն շրջանակ քննարկելու պատրաստականությամբ, ֆինանսական հնարավորություններով եւ նախընտրական միջոցառումներ կազմակերպելու ակտիվությամբ), այնպես էլ սուբյեկտիվ հանգամանքներով. իշխանությանն այս կամ այն քաղաքական ուժի մոտիկությամբ, որոշակի հեռուստաալիքների եւ նրանց սեփականատերերի վրա ազդելու՝ կուսակցության ունեցած լծակներով:

Ստորեւ ներկայացնում ենք Երեւանի մամուլի ակումբի եւ «ԹԻՄ» հետազոտությունների կենտրոնի իրականացրած դիտարկման երկու փուլերի մասին առավել մանրամասն տեղեկատվությունը: Առաջին փուլն ընդգրկում է, հիմնականում, ընտրություններ հայտարարելու օրվանից մինչեւ նախընտրական քարոզչությունն ընկած ժամանակահատվածը (2007 թ. փետրվար-մարտ), երկրորդը՝ նախընտրական քարոզչության ժամանակաշրջանը (8 ապրիլի - 10 մայիսի 2007 թ.):

ՁԼՄ-ՆԵՐԸ 2007 Թ. ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՐՏԻՆ

Քանի որ ՀՀ օրենսդրությունը հստակորեն չի կարգավորում պաշտոնական քարոզչության ժամանակաշրջանից (2007 թվականի ԱԺ ընտրությունների համար՝ ապրիլի 8-ից մայիսի 10-ը) դուրս քաղաքական քարոզչությունը եւ խմբագրական լուսաբանումը, մոնիտորինգն այս փուլում նպատակ չունի արձանագրելու օրենսդրության խախտումները:

Հետազոտության խնդիրն էր որոշել. 1) որքանով է ընտրություններից առաջ հեռուստալսարանը տեղեկանում քաղաքական սպեկտրի եւ առանձին կուսակցությունների գործունեության մասին, 2) արդյոք բոլոր կուսակցությունների համար հավասար հնարավորություններ են ստեղծվում իրենց քաղաքական հայացքներն ու ծրագրերը ներկայացնելու համար:

Նախընտրական քաղաքական իրավիճակն առավել ակտիվորեն լուսաբանել են «Կենտրոն» եւ «Երկիր Մեդիա» հեռուստաալիքները. նրանք տարբեր կուսակցություններին ամենից շատ եթերաժամանակ են հատկացրել, աչքի են ընկել հասարակական-քաղաքական հաղորդումների ամենամեծ քանակով եւ հարցազրույցի հրավիրվող քաղաքական գործիչների, հասարակայնության այլ ներկայացուցիչների բազմազանությամբ: Հետազոտված յոթ հեռուստաալիքներից քաղաքականությանն ամենից քիչ ուշադրություն դարձրել է «Արմենիան». 2007 թվականի սկզբից այն հրաժարվեց մի շարք հասարակական-քաղաքական, այդ թվում՝ «հյուր ստուդիայում» ժանրի ծրագրերից: Այս հեռուստաալիքը հետազոտված ողջ ժամանակաշրջանի ընթացքում բացառություն արեց միայն պաշտպանության նախարար, Հայաստանի հանրապետական կուսակցության խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանի համար. վերջինիս կեսժամանոց հարցազրույցը հեռարձակվել է փետրվարի 4-ին:

Առանձնահատուկ վիճակում է «ԱԼՄ» հեռուստաալիքը, որը մի կողմից քաղաքականությանն ամենից շատ եթերաժամանակ է հատկացրել, մյուս կողմից՝ դա տեղի է ունեցել ի հաշիվ հեռուստաընկերության սեփականատեր եւ ժողովրդական կուսակցության ղեկավար Տիգրան Կարապետյանի գործունեության եւ դիրքորոշումների նկատմամբ բացառիկ ուշադրության: Ժողովրդական կուսակցությանը բաժին է ընկել «ԱԼՄ»-ի քաղաքական եթերի 80 տոկոսից ավելին:

Այս հեռուստաընկերության կողմից ուշադրության արժանանալու շնորհիվ այլ կուսակցությունների համեմատ ժողովրդական կուսակցությունը հսկայական առավելություն ուներ՝ նրան եւ նրա առաջնորդին 7 հեռուստաալիքներում հատկացված եթերաժամանակի առումով (154 812 վրկ): Ընդ որում, այս համախառն եթերաժամանակի մոտ 98 տոկոսը բաժին է ընկնում հենց «ԱԼՄ»-ին: Բացի այս, ժողովրդական կուսակցությունն այդ հեռուստաալիքի եթերն օգտագործել է տարբեր տեսակի հայտարարությունների համար (23 022 վրկ):

Յոթ հեռուստաալիքների կողմից ուշադրության արժանանալու առումով առաջատարների թվում էին Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ)՝ 78 639 վրկ, «Բարգավաճ Հայաստան»

կուսակցությունը՝ 69 679 վրկ, Հայ յեղափոխական դաշնակցությունը (ՀԶԴ)՝ 61 434 վրկ: Այսինքն՝ կառավարող կոալիցիայի հիմքը հանդիսացող երկու կուսակցությունները, ինչպես նաև՝ բոլորից շուտ մեկնարկի ելած ու առավել ակտիվ ընտրարշավ վարած, եւ դատելով նրա ղեկավար կազմից, նույնպես իշխանություններին մոտ կանգնած ԲՀԿ-ն: Սրանց համեմատ, խորհրդարանական խմբակցություն ունեցող եւ կառավարող կոալիցիայի մաս կազմող կուսակցության համար բավականին հետին դիրքում հայտնվեց Միավորված աշխատանքային կուսակցությունը (ՄԱԿ)՝ 6 859 վրկ: Սակայն վերջինիս այս համեստ ցուցանիշները փոխհատուցվել են «ԱԼՍ» հեռուստաալիքի վճարովի եթերի ակտիվ օգտագործմամբ (այն 4-ից ավելի անգամ գերազանցում է 7 հեռուստաալիքներում այդ կուսակցության խմբագրական լուսաբանումը):

Հ1-ը, որն իր կարգավիճակից բխող հատուկ առաքելություն ունի, կուսակցությունների նկատմամբ ուշադրությունը բաշխել է քաղաքական թատերաբեմում նրանցից յուրաքանչյուրի այսօրվա տեղին (մասնավորապես՝ խորհրդարանում ներկայացվածությանը) մոտ համամասնությամբ: Այս կանոնում, սակայն կա մի բացառություն, ինչի մասին կասվի հետագայում: Հ1-ում առաջատարն էին ՀՀԿ-ն (11 750 վրկ), ՀԶԴ-ն (5 920 վրկ), «Ազգային միաբանություն» կուսակցությունը (5 099 վրկ), ՕԵԿ-ը (4 778 վրկ), ՀԺԿ-ն (4 143 վրկ): Յոթերորդ տեղում է հայտնվել ՄԱԿ-ը՝ 2 755 վրկ: Մի քիչ անսպասելի էր, որ ՄԱԿ-ի եւ առաջին հնգյակի միջեւ տեղ է զբաղեցրել Հայաստանի մարքսիստական կուսակցությունը (3 058 վրկ), որը «քաղաքական ծանր քաշայինների» թվին չի դասվում. սակայն սա պայմանավորված էր «Երկու աստղ» զվարճալի հաղորդաշարին այդ կուսակցության առաջնորդ Դավիթ Հակոբյանի մասնակցությամբ:

ՀՀԿ-ն բոլորից առաջ է անցել նաև հետազոտված բոլոր 7 ալիքների հեռուստանյութերում հայտնվելու հաճախականությամբ. 656 հիշատակում՝ ՀՀԿ-ի 457-ի, ԲՀԿ-ի 252-ի եւ ՕԵԿ-ի 244-ի դիմաց: ՀՀԿ-ն առաջատարն էր ոչ միայն համախառն ցուցանիշներով, այլև յոթ հեռուստաալիքներից չորսի առանձին վերցրած եթերաժամանակների ծավալով. բացի Հ1-ից, նաև Հ2-ում, «Արմենիայում» եւ «Շանթում»: Ընդսմին, դրանցից առաջին երեքում ՀՀԿ-ն ճնշող առավելություն ուներ, ինչը որոշակիորեն պայմանավորված էր ՀՀ վարչապետ Անդրանիկ Սարգսյանի մահվան (2007 թ. մարտի 25-ին) լուսաբանմամբ, եւ նրա անձին, նրա ղեկավարած կուսակցությանը, սգո արարողություններին (որոնց ՀՀԿ-ն եւ նրա ներկայացուցիչները, բնականաբար, ամենաակտիվ մասնակցությունն են ունեցել) ՋԼՄ-ների անդրադարձով:

Մյուս երեք ալիքները, ինչպես ցույց են տալիս դիտարկման արդյունքները, ունեին ընդգծված կուսակցական հակումներ: «ԱԼՍ»-ում, ինչպես նշվեց վերելում, առավել ուշադրության է արժանացել ժողովրդական կուսակցությունը, «Կենտրոնում»՝ ԲՀԿ-ն, «Երկիր Մեդիայում»՝ ՀՀԿ-ն: «ԱԼՍ»-ի տարբերությունը մյուս ալիքներից ընդգծվել է ոչ միայն ժողովրդական կուսակցության ցուցանիշներով, այլև մարտին Հայաստանի երիտասարդական կուսակցության (որը Մարքսիստականի պես չի դասվում «քաղաքական ծանր քաշայինների» թվին) երկրորդ տեղով (7 386 վրկ): Այս կուսակցությանը մեկ ամսվա ընթացքում հատկացված համախառն եթերի մոտ 98 տոկոսը եւ հեռուստանյութերի 60 տոկոսը բաժին է ընկնում հենց «ԱԼՍ»-ին:

Եթե դատենք 2007 թվականի փետրվար-մարտի տվյալներով, իրենց համար հեռուստաեթերի անմատչելիության մասին ընդդիմադիր կուսակցությունների մեծ մասի հայտարարություններն արդեն բավարար հիմքեր չունեին: Առաջատար քառյակին (7 հեռուստաալիքներում տրամադրված համախառն եթերի ծավալով) անմիջապես հետելում են ընդդիմադիր ՀԺԿ-ն (25 104 վրկ), ՕԵԿ-ը (24 396 վրկ), ՀՀԿ-ն (17 159 վրկ), «Ազգային միաբանությունը» (14 344 վրկ): Փետրվարի տվյալներով քաղաքական հեռուստաեթերի առաջատարների թվում է «Սահմանադրական իրավունք» միությունը (ՍԻՄ)՝ 10 739 վրկ, թեպետ ՍԻՄ-ի արդյունքները ոչ այնքան այդ կուսակցության նկատմամբ ուշադրության վկայություն էին, որքան՝ հետեւանք փետրվարին իր բարձրակետին հասած եւ ընտրություններին չմասնակցելու գլխավոր պատճառ դարձած ներկուսակցական սկանդալի (Կենտրոնական ընտրական հանձնաժողովին համապատասխան հայտ չներկայացնելով՝ ՍԻՄ-ը մարտին այլևս դիտարկման չի ենթարկվել):

Միաժամանակ, փետրվարի եւ մարտ ամսվա մեծ մասի տվյալները հիմք են տալիս խոսելու բոլոր հետազոտված հեռուստաալիքների կողմից երեք ընդդիմադիր՝ «Հանրապետություն», «Ժառանգություն» եւ «Նոր ժամանակներ» կուսակցությունների նկատմամբ որոշակի խտրականության մասին: Վերը հիշատակված կուսակցություններից առաջինը ամենախոշոր ընդդիմադիր դաշինքի՝ «Արդարության» եւ նրա խորհրդարանական խմբակցության երկու հիմնական ստեղծողներից է, նրա կազմում կան ոչ հեռու անցյալի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ: Երկրորդը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության առաջին արտգործնախարարը, որը,

Գելափի ինստիտուտի 2006 թվականի հարցումներով, բավականին բարձր քաղաքական ռեյտինգ ունի: Երրորդի առաջնորդը 2003 թվականի ընտրություններում նախագահի թեկնածու էր եւ այդ ժամանակ ընտրողների ձայների թվով գրավեց չորրորդ տեղը: Ընդսմին, այս երեք կուսակցությունները վերջին տարիներին մնում էին գործող քաղաքական կառույցներ: Այլ կերպ ասած, ընտրությունների նախօրյակին նրանց ուշադրության արժանացնելու բավարար հիմքեր կային:

Սակայն հետագոտված 7 ալիքները (սա ամբողջությամբ վերաբերում է նաեւ Հ1-ին) նշված ժամանակամիջոցում այդ երեք կուսակցություններին կամ զրոյական կամ շատ թույլ ուշադրության են արժանացրել: Նրանց գործունեությանը կամ չեն անդրադարձել, կամ անդրադարձել են խիստ հազվադեպ եւ նվազագույն ծավալներով, գործնականում չեն լուսաբանվել նրանց միջոցառումները, մանուկի ասուլիսները, այդ կուսակցությունների ներկայացուցիչներից ոչ մի անգամ հարցազրույցներ չեն վերցվել: Նրանց նկատմամբ վերաբերմունքը սկսեց փոխվել մարտի երրորդ տասնօրյակից՝ նրանց խնդիրների մասին բարձրաձայնումներից, այդ թվում՝ ՁԼՄ-ների դիտարկման միջանկյալ հաշվետվության հրապարակումից, ինչպես նաեւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի երկարատեւ դիտորդական առաքելության աշխատանքը սկսվելուց հետո:

Փետրվար-մարտին վճարովի եթերից ՄԱԿ-ից (ինչպես վերը նշվեց՝ «ԱԼՄ»-ում) բացի ակտիվորեն օգտվել է «Դաշինք» կուսակցությունը (14 593 վրկ «Երկիր Մեդիայով»): ՄԱԿ-ը, այսպիսով, միակ կուսակցությունն էր, որն ամսեամիս հետեւողականորեն դիմում էր ՁԼՄ-ների միջոցով քաղաքական ազդեցության այս բաց ձեւին: «Դաշինքի» դեպքում սա միանգամյա նախաձեռնություն էր՝ կուսակցության առաջնորդ Սամվել Բաբայանի մասին ֆիլմի ցուցադրում: Համապատասխան ֆինանսական եւ քաղաքական հնարավորություններ ունեցող մյուս կուսակցությունները, պետք է ենթադրել, մինչեւ նախընտրական քարոզչության սկիզբը գերադասում էին հեռուստատեսերն իրենց նպատակներին օգտագործելու գաղտնի ձեւերը:

(2007 թվականի փետրվար-մարտին ՁԼՄ-ների դիտարկման քանակական ցուցանիշները ներկայացված են «Աղյուսակներ եւ գրաֆիկներ» բաժնում):

ՁԼՄ-ՆԵՐԸ ՆԱԽՆՏՆՈՒԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ (8 ԱՊՐԻԼԻ - 10 ՄԱՅԻՍԻ 2007 թ.)

ՀՀ օրենսդրությամբ սահմանված «նախընտրական քարոզչության» ժամանակաշրջանում դիտարկման խումբը արձանագրել է քաղաքական բազմակարծության առավել բարձր մակարդակ, քան դրան նախորդած ամիսներին: Ընտրություններին մասնակցող եւ քարոզարշավում համապատասխան ակտիվություն ցուցաբերող կուսակցությունների մեծ մասը հնարավորություն ունեցավ հասարակությանը ծանոթացնելու իր ծրագրերին, մոտեցումներին, կարծիքներին: Կուսակցություններից ոչ մեկը հանրային ռադիոյում եւ հանրային հեռուստատեսությունում օրենքով իրեն հատկացված վճարովի եւ անվճար եթերաժամանակն օգտագործելու որեւէ խոչընդոտի չի հանդիպել:

Նախընտրական քարոզչության ժամանակաշրջանը կարելի է բաժանել երկու մոտավորապես հավասար կեսերի: Առաջինը բնութագրվում էր ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին/դաշինքին ուշադրության արժանացնելու, նշանային բնութագրիչ հիշատակումներից խուսափելու՝ հեռուստարձկերությունների մեծ մասի ձգտումով: Եվ եթե որեւէ քաղաքական ուժ հեռարձակվող ՁԼՄ-ների ուշադրությունից դուրս էր մնում, ապա դա պայմանավորված էր տվյալ կուսակցության պասիվությամբ: Ասվածն առաջին հերթին վերաբերում է «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցությանը, որը նախընտրական քարոզչության առաջին օրերին չէր օգտվում անգամ հանրային հեռուստատեսության եւ ռադիոյի անվճար եթերից:

Իսկ երկրորդ կեսում՝ քվեարկության օրվա մոտենալուն եւ քաղաքական մրցակցության սրմանը զուգահեռ, նշանային բնութագրիչ հիշատակումների բաժինը էականորեն աճեց: Ընդսմին, հեռուստարձկերությունների վրա ազդելու հայտնի լծակներ ունեցող երեք կուսակցությունների՝ ՀՀԿ-ի, ՀՀԳ-ի եւ ԲՀԿ-ի դեպքում հիշատակումների հաշվեկշիռն ընդգծված դրական էր, իսկ ընդդիմադիր ՕԵԿ-ի դեպքում՝ խիստ բացասական: Այլ երեք ընդդիմադիր կուսակցություն/դաշինք՝ «Հանրապետությունը», «Նոր ժամանակները» եւ «Իմպիչմենտը» տասնյակ անգամներ ավելի քիչ լուսաբանում են ստացել, քան ՀՀԿ-ն, ՀՀԳ-ն եւ ԲՀԿ-ն, չնայած իրենց ակտիվ քարոզչական արշավին: Ինչպես եւ ՕԵԿ-ը, այս քաղաքական ուժերն էլ նշանային բնութագրիչ հիշատակումների բացասական հաշվեկշիռ են ունեցել: Եվ եթե ՕԵԿ-ի դեպքում այդ հաշվեկշիռը պայմանավորված էր բրիտանացի

դիվանագետի հետ կուսակցության առաջնորդի գրույցի գաղտնի ձայնագրության հրապարակման շուրջ սկանդալով, ապա մյուս եռակը բացասական լուսաբանում է ստացել, ամենից առաջ, մայիսի 9-ի նրանց հանրահավաքից հետո ոստիկանության հետ տեղի ունեցած բախման առնչությամբ:

Ինչպես իրենց հատկացված եթերաժամանակով, հեռուստանյութերում հիշատակումների թվով, այնպես էլ «հյուր ստուդիայում» ձեռագրված հաղորդումների հրավիրվելու քանակով առաջատար երեք կուսակցություններին առավելություն տալը հատկապես ակնհայտ դարձավ նախընտրական քարոզչության վերջին օրը՝ մայիսի 10-ին: Այն ժամանակ, երբ առանձին հեռուստաալիքներում ընտրություններին մասնակցող կուսակցությունների կեսն այդ օրն ընդհանրապես որեւէ ուշադրության չարժանացավ, ՀՀ-ն ստացավ 13 788 վրկ լուսաբանում, ԲՀ-ն՝ 9 675 վրկ եւ ՀՅԴ-ն՝ 9 044 վրկ: Այսինքն, վերջին օրը այս կուսակցություններին մեկուկես-երկու անգամ ավելի շատ եթերաժամանակ հատկացվեց, քան նախընտրական քարոզչության «միջին վիճակագրական» օրը: Մայիսի 10-ի տվյալով չորրորդ տեղում հայտնվեց ՄԱԿ-ը՝ 4 558 վրկ այն իր «միջին վիճակագրական» ցուցանիշը գերազանցեց ավելի քան 4 անգամ: Այս նույն չորս կուսակցություններն էլ քարոզչության վերջին օրը մյուսներից ավելի շատ հնարավորություն ստացան հետազոտվող հեռարձակվող ՁԼՄ-ներում մասնակցելու «հյուր ստուդիայում» ձեռագրված հաղորդումներին: ԲՀ-ն եւ ՀՀ-ն 5-ական, ՀՅԴ-ն՝ 3, ՄԱԿ-ը՝ 2 անգամ: Նշենք, որ «վերջին տպավորության» էֆեկտից օգտվելու հնարավորություն ստացած այս կուսակցություններին խորհրդարանում տեսնելու ցանկություն հայտնեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը՝ հայկական երեք հեռուստաալիքներին տված հարցազրույցում, որը հեռարձակվեց նույն օրը՝ մայիսի 10-ին:

Ընդհանուր առմամբ, նախընտրական արշավի 33 օրերի ընթացքում հեռուստաընկերությունների երեկոյան եթերում ՀՀ-ի համախառն ցուցանիշը կազմեց 279 637 վրկ եւ 2 447 հիշատակում, ՀՅԴ-ինը՝ 217 885 վրկ եւ 1 220 հիշատակում, ԲՀ-ինը՝ 175 947 վրկ եւ 981 հիշատակում: Նրանցից նշանակալիորեն հետ են մնում ՕԵԿ-ը (82 842 վրկ եւ 751 հիշատակում) եւ ժողովրդական կուսակցությունը՝ 78 030 վրկ եւ 277 հիշատակում), որոնք էլ իրենց հերթին նկատելիորեն առաջ են հաջորդ խմբից: Սակայն ԺԿ-ն իր եթերաժամանակի 92%-ը ստացել է «ԱԼՄ» հեռուստաալիքում, որի սեփականատերը այդ կուսակցության առաջնորդ Տիգրան Կարապետյանն է: «Հյուր ստուդիայում» ձեռագրված հաղորդումներին հրավիրվելու քանակով առաջատարը գործնականում նույն կուսակցություններն են, միայն թե մի փոքր այլ հերթականությամբ: ՀՀ-ն՝ 74 անգամ, ԲՀ-ն՝ 73, ՀՅԴ-ն՝ 66: Նրանցից զգալիորեն հետ է չորրորդ տեղում հայտնված ՕԵԿ-ը՝ 31 անգամ:

Անհրաժեշտ է նշել, որ նախընտրական քարոզչության սկզբից՝ ապրիլի 8-ից, ի տարբերություն փետրվար-մարտի դիտարկման, դիտարկողները կուսակցությունների ընտրական ցուցակներում առաջին երեք տեղերը զբաղեցնող քաղաքական գործիչների (եթե անգամ նրանք ներկայացվում են իբրեւ իրենց ոչ կուսակցական պաշտոնական կամ մասնագիտական պարտականությունները կատարողներ) ցանկացած հայտնվելը ՁԼՄ-ներում արձանագրում էին որպես համապատասխան կուսակցության նկատմամբ ուշադրություն: Սա պայմանավորված էր, նախ՝ համընդհանուր չգրված այն նորմով, որ ընտրություններում թեկնածու հանդիսացող անձինք ընտրարշավի ընթացքում պետք է սահմանափակեն իրենց հրապարակային ակտիվությունն իբրեւ պաշտոնյաներ (հակառակ դեպքում այդ ակտիվությունը կարող է դիտարկվել վարչական ռեսուրսի օգտագործում), եւ երկրորդ՝ նրանով, որ ընտրությունների ժամանակ քաղաքական առաջնորդները լսարանի կողմից նույնացվում են իրենց ղեկավարած կուսակցությունների հետ, անկախ նրանից՝ հիշատակվում է նրանց կուսակցական պատկանելությունը, թե՞ ոչ:

Հ1-ը եւ Հանրային ռադիոն կուսակցությունների/դաշինքի լուսաբանման համեմատաբար ավելի հավասարակշռություն են ցուցաբերել: Սա վերաբերում է ամենից առաջ մրցակցող քաղաքական ուժերի միջեւ ուշադրության բաշխմանը, իսկ ռադիոյի դեպքում՝ նաեւ նշանային բնութագրիչ հիշատակումների նվազագույն թվին: Երկու հանրային հեռարձակողները ձգտում էին պահպանել օրենքի տառը եւ հիմնականում լուծեցին այդ խնդիրը (ռադիոյի դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել, որ հետազոտվող եթերաժամանակը ներառում է «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության մեկժամյա ծրագիրը, եւ դա որոշակի առումով նպաստում էր հավասարակշիռ լուսաբանման ընդհանուր պատկերի ձեւավորմանը): Միաժամանակ, ընդդիմադիր կուսակցությունների նախընտրական միջոցառումներին վերաբերող առանձին հեռուստանյութերում հեզմանքի տարրեր կային, ինչը չի արտացոլվել դիտարկման քանակային ցուցանիշներում, թեպետ եւ ազդում էր լսարանի կողմից տեղեկատվության ընկալման վրա:

Նախընտրական քարոզչության շրջանում քաղաքական սպեկտրի առավել լայն ընդգրկում են ապահովել «Երկիր Մեդիան» եւ «Կենտրոնը»: Երկուսն էլ, «ԱԼՄ»-ի եւ Հ2-ի հետ կուսակցությունների խմբագրական լուսաբանման ծավալով առաջատարների շարքերում են:

«Երկիր Մեդիան» մեծ առավելություն է տվել ՀՀ-ին ինչպես եթերաժամանակի ծավալով (89 425 վրկ - համարյա 7 անգամ ավելի, քան երկրորդ տեղում գտնվող ՀՀ-ին հատկացվածը) ու հիշատակումների հաճախությամբ (526 - ՀՀ-ի 264 դիմաց), այնպես էլ «հյուր ստուդիայում» ձեւաչափով հրավիրումների քանակով (11 - ՕԵԿ-ի եւ ԲՀԿ-ի 6-ականի դիմաց): Ընտրությունների մասնակցող մյուս կուսակցություններին «Երկիր Մեդիան» համարյա հավասարաչափ վերաբերմունք է ցուցաբերել: Սա արտահայտվել է բոլոր ցուցանիշներում, այդ թվում՝ «ստուդիայում հյուրերի» ցուցակում (բոլոր հեռուստաալիքներում առավել մեծ ընդգրկումը): միայն 5 կուսակցություն չի մասնակցել նման ձեւաչափի հաղորդումներին, թեպետ նրանք էլ համապատասխան հրավերներ ստացել են:

«Կենտրոնը», նախընտրական քարոզչությանը նախորդող ժամանակաշրջանի համեմատ, մի քիչ նեղացրել է ուշադրության արժանացրած կուսակցությունների շրջանակը: Սա, մասնավորապես, արտահայտվել է ամենից առաջ «ստուդիայում հյուրերի» ցուցակում. այսպես, եթե մարտ ամսին այս ձեւաչափի՝ քաղաքական գործիչների մասնակցությամբ 32 հաղորդումներում 13 կուսակցությունների ներկայացուցիչներ են եղել, ապա ապրիլի 8-ից մայիսի 10-ի 73 հաղորդումներում՝ 9 կուսակցության:

Ընտրություններն առավել ակտիվ լուսաբանած մյուս երկու հեռուստաալիքներում կուսակցությունների նկատմամբ ուշադրությունն ավելի անհավասարաչափ է բաշխվել, քան «Երկիր Մեդիայում» եւ «Կենտրոնում»: Սա ամենից առաջ վերաբերում է «ԱԼՄ»-ին, որտեղ «կուսակցական» եթերի 68%-ը բաժին է ընկել ժողովրդական կուսակցությանը եւ ՀՀ-ին: ՀՀ-ում «կուսակցական» եթերի 83%-ը տրվել է չորս կուսակցությունների՝ ՀՀ-ին, ՀՀ-ին, Միացյալ ազատական ազգային կուսակցությանը (ՄԻԱԿ) եւ ԲՀԿ-ին: Հարկ է ընդգծել, որ ՄԻԱԿ-ի եթերաժամանակը մասնակիորեն գոյացել է այդ կուսակցության 2-րդ համարի (մինչեւ մայիսի 2-ը)՝ Գարիկ Մարտիրոսյանի մասնակցությամբ զվարճալի շոուի հեռարձակումներով, որոնցում, բացի այդ, իբրեւ ֆոն ՄԻԱԿ-ի գովազդն էր:

Հետագուտված մայրաքաղաքային հեռուստաալիքներից ընտրություններին համարյա միատեսակ ուշադրություն եւ նախընտրական արշավի լուսաբանման միանման հավասարակշռություն են ցուցաբերել «Շանթը», «ԹԻ ՎԻ 5»-ը եւ «ԱՐ»-ը, ընդամենը, առաջին երկուսը առավել հաճախ, քան վերջինը, դիմել են «հյուր ստուդիայում» ժամրին: Բացի այդ, «ԱՐ»-ում նշանակալի էր (5 անգամից ավելի) եթերաժամանակի ծավալով առաջին (ՀՀ) եւ երկրորդ (ՀՀ) տեղերի միջեւ տարբերությունը:

«Արմենիան» եւ «Արմենյուզը» հետագուտված ալիքներից նախընտրական արշավի լուսաբանման ամենից քիչ ակտիվությունն են դրսևորել: Եվ եթե «Արմենիայի» պարագայում դա կարող է բացատրվել այդ հեռուստաընկերության նոր պրոֆիլով. 2007 թվականի սկզբից այն հրաժարվեց մի շարք տեղեկատվական-քաղաքական ծրագրերից՝ հոգուտ ժամանցայինների, ապա «Արմենյուզում» կուսակցությունների լուսաբանման փոքր ծավալը չի տեղավորվում շուրջօրյա լրատվական ալիքի (ինչպիսին այն է) մասին պատկերացումներում: Փաստորեն «Արմենյուզը» քիչ է նպաստել ընտրությունների մասին լսարանի տեղեկացվածությանը, հատկապես եթե հաշվի առնենք, որ նրա «կուսակցական» եթերի 17 102 վայրկյանը (տասն անգամ քիչ, քան քաղաքականապես առավել ակտիվ հեռուստաալիքներում) կազմել են բազմիցս կրկնված նյութերը:

Հետագուտված 13 հեռուստաալիքներից 8-ում ընտրարշավի ժամանակ երեկոյան եթերում ամբողջովին բացակայում էր քաղաքական գովազդը, եւս երեքում այն կրում էր ոչ սիստեմատիկ բնույթ («Երկիր Մեդիայում» եւ «Արմենիայում» դրանից օգտվել են 8-ական կուսակցություններ, իսկ ԱԼՄ-ում՝ 6): Պատճառները մի դեպքում քաղաքական գովազդի բարձր գներն էին, այլ դեպքերում՝ ընդհանրապես քաղաքական քարոզչության համար եթեր չտրամադրելու մասին հեռուստաընկերությունների նախապես ընդունած որոշումը: Այսպիսով, միայն հանրային հեռուստաալիքները (Հ1-ը եւ «Շիրակը») կանոնավոր՝ ինչպես նախատեսված է օրենքով, կուսակցություններին եթեր էին տրամադրում քարոզչության համար: Այս հանգամանքը նույնպես ազդել է ընտրողների տեղեկացվածության վրա եւ հատկապես՝ Հայաստանի մարզերում, որտեղ չկա հեռուստաալիքների այնպիսի ընտրություն եւ ընտրությունների մասին նյութերի այնպիսի ծավալ, ինչպես մայրաքաղաքում:

Նույնիսկ Հայաստանի մեծությամբ երկրորդ քաղաքի՝ Գյումրու (որտեղ հնարավորություն կա դիտելու չորս համապետական ալիք, ու նաեւ չորս տեղական ալիքներ են հեռարձակվում) ընտրողները տեղեկացվածությամբ նշանակալիորեն զիջում էին իրենց մայրաքաղաքային հայրենակիցներին: Գյումրիի միայն մի հեռուստաալիք էր («Շիրակ») իր եթերում քաղաքական գովազդ տեղադրում, իսկ

հետազոտված բոլոր երեք հեռուստատալիքների («Շիրակ», «Ցայգ» եւ «ԳԱԼԱ») հիմնական ցուցանիշները վկայում են ընտրություններին մասնակցող կուսակցություններին ծանոթացնելու նրանց բավականին սահմանափակ հնարավորությունների մասին: Էլ ավելի քիչ էին տեղեկացված այլ մարզերի (որտեղ մատչելի են միայն 2-3 համապետական եւ մեկ տեղական հեռուստատալիք) բնակիչները: Սա, ամենից առաջ, վերաբերում է համամասնական ընտրակարգով կուսակցությունների/դաշինքի մասին տեղեկացվածությանը, քանի որ վերջիններիս տեղական ՁԼՄ-ներն ավելի քիչ ուշադրության են արժանացրել, քան մեծամասնական թեկնածուներին:

Հետազոտված չորս թերթերում, ինչպես որ հեռուստատալիքներում, արձանագրվել է ՀՀԿ-ի մասին նյութերի գերակշռություն, նրան հաջորդում են ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն եւ ՕԵԿ-ը: Սակայն նշանային բնութագրիչ հիշատակումներով, ի տարբերություն հեռուստատալիքների, ոչ միայն ՕԵԿ-ը, այլևս մյուս երեք առաջատար կուսակցությունները թերթերում բացասական հաշվեկշիռ ունեն: Նման հաշվեկշիռը ձեւավորվել է «Հայկական ժամանակ» եւ «Առավոտ» մասնավոր թերթերի հաշվին, իսկ «Հայաստանի Հանրապետություն» եւ «Ռեսպուբլիկա Արմենիա» պաշտոնաթերթերում՝ առաջատարների եռյակի հիշատակումների հաշվեկշիռը դրական է կամ չեզոք:

«Հայկական ժամանակը» դարձավ «Իմպիչմենտ» դաշինքի, «Հանրապետություն» եւ «Նոր ժամանակներ» կուսակցությունների նախընտրական քարոզչության գլխավոր ամբիոններից մեկը: Բացի դրական խմբագրական լուսաբանումից, այս քաղաքական ուժերին նաեւ թերթային տարածք է հատկացվել անվճար նախընտրական հայտարարությունների համար:

«Առավոտը» հետազոտված թերթերից միակն էր, որի տարածքները կուսակցությունները (մյուսներից շատ «Ժառանգությունը») օգտագործել են վճարովի գովազդի համար:

Պաշտոնական մարմինները, որոնք կոչված են հետեւելու ՁԼՄ-ներում ընտրական օրենսդրության պահպանմանը, միայն մի խախտում են արձանագրել. դա վերաբերում էր այն դրվագին, երբ Հայաստանի մարքսիստական կուսակցությունը, ի խախտումն ԿԸՀ N84-Ա որոշման 13-րդ կետի, ՀՀԿ-ում իրեն հատկացված անվճար եթերաժամանակը «զիջել էր» այլ անձի:

Սիւստանակ, այլ՝ ընտրական օրենսդրության պահպանման տեսակետից որոշակի խնդիրներ հարուցող դրվագների վերաբերյալ որեւէ արձագանք չեղավ: Մասնավորապես, հետազոտված ժամանակաշրջանում քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող, պետական, քաղաքացիական, տեղական ինքնակառավարման մարմինների ծառայող հանդիսացող անձանց մի ամբողջ շարք այցելությունների եւ հանդիպումների, նախընտրական միջոցառումների մասնակցության հեռուստա եւ ռադիոլուսաբանումը կարող էր գնահատվել իբրեւ ՀՀ Ընտրական օրենսգրքի 22 պրիմ հոդվածի խախտում: Այդ դրվագները առնչվում են, ամենից առաջ, ՀՀԿ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ միջոցառումների լուսաբանմանը:

Եթերում ընտրություններին մասնակցող կուսակցությունների քարոզչական երգերի կատարումն առանց «քաղաքական գովազդ» լուսագրի եւ համապատասխան վճարի, նույնպես կարող էր մեկնաբանվել իբրեւ խախտում «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի, որն արգելում է հեռարձակել քարոզչական նյութեր «տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով»:

Հարցեր էին հարուցում նաեւ առեւտրային գովազդի բլոկներում նախընտրական միջոցառումների մասին հայտարարությունները, առավել եւս այն հեռուստատալիքներով, որոնք օրենքով սահմանված ժամկետում չէին հայտարարել քաղաքական գովազդի իրենց սակագինը, եւ հետեւաբար իրավունք չունեին նման գովազդ տեղակայել իրենց եթերում: Մինչդեռ նախընտրական միջոցառումների մասին հայտարարությունները պետք է գնահատել հենց իբրեւ քաղաքական, այլ ոչ թե առեւտրային գովազդ:

Վերջապես, Հայաստանի ժողովրդական կուսակցության բացասական հիշատակումը «Օրեցօր» լրատվական ծրագրում (13 ապրիլի), կարող էր գնահատվել իբրեւ «ԱԼՄ»-ի կողմից օրենքի խախտում, քանի որ հեղինակային տեքստում հիշյալ կուսակցության հասցեին գնահատականներ էին հնչում, ինչը արգելված է ՀՀ Ընտրական օրենսգրքի նոր դրույթներով (ՀՀ ԸՕ 20-րդ հոդված):

(2007 թվականի ապրիլի 8-ից մայիսի 10-ի ՁԼՄ-ների դիտարկման քանակական ցուցանիշները ներկայացված են «Աղյուսակներ եւ գրաֆիկներ» բաժնում):

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի ՁԼՄ-ների վերջին տարիների իրավիճակի վերլուծությունը եւ ՀՀ Ազգային ժողովի 2007 թվականի ընտրությունների լուսաբանման դիտարկումը երեւանի մամուլի ակումբին եւ «ԹԻՄ» հետազոտությունների կենտրոնին հիմք են տալիս կատարելու մի շարք եզրակացություններ եւ առաջարկություններ, որոնք կարող են նպաստել երկրում ընտրարշավների (եւ ամենից առաջ 2008 թվականի նախագահականի) լրատվական բաղկացուցիչը միջազգային չափանիշներին մոտեցնելուն:

Նախ՝ որոշակի փոփոխություններ են անհրաժեշտ ընտրական օրենսդրության այն դրույթներում, որոնք վերաբերում են ՁԼՄ-ների գործունեությանը: Մասնավորապես, հարկ է առավել հստակ սահմանել, թե հեռարձակվող ՁԼՄ-ների որ նյութերը պետք է ուղեկցվեն «քաղաքական գովազդ» կամ «նախընտրական քարոզչական հաղորդում» լուսագրերով, եւ համապատասխանաբար՝ որ հաղորդումների համար հեռուստառադիոընկերությունները պետք է նախապես, օրենքով սահմանված ժամկետում, սակագներ հայտարարեն: Այս հարցում հստակության բացակայությունը հանգեցնում է իրավական լուծում չունեցող տարընթերցումների եւ բանավեճերի:

Երկրորդ՝ օրենսդրությունը պետք է հստակորեն սահմանի «ընտրությունների քարոզչությանը նախորդող ժամանակաշրջան» հասկացությունը: Ըստ օրենքի, այդ ժամանակաշրջանում քաղաքական քարոզչությունը, այդ թվում ՁԼՄ-ներում քաղաքական գովազդը, արգելված է, եւ համապատասխան դրույթների ընկալման տրամաբանությունը հուշում է, որ այն ընդգրկում է ընտրություններ նշանակելու օրվանից մինչեւ «նախընտրական քարոզչության» սկիզբն ընկած ժամանակահատվածը: Սակայն միանշանակ ձեւակերպման բացակայությունը հանգեցնում է նրան, որ ընտրական օրենսդրության պահպանման համար պատասխանատու մարմինների՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) եւ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) մեկնաբանություններում քաղաքական գովազդի համար արգելված ժամանակաշրջան ընդհանրապես գոյություն չունի: Սա, իր հերթին, պատճառներից մեկն է դառնում, որ նախընտրական քարոզչությանն անմիջականորեն նախորդող ամիսներին, ՁԼՄ-ների վրա ազդեցության լծակներ ունեցող քաղաքական ուժերը գործնականում անսահմանափակ օգտվում են եթերից, իսկ նրանց մրցակիցներն անբողջովին զրկված են դրանից:

Երրորդ՝ օրենսդրության պահպանման համար պատասխանատու վերոհիշյալ մարմինները չարձագանքեցին այն դեպքերի գերակշիռ մեծամասնությանը, երբ քաղաքական կուսակցությունները, հասարակայնության ներկայացուցիչները, փորձագետները ահազանգում էին օրենքի խախտումների մասին: Ինչպես նշվեց վերելում, Ընտրական օրենսգրքի, ինչպես նաեւ ՁԼՄ օրենսդրության ոչ բոլոր դրույթներն են հստակ ձեւակերպված: Այսուհանդերձ, օրենքի պահպանման առումով խնդիրներ առաջացնող բոլոր դեպքերի քննարկումը ԿԸՀ-ում եւ ՀՌԱՀ-ում, հնարավորություն կտար մեծացնելու ընտրական օրենսդրության կիրառման արդյունավետությունը եւ ավելի հստակ պատկերացնելու դրա կատարելագործման ուղիները:

Չորրորդ՝ նախընտրական ժամանակաշրջանում ՁԼՄ-ների գործունեության հետազոտության ընթացքում ընդգծված կերպով երեւան եկան այն խնդիրները, որոնք առնչվում են տեղեկատվական ոլորտի ինքնակարգավորման մեխանիզմների զարգացած չլինելուն: Ընտրությունների լուսաբանման վրա ազդեց, մասնավորապես, նախընտրական միջոցառումների, նախընտրական ժամանակաշրջանում պաշտոնական հանդիպումների, ԱԺ պատգամավորի թեկնածու պաշտոնատար անձանց գործունեության մասին նյութեր պատրաստելու, խորհրդարանում տեղ ստանալուն հավականող ՁԼՄ սեփականատերերի, ղեկավարների եւ լրագրողների համար եթերի մատչելիության վերաբերյալ հեռուստաընկերություններում մշակված կանոնների բացակայությունը: Ոչ մի հեռուստաընկերություն քաղաքական գործիչների մասնակցությամբ զվարճալի հեռուստաշոունների արտադրության եւ ցուցադրման սահմանափակում չմտցրեց: Արդյունքում՝ բավականին հաճախ խախտվում էր բոլոր թեկնածուների եւ կուսակցությունների համար հավասար հնարավորությունների սկզբունքը, առաջանում էին իրավիճակներ, երբ լուրջ հիմքեր կային խոսելու վարչական ռեսուրսի օգտագործման մասին: Անցած ընտրությունների փորձը հերթական անգամ հրատապ է դարձնում ՁԼՄ-ների ինքնակարգավորման մարմինների ձեւավորման եւ ամրապնդման խնդիրը: Սակայն այդ գործընթացի բարդությունն ու երկարատեւությունը (այն դեպքում, երբ հերթական համապետական ընտրությունները սպասվում են մեկ տարուց էլ քիչ ժամանակ հետո) հաշվի առնելով, իմաստ ունի քննարկել վերոհիշյալ խնդիրներին առնչվող որոշակի կանոններ օրենսդրության մակարդակով ներդնելու հնարավորությունը:

(Մեկից չորրորդ կետերում հիշատակված խնդիրների մասին տես նաեւ Ընտրությունների ժամանակաշրջանում ՁԼՄ-ների գործունեությունը կարգավորող օրենսդրության մասին տեղեկանքում):

Ֆինգերորդ՝ հեռարձակվող ՁԼՄ-ներում բազմակարծության որոշակի աստիճանը, որ նկատվել է ընտրությունների ընթացքում, չփոխհատուցեց հեռուստալրագրողների ազատության վերջին տարիների էական սահմանափակումները: Իբրև հետեւանք՝ այն քաղաքական ուժերը, ուն համար եթերը ամբողջությամբ կամ մասնակիորեն փակ էր, չկարողացան բավարար չափով հասկանալի դառնալ ընտրողների համար: Առավել եւս, որ ընտրություններին մասնակցող կուսակցությունների մեծ թիվը (25) խորացնում էր նրանց ծրագրերը, դիրքորոշումները, կարծիքները ներկայացնելու համար անհրաժեշտ ժամանակի դեֆիցիտի խնդիրը: Եվ քաղաքացիները իրապես գիտակցված ընտրություն կատարելու համար անհրաժեշտ հնարավորություններ չունեին: Ինչպես ցույց տվեցին ընտրություններին նախորդած երեք ամիսները՝ քաղաքական գործընթացների հավասարակշռված լուսաբանումն ապահովող առավել ազդեցիկ գործոնը օրինականության եւ հասարակական շահի դիրքերից դրանց հետեւելն է: Հենց դիտարկում իրականացնելն ու միջազգային դիտորդական առաքելությունների գործունեությունը, համապետական մակարդակով համապատասխան արդյունավետ պաշտոնական լծակների բացակայության պայմաններում, պայմանավորեցին հեռարձակվող ՁԼՄ-ների գործունեության դրական փոփոխությունները: Ընդամին, այդ դիտարկումը ոչ մի կերպ չէր սահմանափակում խմբագրական անկախությունը: Ավելին, այն որոշ չափով լրագրողներին ազատում էր իշխանական կառույցների եւ նրանց նկատմամբ լոյալ ՁԼՄ սեփականատերերի գաղտնի մտցվող քաղաքական սահմանափակումներից: Այս իմաստով հետընտրական ժամանակաշրջանը հղի է խիստ հսկողության եւ դոգավորված տեղեկատվության նախկին պրակտիկային վերադառնալու վտանգով: Եվ հենց ընտրությունների միջեւ ընկած երկարատեւ ժամանակաշրջաններն են որոշում ՁԼՄ-ների զարգացման միտումները, այլ ոչ թե ընտրությունների երկու-երեք ամիսները: Այս պատճառով, հեռուստաընկերություններում քաղաքական բազմակարծության սկզբունքները պահպանելը այս կամ այն ձեւով դիտարկելը, որ կիրականացվի միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ, որոնց հետ Հայաստանը կապված է ժողովրդավարության եւ մարդու իրավունքների վերաբերյալ պարտավորություններով, հրատապ է մնում նաեւ ընտրությունների միջեւ ընկած ժամանակահատվածում:

Վեցերորդ՝ ընտրողների նախընտրական քաղաքական տեղեկացվածության վրա ազդեց նաեւ երկրի կարեւորագույն խնդիրների վերաբերյալ տարբեր տեսակետներ ներկայացնող լրատվական, վերլուծական, բանավիճային հաղորդումների թվի եւ ծավալի կրճատումը հեռարձակվող ՁԼՄ-ներում: Ոչ միայն ընդդիմադիր քաղաքական գործիչները, այլեւ անկախ դատողություններով, իրականության նկատմամբ քննադատական հայացքով աչքի ընկնող լրագրողները, քաղաքական վերլուծաբանները, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները եթերի սահմանափակ հնարավորություններ ունեին: Սա նույնպես խոչընդոտում էր ընտրողներին՝ կողմնորոշվելու քաղաքական գաղափարների հոսքում, տարանջատելու պոպուլիստական եւ իրական խոստումները: Տեղեկատվական-քաղաքական հաղորդումների պակասի խնդիրը նշանակալի չափով առնչվում է նաեւ հանրային հեռարձակմանը:

Յոթերորդ՝ ինչպես եւ 2003 թվականի նախագահական ընտրությունների ժամանակաշրջանում, հեռուստաեթերում քաղաքական քարոզչության սահմանափակ հնարավորությունները պայմանավորված էին քաղաքական գովազդի բարձր գներով, որոնք հաճախ ավելի բարձր էին, քան առետրային գովազդինը: Իսկ մի շարք հեռուստաընկերություններ (ինչպես մայրաքաղաքային, այնպես էլ տեղական) ընդհանրապես քաղաքական գովազդի սակագներ չհայտարարեցին, ինչպես օրենքն է պահանջում, դրանով իսկ կամավոր (°) հրաժարվեցին այդպիսիք տեղադրելուց: Այս միտումը հատկապես բացասաբար է անդրադառնում ընդդիմադիր կուսակցությունների վրա, քանի որ իշխանամետները ունեն հեռուստաեթերն օգտագործելու այլընտրանքային հնարավորություններ: Ինչպես վերը (հինգերորդ եւ վեցերորդ կետերում) ներկայացված երկու հանգամանքները, սա եւս հիմք է տալիս խոսելու ողջ հեռարձակման ոլորտում համաձայնեցված կամ եթե կուզեք՝ կառավարվող քաղաքականության մասին:

Ութերորդ՝ Հայաստանի մարզերի ընտրողները տեղեկացվածության առումով ավելի ոչ շահեկան վիճակում էին, քան իրենց մայրաքաղաքային հայրենակիցները: Եթե երեւանցիները տեղեկություններ են քաղում նվազագույնը 15 հայկական հեռուստաալիքներից, ապա որոշ տարածաշրջանների բնակչությունը՝ ընդամենը՝ 2-3: Նրան անհասանելի էին «Երկիր Մեդիան» եւ «Կենտրոնը», որոնք ընտրարշավի ժամանակաշրջանում ներկայացնում էին առավել ամբողջական եւ բազմազան քաղաքական տեղեկատվություն: ՀՀ ամբողջ տարածքում կամ նրա մեծ մասում հեռարձակվող Հ1-ը, Հ2-ը, «Արմենիան» եւ «ԱԼՄ»-ն ակտիվությամբ զիջում էին «քաղաքական եթերի» երկու առաջատարներին, իսկ տեղական հեռուստաընկերությունները, սահմանափակ ռեսուրսների պատճառով, չէին կարող իրենց լսարանների համար փոխարինել երեւանյաններին: Բացի այդ,

ինչպես նշվեց, նրանց մեծ մասը հրաժարվեց քաղաքական գովազդից: Տարածաշրջանների բնակչության տեղեկատվական պահանջի անտեսումը հեռարձակման բնագավառում վերջին տարիներին իրականացվող քաղաքականության եւս մի հետեւանք է: Դրա արմատական վերանայումը ժողովրդավարական բարեփոխումների, մասնավորապես՝ Հայաստանում ազատ ընտրություններ անցկացնելու կարելուագույն պայմաններից մեկն է:


Իններորդ՝ ընտրությունների ժամանակաշրջանում ընդդիմադիր կուսակցությունների համար ավելի մատչելի դառնալով՝ հեռուստաալիքները, այսուհանդերձ, ավելի բաց չդարձան «բացասական տեղեկատվության», այսինքն՝ երկրի կյանքի խնդրահարույց կողմերը արտացոլող փաստերի համար: Հեռարձակվող ՁԼՄ-ների մեծամասնության կողմնորոշումը դեպի հաջողությունների եւ նվաճումների լուսաբանումը, թերությունների եւ ընդհանուր պատկերը «փչացնող» իրադարձությունների մասին լռելը, դրսեւորվեցին նաեւ դիտարկումն անցկացնելու ամիսների ընթացքում (*տես՝ նաեւ «ՀՀ Ազգային ժողովի 2007 թվականի ընտրությունների ժամանակաշրջանում արձանագրված խախտումների՝ Հայաստանի հեռուստառադիոընկերությունների լրատվական ծրագրերում լուսաբանման վերաբերյալ» տեղեկանքը*): Հետագոտված լրատվական թողարկումներում տեղական եւ միջազգային դիտորդների, քաղաքական կուսակցությունների հաղորդագրությունները ընտրությունների ընթացքում արձանագրված խախտումների մասին հաճախ անտեսվում էին, իսկ եթե անգամ հաղորդվում էր, ապա, որպես կանոն, պաշտոնական մարմինների մեկնաբանություններով:

Տասներորդ՝ տպագիր ՁԼՄ-ները Հայաստանի քաղաքական կյանքում ավելի քիչ նշանակություն ունեցող գործոն են մնում, քան հեռարձակվողները: Օգտվելով էականորեն ավելի լայն ազատությունից եւ աչքի ընկնելով քաղաքական բազմազանությանը, նրանք ընտրական գործընթացների վրա հեռուստատեսությանը համարժեք ազդեցություն չեն գործում: Հասարակական-քաղաքական թերթերի տպաքանակները ծայրահեղ փոքր են, տպագիր պարբերականները կանոնավոր հասցվում են միայն քաղաքներ: Քաղաքական ուժերը ընտրությունների ժամանակաշրջանում ավելի քիչ հետաքրքրություն են դրսեւորում թերթերի նկատմամբ: Տպագիր լրատվամիջոցների խնդիրները կարող են ունենալ միայն համալիր լուծում, որը անմիջականորեն չի կապվում ընտրական գործընթացին:

**ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ ԵՎ ԳՐԱՖԻԿՆԵՐ
ՓԵՏՐՎԱՐ - ՄԱՐՏ 2007**

Փետրվարի 1 - մարտի 31, 2007թ.

ՀՀ ԱԺ ընտրություններին մասնակցած կուսակցություններին/դաշինքին հատկացված էթերաժամանակը հետազոտված 7 հեռուստաալիքներում՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք (Հ1), Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2), «ԱԼՄ», «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շանթ»



1. Ազգային ժողովրդավարական կուսակցություն
2. Ազգային համաձայնություն կուսակցություն
3. «Ազգային միաբանություն» կուսակցություն
4. «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն
5. «Դաշինք» կուսակցություն
6. «Ժառանգություն» կուսակցություն
7. Ժողովրդական կուսակցություն
8. «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն
9. «Իմպիչմենտ» դաշինք *
10. «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն
11. Հայաստանի դեմոկրատական կուսակցություն
12. Հայաստանի երիտասարդական կուսակցություն *

13. Հայաստանի ժողովրդական կուսակցություն
14. Հայաստանի կոմունիստական կուսակցություն
15. Հայաստանի հանրապետական կուսակցություն
16. Հայաստանի մարքսիստական կուսակցություն
17. «Հանրապետություն» կուսակցություն
18. Միավորված աշխատանքային կուսակցություն
19. Միացյալ ազատական ազգային կուսակցություն *
20. «Նոր ժամանակներ» կուսակցություն
21. Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն
22. «Զրիստոնեսա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն *
23. «Օրինաց երկիր» կուսակցություն

* Տվյալ կուսակցությունները/դաշինքը չեն դիտարկվել 2007թ. փետրվարին:

Փետրվարի 1 - մարտի 31, 2007թ.

Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքում (Հ1)

կուսակցություններին/դաշինքին հատկացված հիշատակումների քանակը, եթերաժամանակը, քաղաքական գովազդը

| | Կուսակցություն/դաշինք | Կուսակցության/դաշինքի հիշատակումների քանակը (միավոր) | Կուսակցության/դաշինքի հեռուստայությունների քանակը (միավոր) | Հեռուստայությունում կուսակցությանը/դաշինքին հատկացված եթերաժամանակը (վրկ) | Կուսակցության/դաշինքի վերաբերյալ գովազդային հոլովակներ/հայտարարություններ/այլուր (միավոր) | Կուսակցության/դաշինքի վերաբերյալ գովազդային հոլովակների/հայտարարությունների/այլուրի ծավալը (վրկ) |
|-----|--|--|--|---|---|--|
| 1. | Հայաստանի հանրապետական կուսակցություն | 27 | 87 | 11749,5 | 0 | 0 |
| 2. | «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն | 36 | 46 | 5920,1 | 0 | 0 |
| 3. | «Ազգային միաբանություն» կուսակցություն | 10 | 27 | 5098,51 | 0 | 0 |
| 4. | «Օրինաց երկիր» կուսակցություն | 11 | 32 | 4778,26 | 0 | 0 |
| 5. | Հայաստանի ժողովրդական կուսակցություն | 27 | 39 | 4143,21 | 0 | 0 |
| 6. | Հայաստանի մարքսիստական կուսակցություն | 17 | 26 | 3057,95 | 0 | 0 |
| 7. | Միավորված աշխատանքային կուսակցություն | 8 | 17 | 2754,5 | 0 | 0 |
| 8. | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն | 10 | 12 | 2170,85 | 0 | 0 |
| 9. | «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն | 13 | 21 | 1991,6 | 0 | 0 |
| 10. | Ազգային ժողովրդավարական կուսակցություն | 9 | 10 | 1922,5 | 0 | 0 |
| 11. | Ժողովրդական կուսակցություն | 10 | 4 | 1710 | 0 | 0 |
| 12. | «Իմպիչմենտ» դաշինք ** | 2 | 17 | 1286,66 | 0 | 0 |
| 13. | «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն | 16 | 21 | 914,85 | 0 | 0 |
| 14. | «Հայոց համազգային շարժում» կուսակցություն | 6 | 9 | 484,86 | 0 | 0 |
| 15. | Հայաստանի ազատական առաջադիմական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)* | 5 | 3 | 127,1 | 0 | 0 |
| 16. | «Ժառանգություն» կուսակցություն | 7 | 5 | 109,75 | 0 | 0 |
| 17. | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն | 3 | 3 | 73,25 | 0 | 0 |
| 18. | «Հայոց հայրենիք» կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** | 4 | 1 | 70,1 | 0 | 0 |
| 19. | «Հանրապետություն» կուսակցություն | 6 | 5 | 68,71 | 0 | 0 |
| 20. | «Դաշինք» կուսակցություն | 6 | 5 | 54 | 0 | 0 |
| 21. | Ազգային համաձայնություն կուսակցություն | 4 | 1 | 53 | 0 | 0 |
| 22. | «Նոր ժամանակներ» կուսակցություն | 4 | 3 | 46,5 | 0 | 0 |
| 23. | Հայաստանի կոմունիստական կուսակցություն | 2 | 3 | 39,75 | 0 | 0 |
| 24. | Հայաստանի առաջադիմական կուսակցություն | 5 | 2 | 13 | 0 | 0 |
| 25. | Հայաստանի առաջադիմական միացյալ կոմունիստական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** | 3 | 1 | 3 | 0 | 0 |
| 26. | Հայաստանի երիտասարդական կուսակցություն** | 5 | 0 | 0 | 0 | 0 |
| 27. | Միացյալ ազատական ազգային կուսակցություն ** | 5 | 0 | 0 | 0 | 0 |
| 28. | «Զրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն ** | 4 | 0 | 0 | 0 | 0 |
| | Ընդամենը | 265 | 400 | 48641,51 | 0 | 0 |

* Տվյալ կուսակցությունները նշված ժամկետում (մինչև մարտի 28-ը) ԿՀՀ-ը չեն ներկայացրել հաշվառման փաստաթղթերը, այդ պատճառով դրանց լուսաբանումը մոնիտորինգի է ենթարկվել մինչև մարտի 27-ը ներառյալ:

** Տվյալ կուսակցությունները/դաշինքը չեն դիտարկվել 2007թ. փետրվարին:

**Փետրվարի 1 - մարտի 31, 2007թ.
Հայկական երկրորդ հեռուստալիցում (Հ2)**

կուսակցություններին/դաշինքին հատկացված հիշատակումների քանակը, եթերաժամանակը, քաղաքական գովազդը

| | Կուսակցություն/դաշինք | Կուսակցության/դաշինքի հիշատակումների քանակը (միավոր) | Կուսակցության/դաշինքի հեռուստալիցի քանակը (միավոր) | Հեռուստալիցում կուսակցությանը/դաշինքին հատկացված եթերաժամանակը (վրկ) | Կուսակցության/դաշինքի վերաբերյալ գովազդային հոլովակներ/հայտարարություններ/լյուբեր (միավոր) | Կուսակցության/դաշինքի վերաբերյալ գովազդային հոլովակների/հայտարարությունների/լյուբերի ծավալը (վրկ) |
|-----|--|--|--|--|--|---|
| 1. | Հայաստանի հանրապետական կուսակցություն | 71 | 120 | 17295,5 | 0 | 0 |
| 2. | «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն | 31 | 31 | 8401 | 0 | 0 |
| 3. | «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն | 39 | 56 | 5673,5 | 0 | 0 |
| 4. | Հայաստանի ժողովրդական կուսակցություն | 40 | 34 | 3338,5 | 0 | 0 |
| 5. | «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն | 13 | 15 | 3109 | 0 | 0 |
| 6. | Ազգային ժողովրդավարական կուսակցություն | 7 | 17 | 2385 | 0 | 0 |
| 7. | «Օրինաց երկիր» կուսակցություն | 26 | 21 | 1536 | 0 | 0 |
| 8. | «Ազգային միաբանություն» կուսակցություն | 16 | 12 | 1203 | 0 | 0 |
| 9. | Ազգային համաձայնություն կուսակցություն | 4 | 6 | 946 | 0 | 0 |
| 10. | Միացյալ ազատական ազգային կուսակցություն ** | 4 | 2 | 786 | 0 | 0 |
| 11. | Ժողովրդական կուսակցություն | 13 | 8 | 758 | 0 | 0 |
| 12. | Հայաստանի կոմունիստական կուսակցություն | 5 | 4 | 617 | 0 | 0 |
| 13. | Միավորված աշխատանքային կուսակցություն | 15 | 12 | 439 | 0 | 0 |
| 14. | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն | 14 | 13 | 412 | 0 | 0 |
| 15. | «Դաշինք» կուսակցություն | 6 | 8 | 401,5 | 0 | 0 |
| 16. | Հայաստանի մարքսիստական կուսակցություն | 8 | 5 | 326 | 0 | 0 |
| 17. | Հայաստանի առաջադիմական կուսակցություն | 4 | 3 | 207 | 0 | 0 |
| 18. | «Հանրապետություն» կուսակցություն | 8 | 5 | 147 | 0 | 0 |
| 19. | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն | 7 | 3 | 147 | 0 | 0 |
| 20. | «Հայոց համազգային շարժում» կուսակցություն | 4 | 2 | 56 | 0 | 0 |
| 21. | «Ժառանգություն» կուսակցություն | 17 | 2 | 12 | 0 | 0 |
| 22. | Հայաստանի ազատական առաջադիմական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)* | 3 | 0 | 0 | 0 | 0 |
| 23. | «Նոր ժամանակներ» կուսակցություն | 10 | 0 | 0 | 0 | 0 |
| 24. | «Հայոց հայրենիք» կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| 25. | «Իմպիչմենտ» դաշինք** | 6 | 0 | 0 | 0 | 0 |
| 26. | Հայաստանի առաջադիմական միացյալ կոմունիստական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| 27. | Հայաստանի երիտասարդական կուսակցություն ** | 7 | 0 | 0 | 0 | 0 |
| 28. | «Զրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն ** | 4 | 0 | 0 | 0 | 0 |
| | Ընդամենը | 386 | 379 | 48196 | 0 | 0 |

* Տվյալ կուսակցությունները նշված ժամկետում (մինչև մարտի 28-ը) ԿՀՀ-ը չեն ներկայացրել հաշվառման փաստաթղթերը, այդ պատճառով դրանց լուսաբանումը մոնիտորինգի է ենթարկվել մինչև մարտի 27-ը ներառյալ:

** Տվյալ կուսակցությունները/դաշինքը չեն դիտարկվել 2007թ. փետրվարին:

Փետրվարի 1 - մարտի 31, 2007թ.

«ԱԼՄ»

հեռուստալիքում կուսակցություններին/դաշինքին հատկացված հիշատակումների քանակը, եթերաժամանակը, քաղաքական գովազդը

| | Կուսակցություն/դաշինք | Կուսակցության/դաշինքի հիշատակումների քանակը (միավոր) | Կուսակցության/դաշինքի հեռուստալիքների քանակը (միավոր) | Հեռուստալիքում կուսակցությանը/դաշինքին հատկացված եթերաժամանակը (վրկ) | Կուսակցության/դաշինքի վերաբերյալ գովազդային հոլովակներ/հայտարարություններ/լյուբեր (միավոր) | Կուսակցության/դաշինքի վերաբերյալ գովազդային հոլովակների/հայտարարությունների/լյուբերի ծավալը (վրկ) |
|-----|--|--|---|--|--|---|
| 1. | Ժողովրդական կուսակցություն | 20 | 55 | 151123,2 | 128 | 23022 |
| 2. | Հայաստանի հանրապետական կուսակցություն | 27 | 65 | 7921,2 | 0 | 0 |
| 3. | Հայաստանի երիտասարդական կուսակցություն ** | 11 | 6 | 7386 | 0 | 0 |
| 4. | «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն | 18 | 18 | 7114 | 0 | 0 |
| 5. | «Օրինաց երկիր» կուսակցություն | 15 | 32 | 5947 | 0 | 0 |
| 6. | «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն | 13 | 7 | 2560 | 0 | 0 |
| 7. | «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն | 21 | 28 | 1203,2 | 0 | 0 |
| 8. | Հայաստանի ժողովրդական կուսակցություն | 19 | 20 | 956 | 0 | 0 |
| 9. | Հայաստանի կոմունիստական կուսակցություն | 11 | 5 | 566 | 0 | 0 |
| 10. | «Ազգային միաբանություն» կուսակցություն | 19 | 11 | 550 | 0 | 0 |
| 11. | «Հայոց համազգային շարժում» կուսակցություն | 18 | 7 | 484,5 | 0 | 0 |
| 12. | Ազգային ժողովրդավարական կուսակցություն | 13 | 6 | 475 | 0 | 0 |
| 13. | Միավորված աշխատանքային կուսակցություն | 19 | 11 | 391,2 | 17 | 29840 |
| 14. | «Իմպիչմենտ» դաշինք ** | 10 | 8 | 320 | 0 | 0 |
| 15. | «Դաշինք» կուսակցություն | 9 | 5 | 295,2 | 0 | 0 |
| 16. | Հայաստանի մարքսիստական կուսակցություն | 9 | 1 | 214 | 0 | 0 |
| 17. | «Հանրապետություն» կուսակցություն | 13 | 6 | 154 | 0 | 0 |
| 18. | «Նոր ժամանակներ» կուսակցություն | 10 | 4 | 89 | 0 | 0 |
| 19. | «Ժառանգություն» կուսակցություն | 15 | 2 | 64 | 0 | 0 |
| 20. | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն | 15 | 3 | 35 | 0 | 0 |
| 21. | Ազգային համաձայնություն կուսակցություն | 9 | 0 | 0 | 0 | 0 |
| 22. | Հայաստանի ազատական առաջադիմական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)* | 7 | 0 | 0 | 0 | 0 |
| 23. | Հայաստանի առաջադիմական կուսակցություն | 9 | 0 | 0 | 0 | 0 |
| 24. | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն | 11 | 0 | 0 | 0 | 0 |
| 25. | «Հայոց հայրենիք» կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** | 7 | 0 | 0 | 0 | 0 |
| 26. | Հայաստանի առաջադիմական միացյալ կոմունիստական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** | 7 | 0 | 0 | 0 | 0 |
| 27. | Միացյալ ազատական ազգային կուսակցություն ** | 9 | 0 | 0 | 0 | 0 |
| 28. | «Զրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն ** | 9 | 0 | 0 | 0 | 0 |
| | Ընդամենը | 373 | 300 | 187848,5 | 145 | 52862 |

* Տվյալ կուսակցությունները նշված ժամկետում (մինչև մարտի 28-ը) ԿԸՀ-ը չեն ներկայացրել հաշվառման փաստաթղթերը, այդ պատճառով դրանց լուսաբանումը մոնիտորինգի է ենթարկվել մինչև մարտի 27-ը ներառյալ:

** Տվյալ կուսակցությունները/դաշինքը չեն դիտարկվել 2007թ. փետրվարին:

Փետրվարի 1 - մարտի 31, 2007թ.

«Արմենիա»

հեռուստալիքում կուսակցություններին/դաշինքին հատկացված հիշատակումների քանակը, եթերաժամանակը, քաղաքական գովազդը

| | Կուսակցություն/դաշինք | Կուսակցության/դաշինքի հիշատակումների քանակը (միավոր) | Կուսակցության/դաշինքի հեռուստալիքների քանակը (միավոր) | Հեռուստալիքում կուսակցությանը/դաշինքին հատկացված եթերաժամանակը (վրկ) | Կուսակցության/դաշինքի վերաբերյալ գովազդային հոլովակներ/հայտարարություններ/լյուբեր (միավոր) | Կուսակցության/դաշինքի վերաբերյալ գովազդային հոլովակների/հայտարարությունների/լյուբերի ծավալը (վրկ) |
|-----|---|--|---|--|--|---|
| 1. | Հայաստանի հանրապետական կուսակցություն | 64 | 86 | 6127 | 0 | 0 |
| 2. | «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն | 20 | 29 | 1528 | 0 | 0 |
| 3. | Հայաստանի ժողովրդական կուսակցություն | 16 | 22 | 1401 | 0 | 0 |
| 4. | Ազգային ժողովրդավարական կուսակցություն | 5 | 9 | 915 | 0 | 0 |
| 5. | «Օրինաց երկիր» կուսակցություն | 4 | 13 | 786,5 | 0 | 0 |
| 6. | «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն | 7 | 9 | 481 | 0 | 0 |
| 7. | «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն | 11 | 9 | 479 | 0 | 0 |
| 8. | «Հայոց համազգային շարժում» կուսակցություն | 4 | 10 | 450 | 0 | 0 |
| 9. | «Ազգային միաբանություն» կուսակցություն | 4 | 7 | 339 | 0 | 0 |
| 10. | «Դաշինք» կուսակցություն | 1 | 3 | 232 | 0 | 0 |
| 11. | Հայաստանի ազատական առաջադիմական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)* | 1 | 5 | 209 | 0 | 0 |
| 12. | Միավորված աշխատանքային կուսակցություն | 11 | 7 | 170,5 | 0 | 0 |
| 13. | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն | 3 | 2 | 101 | 0 | 0 |
| 14. | Հայաստանի մարքսիստական կուսակցություն | 1 | 1 | 40 | 0 | 0 |
| 15. | Հայաստանի առաջադիմական միացյալ կոմունիստական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** | 0 | 2 | 40 | 0 | 0 |
| 16. | «Հանրապետություն» կուսակցություն | 1 | 4 | 29 | 0 | 0 |
| 17. | «Նոր ժամանակներ» կուսակցություն | 2 | 2 | 26 | 0 | 0 |
| 18. | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն | 2 | 2 | 22 | 0 | 0 |
| 19. | Հայաստանի կոմունիստական կուսակցություն | 3 | 1 | 21 | 0 | 0 |
| 20. | «Իմպիչմենտ» դաշինք** | 0 | 2 | 16 | 0 | 0 |
| 21. | «Ժառանգություն» կուսակցություն | 7 | 2 | 8 | 0 | 0 |
| 22. | Ազգային համաձայնություն կուսակցություն | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| 23. | Ժողովրդական կուսակցություն | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| 24. | Հայաստանի առաջադիմական կուսակցություն | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| 25. | «Հայոց հայրենիք» կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 26. | Հայաստանի երիտասարդական կուսակցություն** | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| 27. | Միացյալ ազատական ազգային կուսակցություն** | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| 28. | «Զրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն** | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Ընդամենը | 174 | 227 | 13421 | 0 | 0 |

* Տվյալ կուսակցությունները նշված ժամկետում (մինչև մարտի 28-ը) ԿԸՀ-ը չեն ներկայացրել հաշվառման փաստաթղթերը, այդ պատճառով դրանց լուսաբանումը մոնիտորինգի է ենթարկվել մինչև մարտի 27-ը ներառյալ:

** Տվյալ կուսակցությունները/դաշինքը չեն դիտարկվել 2007թ. փետրվարին:

Փետրվարի 1 - մարտի 31, 2007թ.

«Երկիր Մեդիա»

հեռուստալիքում կուսակցություններին/դաշինքին հատկացված հիշատակումների քանակը, եթերաժամանակը, քաղաքական գովազդը

| | Կուսակցություն/դաշինք | Կուսակցության/դաշինքի հիշատակումների քանակը (միավոր) | Կուսակցության/դաշինքի հեռուստալիքների քանակը (միավոր) | Հեռուստալիքում կուսակցությանը/դաշինքին հատկացված եթերաժամանակը (վրկ) | Կուսակցության/դաշինքի վերաբերյալ գովազդային հոլովակներ/հայտարարություններ/լյուբեր (միավոր) | Կուսակցության/դաշինքի վերաբերյալ գովազդային հոլովակների/հայտարարությունների/լյուբերի ծավալը (վրկ) |
|-----|--|--|---|--|--|---|
| 1. | «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն | 139 | 174 | 26110,225 | 0 | 0 |
| 2. | «Հայոց համազգային շարժում» կուսակցություն | 23 | 25 | 7949,625 | 0 | 0 |
| 3. | Հայաստանի հանրապետական կուսակցություն | 98 | 106 | 6444,375 | 0 | 0 |
| 4. | Ազգային ժողովրդավարական կուսակցություն | 11 | 15 | 5351 | 0 | 0 |
| 5. | «Ժառանգություն» կուսակցություն | 22 | 10 | 4973 | 0 | 0 |
| 6. | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն | 34 | 17 | 3319,5 | 0 | 0 |
| 7. | «Իմպիչմենտ» դաշինք ** | 16 | 6 | 2886 | 0 | 0 |
| 8. | Միացյալ ազատական ազգային կուսակցություն ** | 10 | 2 | 2622 | 0 | 0 |
| 9. | «Դաշինք» կուսակցություն | 22 | 21 | 2469 | 3 | 14593 |
| 10. | «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն | 56 | 41 | 2124,5 | 0 | 0 |
| 11. | Հայաստանի ժողովրդական կուսակցություն | 33 | 38 | 1974 | 0 | 0 |
| 12. | «Օրինաց երկիր» կուսակցություն | 37 | 37 | 1892 | 0 | 0 |
| 13. | «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն | 36 | 10 | 1823 | 0 | 0 |
| 14. | Միավորված աշխատանքային կուսակցություն | 26 | 19 | 1680,375 | 0 | 0 |
| 15. | Հայաստանի ազատական առաջադիմական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)* | 14 | 11 | 1589 | 0 | 0 |
| 16. | «Ազգային միաբանություն» կուսակցություն | 58 | 20 | 868,5 | 0 | 0 |
| 17. | «Նոր ժամանակներ» կուսակցություն | 25 | 9 | 729,5 | 0 | 0 |
| 18. | «Հանրապետություն» կուսակցություն | 28 | 10 | 679 | 0 | 0 |
| 19. | Ազգային համաձայնություն կուսակցություն | 10 | 3 | 165 | 0 | 0 |
| 20. | Ժողովրդական կուսակցություն | 24 | 5 | 116 | 0 | 0 |
| 21. | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն | 13 | 3 | 44,6 | 0 | 0 |
| 22. | Հայաստանի առաջադիմական կուսակցություն | 16 | 0 | 0 | 0 | 0 |
| 23. | Հայաստանի կոմունիստական կուսակցություն | 12 | 0 | 0 | 0 | 0 |
| 24. | Հայաստանի մարքսիստական կուսակցություն | 14 | 0 | 0 | 0 | 0 |
| 25. | «Հայոց հայրենիք» կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** | 9 | 0 | 0 | 0 | 0 |
| 26. | Հայաստանի առաջադիմական միացյալ կոմունիստական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** | 6 | 0 | 0 | 0 | 0 |
| 27. | Հայաստանի երիտասարդական կուսակցություն ** | 18 | 0 | 0 | 0 | 0 |
| 28. | «Զրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն ** | 7 | 0 | 0 | 0 | 0 |
| | Ընդամենը | 817 | 582 | 75810,2 | 3 | 14593 |

* Տվյալ կուսակցությունները նշված ժամկետում (մինչև մարտի 28-ը) ԿԸՀ-ը չեն ներկայացրել հաշվառման փաստաթղթերը, այդ պատճառով դրանց լուսաբանումը մոնիտորինգի է ենթարկվել մինչև մարտի 27-ը ներառյալ:

** Տվյալ կուսակցությունները/դաշինքը չեն դիտարկվել 2007թ. փետրվարին:

Փետրվարի 1 - մարտի 31, 2007թ.

«Կենտրոն»

հեռուստաալիքում կուսակցություններին/դաշինքին հատկացված հիշատակումների քանակը, եթերաժամանակը, քաղաքական գովազդը

| | Կուսակցություն/դաշինք | Կուսակցության/դաշինքի հիշատակումների քանակը (միավոր) | Կուսակցության/դաշինքի հեռուստաալիքների քանակը (միավոր) | Հեռուստաալիքում կուսակցությանը/դաշինքին հատկացված եթերաժամանակը (վրկ) | Կուսակցության/դաշինքի վերաբերյալ գովազդային հոլովակներ/հայտարարություններ/այլույթեր (միավոր) | Կուսակցության/դաշինքի վերաբերյալ գովազդային հոլովակների/հայտարարությունների/այլույթերի ծավալը (վրկ) |
|-----|---|--|--|---|--|---|
| 1. | «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն | 24 | 120 | 48705 | 6 | 210 |
| 2. | Հայաստանի հանրապետական կուսակցություն | 143 | 119 | 21826 | 0 | 0 |
| 3. | «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն | 121 | 75 | 13746 | 0 | 0 |
| 4. | Հայաստանի ժողովրդական կուսակցություն | 116 | 77 | 12611 | 0 | 0 |
| 5. | «Օրինաց երկիր» կուսակցություն | 58 | 81 | 8795 | 0 | 0 |
| 6. | «Հայոց համազգային շարժում» կուսակցություն | 36 | 32 | 6443 | 0 | 0 |
| 7. | «Ազգային միաբանություն» կուսակցություն | 110 | 57 | 4412 | 0 | 0 |
| 8. | «Դաշինք» կուսակցություն | 17 | 30 | 4293 | 0 | 0 |
| 9. | Հայաստանի առաջադիմական կուսակցություն | 5 | 12 | 3981 | 0 | 0 |
| 10. | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն | 23 | 18 | 3910 | 0 | 0 |
| 11. | Հայաստանի ազատական առաջադիմական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)* | 8 | 16 | 3095 | 0 | 0 |
| 12. | «Ժառանգություն» կուսակցություն | 19 | 21 | 2687 | 0 | 0 |
| 13. | Միացյալ ազատական ազգային կուսակցություն ** | 0 | 2 | 1827 | 0 | 0 |
| 14. | «Հանրապետություն» կուսակցություն | 24 | 30 | 1644 | 0 | 0 |
| 15. | Ազգային ժողովրդավարական կուսակցություն | 71 | 12 | 1540 | 0 | 0 |
| 16. | Ազգային համաձայնություն կուսակցություն | 2 | 3 | 1348 | 0 | 0 |
| 17. | «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն | 19 | 30 | 1279 | 0 | 0 |
| 18. | Հայաստանի կոմունիստական կուսակցություն | 12 | 14 | 1221 | 0 | 0 |
| 19. | Միավորված աշխատանքային կուսակցություն | 26 | 35 | 1219 | 0 | 0 |
| 20. | Ժողովրդական կուսակցություն | 10 | 16 | 651 | 0 | 0 |
| 21. | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն | 4 | 7 | 612 | 0 | 0 |
| 22. | «Նոր ժամանակներ» կուսակցություն | 13 | 19 | 541 | 0 | 0 |
| 23. | Հայաստանի մարքսիստական կուսակցություն | 6 | 6 | 236 | 0 | 0 |
| 24. | Հայաստանի երիտասարդական կուսակցություն ** | 5 | 4 | 161 | 0 | 0 |
| 25. | «Իմպիչմենտ» դաշինք ** | 10 | 7 | 149 | 0 | 0 |
| 26. | «Հայոց հայրենիք» կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** | 4 | 1 | 11 | 0 | 0 |
| 27. | Հայաստանի առաջադիմական միացյալ կոմունիստական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| 28. | «Զրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն ** | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Ընդամենը | 887 | 844 | 146943 | 6 | 210 |

* Տվյալ կուսակցությունները նշված ժամկետում (մինչև մարտի 28-ը) ԿԸՀ-ը չեն ներկայացրել հաշվառման փաստաթղթերը, այդ պատճառով դրանց լուսաբանումը մոնիտորինգի է ենթարկվել մինչև մարտի 27-ը ներառյալ:

** Տվյալ կուսակցությունները/դաշինքը չեն դիտարկվել 2007թ. փետրվարին:

Փետրվարի 1 - մարտի 31, 2007թ.

«Շանթ»

հեռուստալիքում կուսակցություններին/դաշինքին հատկացված հիշատակումների քանակը, եթերաժամանակը, քաղաքական գովազդը

| | Կուսակցություն/դաշինք | Կուսակցության/դաշինքի հիշատակումների քանակը (միավոր) | Կուսակցության/դաշինքի հեռուստալիքների քանակը (միավոր) | Հեռուստալիքներում կուսակցությանը/դաշինքին հատկացված եթերաժամանակը (վրկ) | Կուսակցության/դաշինքի վերաբերյալ գովազդային հոլովակներ/հայտարարություններ/լյուբեր (միավոր) | Կուսակցության/դաշինքի վերաբերյալ գովազդային հոլովակների/հայտարարությունների/լյուբերի ծավալը (վրկ) |
|-----|---|--|---|---|--|---|
| 1. | Հայաստանի հանրապետական կուսակցություն | 46 | 73 | 7275,2 | 0 | 0 |
| 2. | «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն | 42 | 49 | 7253,1 | 0 | 0 |
| 3. | «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն | 4 | 12 | 1940,5 | 0 | 0 |
| 4. | «Ազգային միաբանություն» կուսակցություն | 14 | 9 | 1873 | 0 | 0 |
| 5. | «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն | 13 | 13 | 1767 | 0 | 0 |
| 6. | «Նոր ժամանակներ» կուսակցություն | 3 | 1 | 1650 | 0 | 0 |
| 7. | «Հայոց համազգային շարժում» կուսակցություն | 8 | 11 | 1291,5 | 0 | 0 |
| 8. | Հայաստանի ժողովրդական կուսակցություն | 15 | 14 | 680,6 | 0 | 0 |
| 9. | «Օրինաց երկիր» կուսակցություն | 13 | 12 | 661,6 | 0 | 0 |
| 10. | Ժողովրդական կուսակցություն | 4 | 3 | 454 | 0 | 0 |
| 11. | Հայաստանի կոմունիստական կուսակցություն | 2 | 4 | 425 | 0 | 0 |
| 12. | «Դաշինք» կուսակցություն | 1 | 5 | 354 | 0 | 0 |
| 13. | Հայաստանի ազատական առաջադիմական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)* | 7 | 7 | 353 | 0 | 0 |
| 14. | Ազգային ժողովրդավարական կուսակցություն | 3 | 8 | 311 | 0 | 0 |
| 15. | Միավորված աշխատանքային կուսակցություն | 10 | 8 | 204 | 0 | 0 |
| 16. | Հայաստանի մարքսիստական կուսակցություն | 3 | 3 | 175 | 0 | 0 |
| 17. | «Իմպիչմենտ» դաշինք** | 4 | 6 | 111 | 0 | 0 |
| 18. | Հայաստանի դեմոկրատական կուսակցություն | 6 | 2 | 64 | 0 | 0 |
| 19. | Հայաստանի առաջադիմական միացյալ կոմունիստական կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** | 1 | 2 | 50 | 0 | 0 |
| 20. | «Ժառանգություն» կուսակցություն | 6 | 2 | 44 | 0 | 0 |
| 21. | Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն | 0 | 1 | 35 | 0 | 0 |
| 22. | Ազգային համաձայնություն կուսակցություն | 0 | 2 | 32 | 0 | 0 |
| 23. | «Հանրապետություն» կուսակցություն | 0 | 1 | 10 | 0 | 0 |
| 24. | Հայաստանի առաջադիմական կուսակցություն | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 25. | «Հայոց հայրենիք» կուսակցություն (մինչև մարտի 27-ը ներառյալ)*, ** | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 26. | Հայաստանի երիտասարդական կուսակցություն** | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 27. | Միացյալ ազատական ազգային կուսակցություն** | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 28. | «Զրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն** | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Ընդամենը | 205 | 248 | 27014,5 | 0 | 0 |

* Տվյալ կուսակցությունները նշված ժամկետում (մինչև մարտի 28-ը) ԿԸՀ-ը չեն ներկայացրել հաշվառման փաստաթղթերը, այդ պատճառով դրանց լուսաբանումը մոնիտորինգի է ենթարկվել մինչև մարտի 27-ը ներառյալ:

** Տվյալ կուսակցությունները/դաշինքը չեն դիտարկվել 2007թ. փետրվարին:

Կուսակցություններ/դաշինք, որոնց ներկայացուցիչները հրավիրվել են հետազոտված 7 հեռուստաալիքներում մասնակցելու բանավիճային հաղորդումների

| Կուսակցություն/դաշինք | Փետրվար 2007 | | | | | | | | Մարտ 2007 | | | | | | | | Ընդամենը 2 ամսվա ընթացքում |
|---|------------------|------------------------------------|----------|----------|----------|-----------|-------------|-----------|------------------|------------------------------------|----------|-----------|----------|-----------|-------------|-----------|----------------------------|
| | Առաջին ալիք (Հ1) | Գայակված երկրորդ հեռուստաալիք (Հ2) | Արմենիա | ԱՄՍ | Շանթ | Կենտրոն | Երկիր Մեդիա | Ընդամենը | Առաջին ալիք (Հ1) | Գայակված երկրորդ հեռուստաալիք (Հ2) | Արմենիա | ԱՄՍ | Շանթ | Կենտրոն | Երկիր Մեդիա | Ընդամենը | |
| «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն | 1 | 1 | 0 | 0 | 3 | 7 | 3 | 15 | 1 | 1 | 0 | 0 | 1 | 3 | 6 | 12 | 27 |
| Հայաստանի հանրապետական կուսակցություն | 2 | 1 | 1 | 0 | 0 | 3 | 3 | 10 | 2 | 1 | 0 | 1 | 2 | 7 | 2 | 15 | 25 |
| Ժողովրդական կուսակցություն | 0 | 0 | 0 | 7 | 0 | 0 | 0 | 7 | 1 | 0 | 0 | 9 | 0 | 0 | 0 | 10 | 17 |
| «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 3 | 0 | 3 | 0 | 2 | 0 | 1 | 0 | 6 | 0 | 9 | 12 |
| «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն | 1 | 0 | 0 | 0 | 0 | 2 | 0 | 3 | 0 | 1 | 0 | 1 | 1 | 1 | 3 | 7 | 10 |
| «Հայոց համազգային շարժում» կուսակցություն | 0 | 0 | 0 | 0 | 1 | 3 | 1 | 5 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 2 | 3 | 8 |
| Հայաստանի ժողովրդական կուսակցություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2 | 0 | 2 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 4 | 0 | 6 | 8 |
| Ազգային ժողովրդավարական կուսակցություն | 0 | 1 | 0 | 0 | 0 | 2 | 0 | 3 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 3 | 4 | 7 |
